



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

ՅԱՂԱԳՍ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱԻԱՏՈՅ



ԽՈՐՀՐԴԱՄՈՒԹԻՒՆՔ

յադագս

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

Ի ցոյց

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ

ձՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ.

Շարագրեաց

ՅՈՎԱՍԷՓ ՏՐՈԶ

Կանառորդ ձեմարանին Փարիզու.

Թարգմանեաց ի մերս


Հ. ԳԱՆՐԻԷԼ, Վ. ԱՅՎԱԶՈՎՍԻԻ



Ի ՓԱՐԻԶ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԻԼԻԷՄԻ ՌԷՄԲԷ.

1854



28
S-93

1/800

A

20075

$\frac{T}{809}$

f. Miller





ՏՐՈՋԻ ՎԱՐՈՒՅԸ ՎՐԱՅ .

Այս դարուս սակաւագիւտ անձանց մէկն էր Յովսէփ Տրոզ, Փաղղիոյ Պրզանսոն քաղաքը ծնած 1773ին: Երիտասարդութեան ատենը զինուորական ծառայութեան մէջ մտնելով սպայ եղեր էր, բայց երեք տարիէն տեսնելով որ այն վիճակը իր մտածութեանցն ու ախորժակին յարմար չէ, Փարիզ քաշուեցաւ, եւ բարոյական ու փիլիսոփայական մատենագրութեանց ետեւէ եղաւ: Իր բազմաբիւրնտիր եւ օգտակար գրուածքներովը Փաղղիոյ ձեմարանին պիտանի անձանց մէկն եղեր էր. բարոյականը անուշ, քաղաքական գիտութիւնը խորունկ, պատմութեանց վրայ բրած դատմունքը ճիշդ եւ անաչառ, եւ որ մեծն է՝ ուրիշներու համար գրած խրատները իր բարի օրինակովը հաստատող իմաստասէր:

Գրուածոցը մէջ շատ անուանի են « Արուեստ երջանկաւեա կենաց » բուածը, « Քաղաքական Տնտեսութիւն » եւ « Լուղովիկոսի վեշտասաներօրդի բա-

գաւորութեան պատմութիւնը »: Բայց իր ուղղախոն փիլիսոփայութիւնը, եւ յետոյ ձեռք ձգած քաղցր բարեպաշտութիւնը յայտնապէս կրփայլին « Խոստովանութիւնք ուրումն քրիստոնեայ իմաստասիրի » եւ Խորհրդածութիւնք յաղագս Քրիստոսական հաւատոյ » բառած ոսկեղինիկ գրքոյկներուն մէջ . եւ ահա ասոնց հայերէն բարգմանութիւնը փափաքեցաւ մերազնեայց ընծայել Մեծապատիւ Արքիմ-Պէյ՝ մեր բարերար իշխանը, որ Տրոզին մտերիմ եւ ընտանի բարեկամութիւնը վայելած ըլլալով Փարիզ գտնուած ժամանակը, միշտ պատկառանօք կրչիշէ անունը եւ խօսքերը, ինչպէս որ պէտք է համաձայն գտնելով զանոնք իր խոհական եւ ճշմարտասեր վսեմ մտածութեանց :

Վախճանեցաւ Տրոզ 1850ին, եօրանասուն եօրը տարեկան, ամենայն քրիստոնեական պատրաստութեամբ, եւ վրանգեղեցիկ ներքողներ խօսեցան ձեմարանին երկու երեւելի կաճառորդները, Մոնրալանպէո եւ Մինէ: Թէ անոնք, եւ թէ այսու բարգմանութեամբ զինքը մեր ազգին ճանչցընող անձը կրվկայեն միաբան թէ Պարոն Տրոզին մասնաւոր յատկութիւններն էին ուղիղ եւ վսեմ մտածութիւն, ազնիւ ու անուշ սիրտ, կիրք եւ փափուկ ախորժակ, ծանր եւ զուարթ վարմունք, պղատոնական կերպ մը եւ սիրուն պերճախօսութիւն: Գրուածքներն ալ յայտնի կըցուցընեն թէ ինքը իրաւցընէ այս դարու բարոյական իմաստասիրութեան առաջին օրէնադիրներէն եւ անուննին անմահացընող պատկառելի քրիստոնեայ փիլիսոփայից գլխաւորներէն մէկն էր:



ՍԻՐԵԼԻ ՈՐԳԵԱԿԻ ԻՄ

ՅԱԿՈՎԲԻԿ ԵՒ ՅՈՎՍԵՓԻԿ

Գիտեք որ ձեր բարեկիրք եւ կատարեալ դաստիարակութեանը վրայ անձամբ եւ մօտէն հսկելու բաղձանքով՝ մեր հայրենիքէն ի Փարիզ պանդխտեցայ : Հիմա որ զձեզ այս մայրաքաղաքիս մէջ առ ժամանակ մի բողոյ հարկ եղաւ, բայց ապահով ձեռք, ջեմ տարակուսիր որ ձեր դաստիարակութեան հիմն անխախտելի պիտի ըլլայ, որ է քրիստոնեական սուրբ հաւատոյ սկզբունքը՝ լուսաւոր իմաստասիրութեամբ պայծառացած եւ պէսպէս գիտութեամբք զարդարուած :

Այս իրաւացի վստահութեանս նշան եւ յիշատակ ըլլայ ձեզի եւ ձեր հասակակից ազգայնոց երկհատոր գրքոյկս (որոյ բարե- յիշատակ հեղինակին դասախօսութիւնն ու բարեկամութիւնը վայելեր եմ ատենով), ձեր այժմու պատուական դաստիարակին յօժարամիտ աշխատութեամբը եւ իմ խըն- դրովս հայերէն թարգմանուած :

Ստեպ եւ մտադրութեամբ կարդացեք ու սիրով ի գործ դրեք ասոր մեջի խրատ- ները. ատեն կուգայ որ նաեւ այս պատ- ճառաւ աւելի կուրախացընեք զիս ձեր վրայ, եւ որդւոց որդի կօրհնեք յիշատակս իրրեւ պատուական ազգիս եւ սիրասուն զաւակացս ճշմարիտ լաւութեանը փափա- քող հայր ձեր

ԱՐԹԻՆ ՊԷՅ

Փարիզ, Սեպտեմբեր 1854.

ԹՈՒՂԹ

ԱՐՇԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՓԱՐԻԶՈՅ

Ա.Ռ. ՏՐՈՉ.

Արգոյ Տեր .

Երկաւորքք յառաջ գոհացայ գրեն զի յիկ առ իս
գքո « Խորհրդածութիւնոյ յաղագս Քրիստոսական
հաւատոյ » հաճեցար . արդ փութամ եւ գործուանսն
յայտ առնել զոր ի վրոցդ վերձանութենէ գզա-
ցի ես յանձին . քանզի յոյժ քաղցրացան ի քիմս իմ
իմաստք եւ ասացուածք չնաշխարհիկ մատենկանդ :

Ինձ այսպէս բուի եքե անվրեպ կշռութեամբ եւ փա-
փուկ ախորժակաւ լեալ է ընտրութիւն որ ի դմայն
խորհրդածութեանց . զի հակիրճ է ամենայնն եւ յըս-
տակ , եւ կանխակալոյ կարծեացն յաճախելոց ի
ժամանակիս՝ յոյժ ի ճան դիպեցուցեալ ի լուծումն . եւ
միանգամայն չընդոտուցանենն բնաւ եւ ոչ զմի ոք ի
դիւրարորքք բանասիրաց ընդ որս դժուարին իմն է
արդ ի պայքարումն վիճից մտանել : Այս խորհրդածու-
րիւնք մեծաւ մեղմական քաղցրութեամբ սողոսկեալ
մտանեն ի սիրոս ընթերցանելեաց , եւ սակայն չողորեն
չշողոմեն եւ ոչ զմի ինչ ի վնասակար բերմանց նոցին ,



եւ ոչ յանդուզն կարծեաց իմիք լինին ձեռնառու եւ նպաստաւոր :

Իմ ջիք նշմարեալ ի դմին եւ ոչ դոյզն ինչ անստուգութեան նշանակ, եւ ոչ ունիմ բնաւ խեք կատկածանաց եքեւ սաստկապահանջ ոք աստուածարան կարողացի նշմարել ինչ այնպիսի :

Հաւանեալիսկ եմ ես, արգոյ Տէր, զի մեծապէս օգուտ գործեսցէ մատենող այդ խուռն բազմութեան մարդկան, մանաւանդ ջափահասից, եւ որոց պէտքն են տեսանել զճշմարտութիւն զերծ եւ ազատ յերկարածիզ վիճմանց եւ յազգի ազգի նրբախօսութեանց :


Զգրատրական յաւութեանց քոյոյ մատենիդ ասել ինչ ջհամարիմ յանկաւոր, սակայն եւ ըստ այսմ մասին սքանչելի ինձ բուեցաւ :

Եւ արդ օրհնեսցէ Աստուած զվաստակդ քո բարի, եւ զդարձ փոխարինին հատուցէ քեզ, եւ դու հաճեսցիս ընդունել այսու պատենաւ զիմ առ քեզ անձնանուէր մտերմութիւն եւ զիղձս մեծարանաց :

† ԴԻՈՆԵՍԻՈՍ

Արքեպիսկոպոս Փարիզոյ :

Ի Փարիզ, 8 դեկտ. 1843 :



Արքունի Ատեանն խորհրդոց յաղագս Ազգային վարժից՝ վճռովն որ յ9 յունուարի 1844 ամին դատեաց ի կարգս մատենից պիտանեաց զԽորհրդածութիւնքս որ յաղագս Քրիստոսական հաւատոյ՝ ի ցոյց ճշմարտութեան նորին :

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Կուգեմ որ փարատի այն մարդկանց մոլորութիւնն որ կարծեն թէ բնական օրէնքը բաւական է առաջնորդելու մեզի, եւ կը վախնան որ քրիստոնէութեան բարձրութեանը մօտենալով չցածնան :

Սակայն միտքս չեմ դրած որ ուրիշներուն բան սորվեցընեմ: Երանի թէ կարենամ ընթերցողներէս ոմանց սիրտը փափաք մը ձգել՝ զիրենք լուսաւորել կրցող մարդկանց հետ խօսակցութիւն ընելու. այն ինծի բաւական է :




Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



ԽՈՐՀՐԴԱՇՈՒԹԻՒՆՔ

ՅԱՂԱԳՍ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱԻՍՏՈՅ




Ա.

Իրարու ներհակ կարծիքները միարանելու համար օգտակար հնարքներէն մէկն ալ այս ճանցուած է որ նայուի թէ այն կարծիքները որ բաներու մէջ համաձայն են մեկմեկու եւ որ բանին մէջ իրարմէ տարաձայն :

Քրիստոնէութեան օրէնքն է սէր Աստուծոյ եւ մարդկան : Դուն որ այս բարոյական խրատը կրչեսա՛ անշուշտ կախործիս, կրջանաս պահել, եւ երանի թէ կարենայի բոլոր աշխարհք ալ այս խրատը :

4



տը տարածել կրեսս : Բայց Աւետարանին մեջ այս օրէնքը միս-մինակ կեցած չէ, ու հովը որ կողմէն որ փչէ՝ անդին ջղառնար : Դուն հաւատոյ վարդապետութիւնները չես ընդունիր, իբրեւ սուտ բաներ (այնպէս կերեւան քեզի), բարեպաշտական գործերն ալ կըմերժես՝ իբրեւ անչորդ բաներ . այս է անա մեջերնիս եղած տարբերութիւնը :

Քննէ, մտմտա : Մարդուս բանականութիւնը աղօտ՝ մարմնուկ ջահ մըն է . բայց անիկայ մեզի տուողն Աստուած է, եւ մեր պարտքն է այս ջահը այն կերպով բռնել ձեռքերնիս որ ասոր տատանեալ բոցը չմարի : Ուրեմն փիլիսոփայ կարծուած մարդկանց ամէն խօսքերուն դիւրաւ մի հաւատար, եւ անոնք որչափ ալ վստահ կերպով հաստատել ուզեն խօսքերնին՝ մի վախնար, նայէ որ դուն անձամբ քննես . անշուշտ դուն ալ կրհասկընաս քէ հաւատոյ վարդապետութիւններն ու բարեպաշտութեան գործերը բարոյական շինուածոյն հաստատուն ու հարկատր կամարակապներն են :

Բ.

Աստուածեան եղող մարդն ալ կրնայ հետեիլ այն բնական օրինաց որ Աստուած մեր սրտին մեջ խորունկ տպաւորեր է. կրնայ ամեն աշխարհքի՝ ամեն ժամանակի փիլիսոփայից խրատներուն վրայ մտածել, եւ աւետարանի բարոյականէն օգուտ անգամ քաղել, որովհետեւ անոր գերազանցութիւնը յայտնապէս աչքին կը զարնէ ու սիրտը կը շարժէ. կրնայ խիստ շատ աղեկութիւններ բնել ուրիշներուն, եւ վեհանձնական գործերով շատին երախտագիտութեանը արժանաւոր ըլլալ :

Բայց շատ կը սքալալի ով որ միտքը զնէ քէ աստուածեան մարդուն գործնական սկզբունքները խելացի բաներ են. որչափ ալ երեւնայ քէ անիկայ քրիստոնէութենէն կաննէ իր բարոյականը, վարդապետութեանը մեջ միշտ պակասութիւն մը կայ որ քէ ուրիշներուն եւ քէ իրեն համար ապահովութիւն մը չունի, եւ յայտնի կընէ

քեանոր գիտութիւնն ու վարքը անմոյար
ջկրնար ըլլալ : Ուրիշներէն առած կամ
մտքէն հնարած դրութիւնը կամ կարծիքը
սոսկ մարդկային գործ մըն է. այնպիսի
բարոյական դրութիւն մըն է որ միշտ իր
ձեռքն է փոփոխելը, քեկատարելագործե-
լու մտքով՝ իր երեւակայութեանը համե-
մատ, եւ քե իր սրտին տկարութեանցը
յարմարցընելու մտքով : Կարելի է գիտնալ
քե այսօրուան օրս այն դրութիւնն ու կար-
ծիքը ինչ է. վաղն ինչ ըլլալիքը չգիտցը-
ւիր : Ես կը հաւտամ քե անձնասպանու-
թիւնը՝ քե մարդու խելքին առջեւ եւ քե
հաւատոյ սորվեցուցածին նայելով՝ սոս-
կայի յանցանք է. աստուածեանն ալ՝ որ
այս բանիս վրայ համաձայն է ինծի հետ՝
գուցէ իր կարծիքը կրփոխէ, եւ սակայն
նոյնպէս աստուածեան կրմնայ : Իր դրու-
թիւնը սաստիկ ճկուն ու դիւրադարձ է,
վարդապետութիւնը չափէ դուրս՝ ասանկ
ըսեմ՝ առաձգական է. իրեն խօսքին որ
նայիս՝ ամէն բան մեկ մարդու մը խելքէն
կախուած է. բայց մենք այս մեկնատիկ
կանոն ուղղութեան սեպուած խելքին

վրայ ինչպէս կրնանք վստահանալ՝ թէ որ
յայտնապէս գիտենք թէ մարդս ճրջափ
ինքզինքը կրխարէ, եւ ճրջափ տկար է
մեր խելքը՝ մեր հասկըցողութիւնը՝ երբոր
մեր շահուն եւ յօծարութեանցը դեմ կռիւ
մը բացուի : Հաստատութիւն ըսածդ՝ այն
բարոյականին մեջ միայն կրգտնուի որ
դրական կրօնի մը, այսինքն յայտնեալ
կրօնին հետ, անբաժանելի կերպով միա-
ցած է :

Գ.

Քրիստոնէութեան վրայ վեր ի վերոյ
նայողը՝ կրնայ առջի բերան կարծել թէ
այս վարդապետութիւնը հաւատալու բան
չէ. բայց թող մէյմը մտադրութեամբ քննէ,
ետքը ետքը այնպէս կրհամոզուի որ ինքն
ալ կրսէ : Հապրիւյերին այն խօսքը՝ որուն
վրայ թերեւս առաջ կրծրպտեր. « Թէ որ
իմ կրօնս սուտ ըլլար, իրաւցընէ ասկեց
աւելի վարպետ որոգայք չէր կրնար լա-
րուիլ ինձի. անկարելի բան պիտի ըլլար

ինծի չգտորիցս ու ասոր մեջ չբռնուիցս ¹ : »

Գ.

Առարկութիւն մը կայ որ անդադար կրցայ քրիստոնեութեան դէմ, այսինքն քե քրիստոնեութեան սորվեցուցած հաւատքին շատ մասերը մութ են : Բայց նոյն առարկութիւնը բնական օրինաց դէմ ալ կրնայ ըլլուիլ : Գուն ալ ինծի պէս կրհաւատաս քե անսահման էակը, այսինքն Աստուած, ամէն տեղ է. քե որ մեկ հիւլէի մը մեջ միայն Աստուած չգտնուէր, Աստուած չէր ըլլար : Ուրեմն բացարձակ կերպով կրհաւատանք քե Աստուած ամէն տեղ է : Եւ սակայն Աստուած ամէն տեղ է ըսած ատեննիս՝ այս խօսքերուն ոյժը պայծառ եւ յստակ կերպով կրհաւկրնանք արդեօք : Աստուած ամէն տեղ ...ինչ կրսես, ուրեմն սա որոճացող կենդանւոյն, սա արագընբաց կենդանւոյն մեջ ալ է. ուրեմն սա աւագի հատերուն՝

¹ Նկարագիրք, Գլ. ԺԶ :

սա ցեխի կուտոցներուն մեջն ալ է: Այս
ինչ հարցմունքներ են. ինչ տեսակ խնդիր-
ներու մեջ միտքս մուտրած կը պըտըտի:
Գիտեմ որ Աստուած՝ նոյն իսկ իր գոյու-
թեանը պատճառաւ՝ անսահման է, բայց
ինչպէս է այս անսահմանութիւնը. ասոր
այն ատեն խելք պիտի հասցընեմ՝ երբոր
ուրիշ աշխարհք մը երբամ, ուր կարե-
նամ աստուածային բնութիւնը ճանչ-
նալ: Այս աշխարհիս վրայ ճշմարտու-
թիւններ կան որ ամենեւին տարակոյս չեն
վերցըներ մտքիս մեջ. բայց ես ոչ բացա-
տրել կրնամ զանոնք եւ ոչ հասկընալ.
միայն թէ կրնաւատամ անոնց, վասն զի
վրանին տարակուսիլը անխելքութիւն
կըլլար:

Ե.

Շատ հարեւանցի կերպով եղած կըլլան
մարդուս ըրած դիտողութիւնները՝ թէ
որ վարժած չըլլայ հաւատալու թէ ամեն
ժամանակ ալ գաղտնի խորհուրդները մեր
չորս դին առած են: Ո՛ւր պիտի փախ-

չինք, ուր պիտի քաշուինք որ դիմացնիս
խորհուրդներ գաղտնիքներ չեցեն: Աս-
տուածեանց կարծեանցը ապաւինինք. —
անա անոնք ալ Աստուծոյ, հոգւոյ, անմա-
հուրեան վրայ կրիստին. միքե այս ճշմար-
տութեանց մեջ խորհուրդներ չկան: Ու-
րեմն աւելի ալ հեռու պետք է երբայ.
անաստուածից կարծիքն ընդունինք, որ
ամեն բանի բացատրութիւնը կրնանք
տալ կրսեն. — աղէկ նայինք, չըլլայ թէ
անոնցմեալ՝ խորհրդաւոր վարդապետու-
թիւնները ձգենք ըսած ատեննիս այ-
լանդակ կարծիքներ առնունք: Եկէք,
աստուածարանական գիտութիւնները
մեկդի դնենք, ու այն գիտութիւններուն
միայն նայինք որ զգայի եւ շօշափելի նիւ-
րեր կըղենն մեր առջեւ: Անոնց ալ առջե-
նիս բացած ընդարձակ ասպարիզին մեջ
քանի մը քայլ առածնուս պէս, կրտս-
նենք որ ամեն կողմը անբափանցելի՝
խելք չհասնելու խորհուրդներով պատած
է: Թողունք ուսումնական քննութիւննե-
րը, հորիզոննիս ամփոփենք, որպէս զի
ամեն բան աւելի դիւրիմաց ըլլայ մեզի,

միայն տղայական խաղալիքներու ետեւ
ըլլանք: Մատս վերցրնել կուզեմ, կը վեր-
նայ. ինչ հրաշալի բան: Մարդու մտքին
պէս՝ կամաց| ներգործութեանը պէս ան-
նիւք բան չկայ. ինչպէս կըլլայ որ իմ
միտքս՝ իմ կամքս՝ նիւթին վրայ ազդե-
ցութիւն ընեն: Եւ անա այսպէսով այն-
պիսի բարձր խնդիրներու մէջ կըմըտնեմ
որ խելքս կըշփոթի: Ամէն բան խորհուրդ
է մեր անձին մէջ եւ մեր ջորս դին. եւ որով-
հետեւ խորհուրդը՝ գաղտնիքը՝ այնպիսի
կնիք մըն է որ Աստուած իր ամէն գոր-
ծոցը վրայ կըտըպաւորէ, թէ որ կրօնը
խորհուրդ չունենար՝ այս բանս միայն բա-
ւական սատճառ կըլլար ըսելու թէ ուրեմն
կրօնը աստուածային բան չէ:

2.

Թանձր մոլորութիւն մը կայ ոմանց
մտքին մէջ, որ կարծեն թէ քրիստո-
նէութեամբ պէտք է որ մարդու խելքը
խղղուի մեռնի. գգուշանանք այս ամօրա-

լի մոլորութենէն, վասն զի եկեղեցին ալ
բշնամի է ասոր: Գիտուն ու աստուա-
ծասէր քահանային մեկը¹ երբոր այն քա-
րոզներն սկսաւ տալ որ մեծամեծ օգուտ-
ներ ըրին ամենուն, առաջին ճառին մեջ
այս խօսքս ըսաւ. « Աստուածպաշտութիւ-
նը լոյսէն ջվախնար, մանաւանդ քեյայտ
նի երեւնալ կըսիրէ. կըհրաւիրէ ու կը
հրամայէ եւս որ քննեն զինքը: Հայհոյիջ
մարդուն հպարտութենէն քէ որ նախա-
տինք ալ քաշէ աստուածպաշտութիւ-
նը՝ եւ իրեն անպատուութիւն սեպէ,
ապուշ մարդուն զիւրահաւանութենէն ըն-
դունած մեծարանքն ալ իրեն պատիւ չհա-
մարիր: Ոչ ոչ, Աւետարանին աշակերտ-
ները՝ դուրանին աշակերտները չեն: »

Կուզենք իմանալ քէ արդեօք բոլոր
սրտանց քրիստոնէութիւնը պէտք է ըն-
դունինք քէ չէ, — այս միայն քննենք
քէ իրացընէ՝ ինչպէս որ կըսեն՝ Աս-
տուած եկեր է աշխարհս որ հաւատք մը
յայտնէ մարդկանց, եւ հաստատէ ու

¹ Ֆրեսինուս:

ամբողջացրնէ այն բարոյականը՝ որուն սկզբունքը արդէն ապաւորեր էր մեր սրտին մէջ : Մեծ խնդիր մըն է ասիկայ . վասն զի ասով կրնայ խմացուիլ թէ քրիստոնէութիւնը արդեօք այնպիսի հաւատք մըն է որ ամեն մարդ պարտական ըլլայ ընդունելու՝ թէ չէ . անոր համար կրօնը կրհրաւիրէ զմեզ որ լաւ ուշադրութեամբ քննենք այս խնդիրս :

Յայտնի բան է որ մարդուս բանականութեան իրաւանցը այսչափով ամենեւին վնաս մը չկրնար ըլլալ . նոյնպէս անվնաս կը պահուի մեր խելքին իրաւունքը այն բաներուն մէջ որ այս ազատական քննութենէն առաջ կուգան , ինչպէս որ քիչ մը ուշադրութիւն ընողն ալ կրհասկրնայ : Թէ որ մեկդիէն այս ազատ քննութիւնը կրհամոզէ զմեզ թէ Քրիստոս Աստուած էր , նոյն իսկ մեր բանականութիւնը՝ մեր խելքը կը սէ մեզի թէ պէտք է որ հպատակիմ յայտնութեան՝ լիուլի եւ բացարձակ վստահութեամբ . պէտք է հպատակիմ անոր ամեն բանի մէջ , թէ հասկըցած բաներուս եւ

քէ ջհասկըցածներուս մէջ, քէ սքանչելի
խորհուրդներուն եւ քէ ամենապարզ պա-
տուիրանքներուն մէջ: Մեր բանականու-
րիւնը այս կերպով պատճառարանու-
րիւն որ ընէ՝ նոր բան ըրած չըլլար. վասն
զի մէյմը յանձն առնելէն վերջը քէ Աս-
տուած խօսեր է մարդկանց հետ, այլան-
դակ բան մը կըլլար վիճելը քէ արդեօք
խօսածը ճշմարտութիւն էր քէ ոչ:

Է.

Ո՛հ, սրջափ տկար բան է մարդուս
միտքը: Տարակոյս չկայ քէ խենր պիտի
ըլլայ մեկն որ երկրայի քէ արդեօք Աս-
տուած ինքն իսկ ճշմարտութիւն է քէ
ոչ. բայց որովհետեւ մարդկանց խելքե-
րը, կիրքերը, նախապաշարմունքները,
տգիտութիւնը, տեսակ տեսակ են, զար-
մանք չէ որ Աւետարանին խօսքերուն
աչ պեսպես մեկնութիւններ տրուին:
Սնով է որ այնչափ կոխներ, հերձուած-
ներ, պատերազմներ եղան, եւ քրիստո-

նեայք իբարմէ գատուեցան՝ խումբ
խումբ բաժնուեցան :

Հարկ է որ մենք Աստուծոյ խօսքերուն
բուն իմաստը հասկընանք. եւ այս բանս
հասկընալու կերպը երկու տեսակ է : Կար-
բողիկէ եկեղեցիէն բաժնուած քրիստո-
նեայք մտքերնին դրած են թէ սուրբ գրոց
մէջ մէկ զօրութիւն մը կայ որ բարեսիրտ
ու շերմեռանդ կարդացողներուն միտքը
կրբանայ՝ անոր մէջի բուն իմաստները
հասկընալու : Այս խօսքս որ առանձնա-
կան քննութեան համար ըսուած է, մեկէն
ի մէկ սուտ կեցէ՛ երբոր գործնական
արդիւնքը նայինք. վասն զի թէ որ ճշմա-
րիտ ըլլար, պետք էր որ մէկ տեսակ մեկ-
նութիւն միայն ունենար սուրբ գիրքը,
գոնէ բարեպաշտ ընթերցողաց համար :

Ինչո՞վ հասկըցայ եւ թէ աստուածեանց
կարծիքը բաւական չէ՝ ոչ մարդկային
ընկերութեան եւ ոչ այս կամ այն մարդուն,
եւ թէ հարկ է որ յայտնեայ կրօն մը
գտնուի. — ասով որ տեսայ թէ ո՞ր եւ իցէ
իմաստասիրական կարծիք խիստ քիչ
զօրութիւն ունի, որովհետեւ բնութեամբ

ենթակայ է այն ամենայն փոփոխութեանց որ մեր անստոյգ եւ յեղյեղուկ խելքը օգտակար համարի : Քրիստոնէութիւնը բերոր առանձնական քննութեան տակ իյնայ, փիլիսոփայական կարծիք կամ դրութիւն մը կը դառնայ, եւ նորէն այն վտանգին մէջ կը ձգէ զիս' ուսկից որ փախչիլ կուգի :

Կարողիկէ եկեղեցին աւելի յարմար է իմ խելքիս եւ բանականութեանս, վասն զի Ս.ստուծմէ դրուած իշխանութիւն մը կը ցուցնէ ինծի եւ հաւատոյ նիւթերը անկեց տորվէ կըսէ : Ձեմ ուզեր մէջ բերել հոս այն ապացոյցներն որ եկեղեցական պատմութեան մէջ ունինք' այս խնամածու իշխանութեան համար. աւելի խելացութիւն կը սեպեմ' քրիստոնէութեան հետ մեկտեղ ծնած ու զիտուն ընկերութեան մը դատաստանին ձգել այս խնդիրը, քան թէ մասնաւոր մարդկանց կարծիքներն ընդունիմ, թեպէտ եւ վերջին որոշումը դարձնայ իմ հաճոյիցս եւ ընտրութեանս պահեմ :

Ը.

Շատ մարդիկ կան որ ջեն հասկրնար քե ինչ յարարերութիւն կամ ինչ կապակցութիւն կայ հաւատոյ վարդապետութեանց հաւատայուն եւ բարոյական խրատուցապահականութեան մէջ: Աստուած երեք անձինք ալ ըլլան՝ մեկ անձ մը միայն ալ ըլլայ, կրսեն, այս մասին վրայ եղած ճշմարտութիւնը կամ մոլորութիւնը մարդուս վարքին վրայ ազդեցութիւն մը չկրնար ունենալ:

Այս մտածութիւնը ճշմարիտ պիտի երեւնայ անոնց որ ոչ երբեք ուզեր են մտադրութեամբ ետեւէ ըլլալ հաւատոյ բաներուն. սակայն դիւրին է ցուցընելք քե քրիստոնեական հաւատքը որչափ ոյժ ունի մարդուս բարոյականին վրայ: Գնենք քե դուն, որ վընքերցող, դեռ այս հաւատոյ վարդապետութիւնները ջես ընդունած, բայց միտքդ բարի է. մեկէն կիմանաս որ անոնց ազդեցութիւնը հասկր-

նայու համար՝ պէտք է ինքզինքդ քիչ մը
ատեն այն անձանց վիճակին մէջ սեպես՝
որոնք որ ամենայն վստահութեամբ եւ
համոզմամբ մտաց կրնդունին այն վար-
դապետութիւնները :


Քրիստոնեութիւնը կրպատուիրէ սիրել
զԱստուած եւ զմարդիկ : Նայէ մէյմը քե
հաւատոյ վարդապետութիւնները որչափ
կօզնեն քրիստոնէին՝ որ այն օրէնքը լա
հասկրնայ եւ ինչպէս որ պէտք է ի գործ
դնէ :

Հաւատոյ վարդապետութիւնները կա-
պակցութիւն ունին իրարու հետ, եւ Եր-
րորդութեան խորհուրդը ներքին յարաբե-
րութիւններ ունի փրկագործութեան խոր-
հրդոյն հետ :

Ո՛րչափ սեր պիտի ունենայ առ մարդիկ
այն Աստուածն որ իր Որդին կուտայ
փրկանք՝ որպէս զի մարդկային ազգի
յանցանքները քաւէ : Ի՛նչ սեր է այն Որ-
դւոյն սերն առ մարդիկ՝ որ կամաւորապէս
զօն ըլլալով անոնց փրկութեանը համար,
գոմի մը մէջ կրճնանի ու խաչին վրայ
կրմեունի : Գաիր մեկ մարդ մը որ վառվը-

ուն երեսակայութեան հետ ամենափա-
փուկ սիրտ մը ունենայ, եւ ըսէ իրեն թէ
Աստուած իր մարդասիրութեանը նշան՝
արդեօք ինչ կրնար ցուցընել. միթէ այս
աստուածային խորհրդէն աւելի սրտա-
շարժ բան մը կրնանք գտնել : Ո՞ր քրիս-
տոնեան այս խորհուրդը մտածելով չհիա-
նար, եւ մեկէն ի մեկ Աստուծոյ սիրովը
ջվատուիր : Ո՞րչափ տկար կերեւնայ իրեն
այն սերը՝ որով կըսիրէ իր ստեղծողն ու
փրկիչը՝ քանի որ կըբաղդատէ այն եր-
կնային սիրոյն հետ որ սքանչելի եւ գորո-
վական ապացոյցներով ընդունէր է : Ի՞նչ
հրաշալի օրինակ ունի առջեւը՝ իր եղբարց
ունեցած պարտքերը կատարելու, եւ այն
պատուիրանը պահելու համար որ Յիսուս
իր աշակերտացը բողբ է. « Սիրեցէք
զմիմեանս որպէս եւ զձեզ սիրեցի : »

Ո՞ր եւ իցէ ողջամիտ ու բարեսիրտ
մարդու կըհարցընեմ. ինչ բան կրնաս
գտնել՝ թէ քու խնդիրդ եւ թէ փոխադայից
կարծիքներուն մէջ որ այս սրբազան հա-
ւատքին չափ զօրաւոր կերպով սիրող
սիրով լեցընէ : Ըսի թէ միայն յայտնեալ



կրօնն է անիկայ որ հաստատութիւն կու-
տայ մարդու բարոյականին. բայց այս
օգուտն ալ իր մտքին միայն եղած օգուտն
է. անկեց պետք է գործնականին անցնիլ,
եւ սակայն մենք շատ տկար ենք: Քրիս-
տոնեութիւնն անոր համար եղած է որ
գերագոյն իմաստութեան մը մեզի տուած
պատուերներուն հետ՝ ոյժ ալ տայ մեզի
զանոնք կատարելու: Հաւատոյ վարդա-
պետութիւններուն ու բարի վարուց կա-
նոններուն մեկտեղ գալովն է որ հրաշալի
բաներ կրճնանին. եւ այս միաբանութեան
գորութիւնն որ մտածենք՝ կրնանք հասկը-
նալ քե ինչպէս կրչայ որ մարտիրոսները
իրենց Փրկչին սիրոյն համար այնչափ
տանջանքներու կրդիմանային:

Թ.

Աստուծոյ կատարելութեան եւ մար-
դասիրութեան ապացոյցները շատ ան-
գամ արարածոց վրայ կերեւնան ու
կրզմայլեցընեն զմեզ: Քրիստոնեութիւնն

ալ ուրիշ աստուածային ստեղծագործութիւն մըն է, եւ ասոր հրաշալիքը աւելի սրտաշարժ եւ աւելի վսեմ ըլլալով՝ նոյն կատարելութիւններն ու նոյն սերը կը քարոզեն մեզի :

Փոխանակ անմտաբար հաւատոյ խորհրդոց մթութեանը դեմ գանգատ ընելու՝ վախնանք որ չըլլայ թէ չտեսնենք՝ չղիտենք այն բաներն որ ճանչնալն ու գիտնալը մեր ձեռքն է: Փրկագործութեան պատմութիւնը լսած ատեննիս՝ Աստուծոյ անբաւ բարութեանը վրայ կրհիանանք. բայց այս խորհրդոյն վրանիս ըրած ազդեցութիւնը՝ միայն այս հիացմունքը պիտի չըլլայ. հապա ինչ սոսկալի բան պիտի երեւնայ մեր աչքին մեղքը, որովհետեւ մարդկանց անօրէնութիւնները լուանալու համար պէտք եղաւ որ Աստուծոյ արիւնը քափուի: Աստուծոյ բարութեան մտածութիւնը ջմոռցրնէ մեզի ուրիշ մտածութիւններ ալ որ նոյնպէս մեր միտքը լուսաւորելու համար եղած են: Փրկագործութեան խորհրդով կիմանանք թէ Աստուծոյ կա-

տարեալ արդարութիւնն ալ անքակտելի է իր անհուն բարութենէն. փրկագործութեան խորհրդոյն պատճառաւ Աստուած կրննրէ մարդկանց, բայց քաւութենէն ետքը միայն կրննրէ:

Մեկ հրաշալի բանէն ուրիշ հրաշալի բաներ կրճնանին: Որովհետեւ փրկագործութիւնը մարդուս ձեռքէն չստակամքին ազատութիւնը, անոր համար է որ ախտերն ու վիշտերը առջինին պէս կըջարջարեն զմարդիկ: Բայց Փրկչին գթութիւնը չափ չունի: Այն աստուածային խորհուրդը ամէն օր կրնորոգուի. եւ քեպէտ անարիւն է այս պատարագը, սակայն պարզ յիշատակութիւն մը չէ. կիջնայ Քրիստոս սեղանին վրայ ու ինքզինքը մեզի կուտայ..... Ո՞ր բերան կրնայ պատմել Աստուծոյ ամէն բարեբարութիւնները, եւ քե ճրջափ երախտապարտ են մարդիկ Աստուծոյ:

Այնչափ օգնութիւններէ ու հրաշալի բաներէ ետքն ալ՝ մարդուս ոտուրները սահուն են, ուստի ստեպ ստեպ կիյնայ ու կեպէ. հապա ինչ պիտի ըլլար՝ քե

որ այս նեցուկները վերցրնէիր քովէն, ու իրեն օգնելու եւ ճամբայ ցուցրնելու համար՝ միայն մեր բնագանցական ու բարոյական փիլիսոփայութեան վրայ գրուած գրքերը քովը բողուիր:

ժ.

Անհաւաններ տեսած եմ որ կրիստոստովանին թէ քրիստոնեական հաւատոյ վարդապետութիւնները շատ ոյժ ունին ուղիղ ճամբուն մէջ առաջնորդելու մարդկանց. ամենքն ալ կրզմայէին աւետարանին պատմութիւններուն վրայ, այն ի՛նչ գեղեցիկ՝ ի՛նչ վսեմ բաներ են կրսէին. ոմանք ալ կրցաւէին որ ասկեց ետքը կարելի բան չէ ռամիկ ժողովուրդը խարելը. — բայց ասոնք ամենն ալ քրիստոնեից պատմութիւնները՝ ճարտար երեսակայութենէ առաջ եկած փառաւոր դիւցազներգութեան մը առասպելներուն կրնմանցրնէին:

Դժուար նիւթ մըն է ասիկայ, բայց

դժուարութիւններէն ջփախցինք: Քրիստոնէութիւնը ոչ երբէք կուզէ որ խարկուքեամբ մարդ շահի, մանաւանդ թէ կանարգե ու կրմերժե այն ամենայն օգնութիւններն որ իրեն մեծութեանը արժանի չեն: Ես ալ գիտեմ թէ հաւատոյ վարդապետութեան մը գեղեցկութիւնն ու օգտակարութիւնը բառական չեն անոր ճշմարտութիւնը հաստատելու համար: Մարդուս զգացմանը տուած ապացոյցներովը՝ միտքը կրնայ պաշարուիլ ու լա կարծիք առնուլ բանի մը վրայ, բայց այսպիսի ծանր նիւթի մէջ կատարեալ համոզումն մտաց հարկաւոր է: Ուրեմն դրական ապացոյցներ պէտք են որ հասկըցուի թէ քրիստոնէութիւնը մարդուս խելքէն հնարուած բան չէ, հապա Ստոուժմէ եկած է:

Ծուռ տրամաբանութիւն մը ըրած կրէլայ՝ ով որ ըսէ թէ քրիստոնէութեան ճշմարտութիւնը հաստատելու համար՝ հրաշքները պէտք չէ մէջ բերել, վասն զի հարկ է որ գերբնական գործողութեան մը ապացոյցներն ու վկայութիւններն ալ

գերբնական կարգի գործքեր ըլլան :
Զվախնանք այս բանէս, ու ջրսնեք թէ այս
սկզբամբ մեր խնդրոյն վրայ բանձր մքու-
րիւն մը կիջնայ : Աստուածն ճշմարտու-
րեան ուզեր է որ գերբնական դիպուածնե-
րը կարենան ուրիշ հասարակ դիպուածնե-
րուն պէս քննութեան տակ իյնայ ու ստու-
գուիլ : Ուստի այս տեսակ դիպուածներն
որ հին ատենի քրիստոնեայք մեզի աւան-
դեր են՝ պէտք է քննենք պատմական եւ
տրամաբանական խնդիրներով, ու տես-
նենք թէ իրօք պատահեր են, եւ թէ արդեօք
մարդկային հնարքով մը եղած չեն կրնար
ըլլալ :

Իմ գրուածքս անոնց համար է որ Աս-
տուծոյ գոյութեանը վրայ տարակոյս չու-
նին. ուրեմն չեն կրնար անոնք աստուա-
ծային կարողութեան չափ մը դնել՝ առանց
իրենք զիրենք սուտ հանելու. վասն զի
անսահման եակին գոյութիւնն ուրանալը,
եւ անոր կարողութեանը չափ մը սահ-
մանելը՝ երկուքն ալ մէյմեկ մոլորութիւն-
ներ են՝ իրարու հաւասար : Այս պարզ ձեռ-
նարկութենէս ալ կրնեսեի թէ հրաշքը

անկարելի բան չէ : Բարեսիրտ մարդը պետք է որ այս բանիս հաւատայ, ինչպէս որ պարտական է այս ալ գիտնալու քե մէկ բան մը կարելի է ըսելը՝ հարկաւ իրօք ալ կայ ըսել չէ :

Ես միտքս չեմ դրած որ հոս մի առ մի բացատրեմ այն ամենայն ապացոյցները՝ որոնցմով կերեւնայ քրիստոնէութեան երկրիս վրայ առաջ երթալը, անոր վրայ եղած մարգարէութեանց կատարուիլը, եւ մեջը հանդիպած հրաշքները, վասն զի իմ տգիտութեամբս այն ապացոյցներուն ուժը կրնար տկարանալ. ուստի իմ մի միայն նպատակս այս է որ ընթերցողներէն ոմանց սիրտը փափաք մը ձգեմ այնպիսի մարդկանց հետ խօսակցելու որ կարող են զիրենք լուսաւորել. եւ որպէս զի կարողութենէս վեր աշխատանքի ձեռք չզարնեմ՝ պետք է որ ըստ կարի ամփոփեմ գրուածքիս նիւթը : Միայն մէկ հրաշքի մը գլխաւոր ապացոյցները քննեմ որ քրիստոնէութիւնը անոր վրայ հաստատուած է, այս ինքն Քրիստոսի տեառն մերոյ յարութեան հրաշքը : Պօղոս առա-

քելոյն խօսքն է. « Թե որ Քրիստոս յարու-
քին չէ առած, մեր քարոզութիւնն ալ ըն-
դունայն է, ձեր հաւատքն ալ ընդունայն
է » կրսէ: Այսպիսի ծանր նիւթի մը վրայ
խօսելու անով կրնամարձակիմ որ հարիւ-
րաւոր տարիներէ ետքը անհաւանից դեմ
այնչափ առաքինի, իմաստուն եւ հանճա-
րեղ մարդիկ պատերազմեցան որ մեզի
ուրիշ աշխատանք չմնար՝ բայց երէ
անոնց առատապէս սերմանած իմաստնե-
րուն մեջ ընտրութիւն ընել եւ ուզածնիս
առնուլ:

Կարգէ դուրս անձ մը երեւցաւ՝ ասկեց
գրեք երկու հազար տարի առաջ՝ Հրեաս-
տանի մեջ, որուն նման իմաստուն ոչ եղեր
է եւ ոչ պիտի ըլլայ: Իրեն այս աշխարհիս
վրայէն անցնիլը այնպիսի մեծ յեղափո-
խութիւն մը ըրաւ մարդկանց մեջ որ ոչ
երբեք եղած էր: Ոչ աշխարհակալ մըն էր
անիկայ՝ ժողովուրդները նուաճող, ոչ
օրէնսդիր մը՝ քաղաքի կամ տերութեան
մը օրէնքները լաւցրնող. Յիսուս աղքատ
վիճակի մեջ, եւ աշխարհիս մեկ անկիւնը
քաշուած, ուր որ սակաւարիւ ժողովուրդ

մը կրբնակեր՝ ուրիշ ամեն ժողովուրդներէ իր օրէնքներովը զատուած . բոյոր մարդկային ազգիս հետ կրխօսի . կրնայի որ փոխէ ամենայն ազգաց հաւատքն ու բարքը , կուգայ որ լուանայ սրբէ մեր անօրէնութիւնները եւ երկնից արքայութեան դռները բանայ մեզի : Այնպիսի սուրբ եւ անարատ բարոյական մը ունի որ նմանը ոչ երբէք ականջի զարնուած , սրտի մը դպած , մտքի մը լոյս տուած է : Իր մէկ հասփկ բուրը խօսքն է . մէկէն կրտեսնես որ իր կարողութեանը վրայ ապահով ու վստահ է , եւ նոյն իսկ ճշմարտութիւնը յայտնապէս տեսնելով՝ ամենեւին տարակոյս մը չունի : Արդէն դժուար բան է սիրելի բնեջ մեզի այնպիսի պատուերներն որ մեր մոլեկան յօժարութիւններուն դեմ կեցեն , եւ մեր հրապուրիչ զուարճութիւններէն զմեզ կրզատեն . ինքք ամենեւին չվախնար այն դժուարութեան վրայ աւելի ծանր դժուարութիւն մըն աչ աւելցրնելէն , ուստի այնպիսի խորհուրդներու կրհաւտացընէ որ իրենց մբութեամբը մեր հպարտութեան գրեթէ նախատինք կրբե-

րեն : Այս երկու արգելքներն ալ բանի մը
չեն գար, եւ իր բարոյականը այնպիսի
անպատմելի գեղեցկութիւն ունի որ զա-
մենքը իրեն կը քաշէ, բոլոր մարդկային
ազգը մեկ եղբայրութիւն մը կը դարձնէ :
Իր վարդապետութիւնները կը զմայեցը-
նեն զմեզ՝ քանի որ կը տեսնենք թէ ինչ
կապերով կը միացընեն անոնք երկինքը
երկրիս հետ, եւ որչափ ոյժ կուտան մար-
դուս հոգւոյն որ մինչեւ ճշմարտութեան
եւ ամենայն բարեաց բուն աղբիւրին հաս-
նի : Յիսուսի ամեն գործողութիւններն ալ
իր խօսքերուն յարմար են, պատուիրա-
նին հետ օրինակն ալ ինքը կուտայ . իր
վարքն ալ քարոզած բարոյականին պէս
անարատ է : Իշխանութեամբ կը խօսի, եւ
տակայն « հեզ է եւ խոնարհ սրտիւ » : Գա-
տապարտութեան տակ կը ձգեն զինքը, եւ
ամենայն սիրով կը համբերէ նախատա-
նաց եւ չարչարանաց . խաչին վրայ կը բե-
ւեռեն, եւ իր դահիճներուն վրայ կը խղձայ,
աջուրները դեպ ի երկինք կը դարձնէ
ու կըսէ . « Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն
զինչ գործեն : » Ո՞վ է արդեօք այս կարգէ

դուրս անձր.... Ամենայն քրիստոնեայք
զինքր կրպաշտեն՝ հաստատ դրած ըլլա-
լով մտքերնին քե երրորդութեան անձանց
մեկն է, եւ աստուածային բնութիւնը միա-
ւորած է իր վրայ մարդկային բնութեանը
հետ : Անհաւանները սոսկ մարդու մը
տեղ միայն կրղենն զՅիսուս, եւ ընդհան-
րապէս այսչափին միայն կրհաւանին քե
իւր իմաստութիւնը գերագոյն՝ գերազանց
բան մըն էր : Այս կարծեաց մեջ յայտնի
հակասութիւն կայ, եւ ինքիբմէ կրլու-
ծուի : Յառաջագոյն ըսաւ Քրիստոս քե
ինքր խաչի վրայ պիտի մեռնի, եւ եր-
րորդ օրը յարութիւն պիտի առնու : Թե
որ յարութիւն չէ առած, ուրեմն խաբե-
րայ է : Չկրնար Քրիստոս իմաստուն ը-
սուած մարդկանց մեկն ըլլալ . կամ ան է
որ Աստուած է, եւ կամ ան որ է նախա-
տիպ է ստութեան եւ կեղծաւորութեան :

Գիտեմ քե փիլիսոփաներ կան որ աշ-
խատեր են ցուցընելու քե Քրիստոս ամե-
նեին խաբերայ չէր. եւ յիշատակութիւն
ըրած են քե հապա ինչպէս հին ատենն ալ
շատ օրենսդիրներ եղած են որ կրսէին

թէ իրենց օրէնքները աստուածներէն եկած են : Բայց անոնց այս խօսքս ըսելուն՝ եւ ես Աստուած եմ ըսելուն մէջ անբաւ տարբերութիւն կայ. ուստի ես ամենեւին նմանութիւն մը չեմ գտներ այն օրէնքսդրաց եւ Յիսուսի մէջ : Կրնայ ըլլալ որ այն օրէնքդիրներն իրենց օրէնքները չափազանց կերպով մը աստուածոց պաշտպանութեանը տակ ձգեր էին . ասիկայ ապացոյց մըն է թէ նոյն իսկ հեթանոսներն անգամ կրօնի ազդեցութեանը վրայ մեծ համարում ունէին, եւ այս իրենց այլաբանական գրուցուածքին մէջ շատ շատ այնպիսի խաբէութիւն մը կրտեսնուի որ հեթանոսական քաղաքագիտութեան սուտերուն քերէններէն մեկն է : Նումա Պոմպիլիոս ¹ անտառի մը մէջ կը քաշուի որ իր օրէնքները հնարէ, եւ ձայն կը հանէ թէ Եգէրիա յաւերժահարսին խորհուրդ կը հարցընէ. թէ որ դուն այս պարզ ու իրաւացի

¹ Նումա Պոմպիլիոս Հոռոմ քաղաքին երկրորդ քաղաւորն էր՝ Քրիստոսէ 714 տարի առաջ. Թ :

այլարանութեան ջհաւնիս, իմաստակի տեղ կրդնեն գրեզ: Իսկ Քրիստոս, որ աշխարհք եկեր է՝ սորվեցընելու մարդկանց հոգւով եւ ճշմարտութեամբ պաշտել զԱստուած, Քրիստոս որ կրխրատե գմեզ այնպիսի սուրբ քարոյականի մը հետեւիլ, ինչպես կրնար անդադար իր խօսքերուն հակառակը մտածել սրտին մեջ: Ուրեմն իր ձայնովը՝ իր անուամբը եղած այնչափ սքանչելի փոփոխութիւնները միթէ կարգէ դուրս խաբերայի մը գործ էին: Ուրեմն կռապաշտութեան կործանիչը ուզած պիտի ըլլայ որ մեկ մարդ մը պաշտել տայ, այն նոր կուռքն ալ ինքը պիտի ըլլայ: Թէ որ այնպես է, ուրեմն ինչ որ ինքն ըսաւ «գերեզմանաց բռելոց» համար, այս ինքն այն մարդկանց համար որ դրսուանց արդար կերեւնան ու ներսեն լի են կեղծաւորութեամբ, այն խօսքը աւելի իրեն պիտի յարմարեր քան թէ Փարիսեցւոց, եւ անոնց գլխուն վրայ քափած բոլոր վայերն ալ իր գլուխը պիտի դառնային:

Երկու սոսկալի դժուարութիւններու

մեջ կրնայ իյնայ մեր միտքը. այս ինքն
կամ այն է որ բնութեան սովորական
կարգը ընդհատեցաւ՝ թէ որ Քրիստոս
յարուրթիւն առեր է, կամ այն է որ բարոյ-
ական կարգը տակնուվրայ եղաւ՝ թէ
որ այն անձը (որ կատարեալ օրինակ էր
իմաստութեան) խարդախութեան աղտո-
վը արատաւորուեր է: Այս երկու ենթա-
դրութեան որն ալ ընդունիմ՝ կըշուարիմ:
Եւ սակայն խելքս կըվկայէ թէ կրնայ ըլ-
լայ որ Աստուած իր անսպառ գրութեամ-
բը հաճեր է մարդկանց բշուառութիւն-
ները թեթեցընել, եւ կարգէ դուրս հրաշ-
քով մը հաստատեր է Քրիստոսի Փրկչին
մերոյ պաշտօնը: Այս դրութեան մեջ ա-
մենեւին բան մը չկայ որ իմ խելքիս դեմ
ելլէ. ամեն բան ասոր մեջ գեղեցիկ ու մը-
խիթարական է. եւ ասոր դեմ կռուիլը՝
Աստուծոյ կարողութեանն ու բարութեա-
նը չափ եւ սահման դնել է: Որչափ որ
մտածեմ այս դրութեան վրայ՝ այնչափ
աւելի հաստատութիւն կըգտնեմ վրան.
Իսկ մեկապը որչափ քննեմ՝ այնչափ կըտը-
կարանայ: Ի՞նչպէս կրնայ ըլլայ որ այն-

պիսի անձ մը որ կատարեալ առաքի-
նութիւն կըցուցըներ իր ամէն խօսքերուն
ու գործողութիւններուն մէջ, միտքը
դրած ըլլայ վերանորոգել մարդկային
ազգը ստութեամբ ու կեղծաւորութեամբ:
Ի՞նչպէս կարելի է որ երկու հազար տարի
յաջողութիւն գտնէ մէկ հայնոյութիւն մը՝
որով կըսէր թէ ինքն Աստուած է: Թէ որ
դուն այս ենթադրութիւնը ապացոյցնե-
րով հաստատես, ոչ միայն խաբերայի
մը հաստատած կրօնը կըկործանես, այլ
նաեւ ճշմարտութեան ու ստութեան, ար-
դարութեան եւ անիրաւութեան գաղա-
փարներուն հիմը կըքանդես. այ անկեց
ետքը եւ բարոյականի ջեմ կրնար հաւա-
տայ, Աստուծոյ գոյութեանն այ հաւա-
տայու պարտականութիւն ջեմ ունենար,
եւ միայն իրաւունքը անաստուածինը
կըլլայ՝ որ ամէն բան կուրանայ:

Երբոր մէկը առանց նախապաշարման
քննէ թէ Քրիստոսի տեսուն մերոյ կա-
տարած պաշտօնին համար ինչ ապա-
ցոյցներ կան, կըհիանայ թէ իրեն երկրա-
ւոր օգնութիւնները որչափ տկար էին, եւ

րակոյս չեն վերցրներ : Քրիստոս խաչին վրայ մեռաւ , բաղուեցաւ , քովը պահապաններ դրուեցան որ մարդ չմօտենայ գերեզմանին . երբորդ օրը մարմինն աներևոյր եղաւ , Հրեից գլխաւորներն ըսին թէ մահապարտին աշակերտներն եկեր ու մարմինը վերուցեր են : Թողունք այն կտորն որ այս րանս ընելու համար ինչ մեծամեծ արգելքներ կրնային ունենայ աշակերտները . ես այս միայն կըսեմ թէ աշակերտներուն մտքէն անգամ չէր կրնար անցնիլ որ երբան Յիսուսի մարմինը վերցրնեն : Եւ յիբաւի . վասն զի կամ ան էր որ կրհաւատային անոնք թէ իրենց տերը եւ վարդապետը երեք օրէն յարութիւն պիտի առնէ , կամ չէին հաւատար , եւ կամ կըտարակուսէին : Թէ որ կրհաւատային Քրիստոսի խոստմանը , ինչո՞ւ համար փուճ տեղը իրենք զիրենք յայտնի վտանգներու մեջ պիտի ձգէին : Իրենց պարտքն էր Քրիստոսի կարողութեանը վրայ ապահով ըլլալ . ուստի երեք օր սպասելու ալ կարօտ չէին , վասն զի ստոյգ գիտէին որ պիտի տեսնեն զինքը :

Թե որ չէին հաւատար թե կարելի բան է իրեն յարութիւն առնելը, ուրեմն զմեզ խաբեր է պիտի ըսէին. պիտի տեսնէին որ յարութիւն առնելու խոստմանը հետ՝ ուրիշ ամեն խոստմունքներն ալ որ ըրած էր՝ կրփրճանային, եւ այն գործն որ ի սկզբան կարծեր էին թե յաշոգութիւն պիտի գտնէ՝ բոլորովին ոչինչ կրդատնար: Այս վիճակիս մեջ թե որ քիչ մը խելք բանեցրնէին, թե որ իրենց երկջոտութեանը միայն մտիկ ընէին որ այնչափ անգամ ցուցուցած էին, այս երկու բանին մէկը կրմնար իրենց ընելու. կամ պէտք էր որ անկէց ետքը մէյմալ Հրէից աչքին չերեւնային, եւ կամ պէտք էր որ երբային քահանայապետներէն ու ծերակուտէն բողոքիւն խնդրէին՝ խաբերայ մարդու մը գործակից եղած ըլլալնուն համար: Իսկ թե որ կըտարակուսէին, նոյն բնական խելքը եւ նոյն վախկոտութիւնը խորհուրդ պիտի տար իրենց որ երբան երեք օր պահուրտած կենան, որ պէս զի տեսնեն թե ճշմարտութիւնն ու կարողութիւնը որ կողմէն պիտի երեւնայ:

Այս երեք ենթադրութեանց մէջ ալ՝ կարելի բան չէ որ աշակերտները միտք ունեցած ըլլան խաչեցելոյն մարմինը գողնալու :

Քրիստոսի յարութեան գլխաւոր վկանները առաքեալներն են : Դուն որ չես ուզեր իրենց վկայութեանը հաւատալ՝ ըսէ տեսնեմ, խարում են անոնք քե խաբերայ : Ի՞նչպէս կրնան խարում ըլլալ որ գ՛րիստոս տեսան, հետը խօսեցան, քառասուն օր հետը վարուեցան, եւ քաշած չարչարանքէն մնացած վերքերը շօշափեցին : Իրաւ է որ երբեմն կրիստոսի մարդ նաեւ խիստ յայտնի բաներու մէջ, բայց նրջափ դժուար բան է խարուիլը այնպիսի բանի մէջ որ խարուողը անով վտանգի մէջ կրղնէ քե իր հանգստութիւնը եւ քե կեանքը : Արդ քե որ առաքեալները կր հաւատան քե յարութիւն առեր է Քրիստոս, ստիպուած են անոր վկայութիւն տալու, եւ Քրիստոսի քշնամեացը ատելի ըլլալէն ու անոնցմէ չարչարանք քաշելէն չեն վախնար. հարկ կրլլայ որ ամեն ժամ եւ ամեն վայրկեան կեանքերնին

դնեն Քրիստոսի համար, եւ այս աշխարհիս մեջ մահուանէ ի գատ ուրիշ վարձքի ականկալութիւն չունենան: Հիմա մեկալ կարծիքը նայինք. վասն զի կարելի բան չէ որ այնպիսի վիճակի մեջ այն մարդիկը աղէկ քննութիւն ըրած չըլլան ու կամաւ խարուին: Ուրեմն ինչ ըսենք, խաբերայ են: Ո՛հ, քե որ այս ենքադրութիւնն ընդունինք, ինչ անհաւատայի կարծիքներու մեջ պիտի իյնանք: Առաքեալները հասկընալով քե Մարիամու որդին խաբերային մեկն է եղեր, մեջերնին խօսք դրած պիտի ըլլային որ անոր մահուամբը քիչ մը ատեն դադրած խաբէութիւնը նորէն ձեռք առնուն: Այսպիսի անխելք մտածութիւն եւ այսչափ անօրէն յանդգնութիւնը ուսկից պիտի գար իրենց: Քանի որ Քրիստոս հետերնին էր, եւ պարտական էին անոր խոստմանցը հաւատայ, ծակէ ծակ կրփախցէին որ ձեռք չիյնան. հիմա որ իրենց վարդապետը չկայ, եւ կրտսնեն քե խոստմունքները սուտ են եղեր, ինչէն այնչափ նախանձայուզութեամբ եւ հաւատարմութեամբ պիտի վառուին:

Մտքերնին ինչ կրնար ըլլալ : Ո՛գիտե՛ ,
 քերեւս այս պիտի ըսէին մեջերնին քե
 Գիտենք որ Յիսուս խաբերային մեկն էր .
 հոգ չէ . կեղծաւորութիւնը ձեռք առնունք
 եւ պնդենք քե Սատուած էր . գիտենք որ
 ասով ոչ հարստութիւն պիտի վաստը-
 կինք եւ ոչ պատիւ , հապա իրաւացի
 պատիժներ պիտի քաշենք՝ քե ասդիս եւ քե
 անդիի աշխարհքը . հոգ չէ . զմեզ խաբող
 եւ իրեն փառամոլութեանը համար չարա-
 չար պատժուած մարդը Սատուծոյ պէս
 պաշտել տալ ուզեցինք . քող այս փափաք-
 նիս կատարուի , ու ինչ վնաս ալ քաշենք՝
 զեն չունի : Այս կերպով իրենց ամեն տեսակ
 օգուտներուն հակառակ դիտաւորութիւն
 մը դնելով մտքերնին , այն տգետ ու վախ-
 կոտ մարդիկը յանկարծակի մէյմեկ գի-
 տուն ու աներկիւղ մարդիկ դարձած պի-
 տի ըլլային , եւ դիտաւորութիւննին պիտի
 կատարուէր : Ոչ , ես այնչափ դիւրահաւան
 չեմ որ այսպիսի անձոռնի բաները Աւե-
 տարանի խօսքերէն վեր դնեմ :

Պատմութիւնը կը վկայէ քե առաքեալք
 մէյմեկ կենդանի օրինակ էին հաստատուն

հաւատոյ, ճարտասանութեան եւ քաջա-
արտութեան . ասոնք քրիստոնէութիւնը
քարոզեցին , եւ անդադար հալածանք ու
չարչարանք քաշելով՝ ամեն տեղ այս հա-
ւատքը տարածեցին : Թե որ իրենց հար-
ցընես քե այս փոփոխութիւնն ինչ կերպով
եղաւ վրանիդ , պատասխան կուտան քե
Քրիստոս յարութիւն առաւ , երկինք վե-
րացաւ , եւ Հոգին սուրբ մեր վրայ իջաւ :
Ես այս անցքերուն առաջինը միայն քննե-
ցի հոս , բայց մեկալ երկուքն ալ անոր հե-
տեւանքն են :

ԺԱ .

Աստուածպաշտութեան գլխաւոր ճրշ-
մարտութիւններուն մեկն ալ այս է որ ճշմա-
րիտ քրիստոնեայ ըլլալու համար՝ խեղք
բանեցընելը կամ պատճառարանելը բա-
ւական չէ , հաւատք ալ հարկաւոր է : Կար-
ծեցեալ փիլիսոփաները այս խօսքս լսած-
նուն պէս , մեծ յաղթութիւն մը ըրածի
պէս՝ ծափ կըզարնեն . կըսեն մեզի քե

դուք առաջ կաշխատիք որ ձեռացրնէք
քե ուղիղ խելքը խղղելու միտք ջունիք,
եւ սակայն ետքը ետքը կըստիպուիք ճշ-
մարիտը խոստովանելու :

Այս բերանը կըբռնեն այն մարդիկն որ
բերեւամիտ են բնութեամբ, ու խելքերնին
գորաւոր ալըլայ՝ դժուարաւ կըհասկընան
այն խնդիրներն որ իրենց նախապաշար-
մամբը արդէն որոշած լմընցուցած են :
Հաւատքը մարդուս խելքին դեմ բան ջը-
նէր՝ վասն զի խելք ըսածդ հաւատոյ օ-
գուտները կըտեսնէ, կըճանջնայ, եւ ինքը
կըստիպէ գմեզ որ այս երկնային պարգեւս
խնդրենք Սմենակայէն :

Մեր խելքը շատ անգամ յայտնի կըցու-
ցրնէ մեզի իր տկարութիւնը. կըսէ մեզի քե
կան ճշմարտութիւններ որ ինքը ջկընար
հասկընալ, գգացմունքներ որ ինքը ջկըր-
նար ազդել, գորութիւն մը ոյժ մը որ ինքն
ջկընար տալ: Թէ որ իր ձայնին մտիկ ը-
նենք, կիմանանք որ կարօտ ենք անհուն
Էակին ապաւինելու, որպէս զի մեր կա-
րօտութիւններն ինքը լեցրնէ :

Բնական խելքը կըպատուիրէ մեզի որ

գԱտուած սիրենք. բայց միք խելք բանեցրնելը գԱտուած սիրել է : Ո՞վ կրնայ ըսել քե խելքը ինքզինքը կուրանայ՝ երբ խրատ կուտայ մեզի որ աղօթք ընենք որպէս զի Ատուած լեցրնէ մեր սիրտը այնպիսի սիրով որ իր երախտեացը փոխարեն երախտագիտութիւն սեպուի :

Բնական խելքը կըցուցրնէ մեզի քե այս ինչ գուարճութիւնը խաբէական բան է, եւ սակայն նոյն գուարճութիւնը գմեզ գլխէ կըհանէ. խելքը կըստիպէ գմեզ որ այս ինչ բարիքն ընելով խեղճերուն՝ անոնց ունեցած պարտքերնիս կատարենք, եւ սակայն նոյն բանին համար քաշուելու աշխատանքներն ու դժուարութիւնները ձեռքերնիս կըկապեն : Կըտեսնենք քե բարին որն է, եւ ջենք կրնար ի գործ դնել՝ առանց այն գորութեան որ Ատուած միայն կրնայ տայ մեզի :

Քրիստոնեական ճշմարտութեանց հաւատալու համար՝ մեր սրտին մեջ գրեթէ նոյն շարժմունքները կըպատահին՝ ինչ որ տեսանք սիրոյ գգացման եւ ուժի կամ գորութեան վրայ որ հարկաւոր են մեզի :

Վասն զի Աստուած քող կուտայ որ իրմե
 առած խելքերն իս բանեցրենք, խելքն ալ
 կառաջնորդէ մեզի՝ քրիստոնէութեան ա-
 պացոյցները ճանչնալու . եւ սակայն, քե
 որ անկեց առաջ եկած հաւատքին մի
 միայն հաստատութիւն այս յեղյեղուկ՝
 հպարտ ու տկար խելքն ըլլայ, շատ դժ-
 ւար է որ հաստատուն բռնենք ու ան-
 փոփոխ պահենք այն սկզբունքն որ խելքը
 մեզի կը սորվեցընէ . այս ինքն, երբոր գի-
 տենք քե բան մը յայտնուած է մեզի, անոր
 վրայ տարակոյս հանել չըլլար : Ատեն ա-
 տեն տարակոյսներ պիտի ունենանք .
 բայց այս տարակոյսները (գէր եւ այնպէս
 կարծեմ) չէ քե ընդհանրապէս հաւատոյ
 ճշմարտութեանը վրայ կըլլան, այլ քանի
 մը խորհրդաւոր մասանց վրայ որ մենք
 մեր այլանդակ հետաքրքրութեամբը քննել
 հասկընալ կուզենք : Այս տարակոյսները
 մենք պիտի վճռատենք, իրենք նորէն պի-
 տի գան՝ զմեզ անհանգիստ ընեն . մեր հա-
 ւատքին քույրքենէն պիտի քույնան նաեւ
 մեր աստուածօրութիւնը եւ պատուիրա-
 նապահութիւնը . եւ անհա Աստուած հաւա-

տով կազատե գմարդ այս գերութեան վիճակէն՝ որ քրիստոնէի մը ջվայեր :

Ս.դեկ նայինք, չըլլայ թէ կրօնը այնչափ նուաստացրնենք որ մարդկային գիտութեան մը տեղ սեպուի: Սպա թէ ոչ, հարկ պիտի ըլլայ մոռնալ թէ ամենաբարին Աստուած իր կարողութիւնը ինչ կերպով ի գործ կըդնէ որ մեզի օգնութեան հասնի: Մէյմը որ տեսնենք թէ Աստուած իր օրէնքներն ու պաշտօնը աշխարհք բերեր է, ինչ խելքով կրնանք ըսել թէ Աստուած երկնքի բաներուն միայն կըխառնուի, եւ մեզի հետ ամենեւին վերաբերութիւն չունի: Կրօնն ու աստուածապաշտութիւնը մեր սրտին մէջ տողորողը նա միայն է որ այն կրօնը հնարեր է, այս ինքն Աստուած: Հաւատոյ ազդեցութիւններն ու պարզ կարծիքը նոյնչափ տարբեր են իրարմէ՝ որչափ որ տարբեր են անոնց աղբիւրները: Հաւատքը մարդուս սրտին այնպիսի անխընով հանգստութիւն մը կուտայ որ կարելի բան չէ մարդուս ինքիրմէ գտնել: Կարծիքը որովհետեւ բնական խելքին պատճառաբանութենէն գատ ուրիշ հաստատու-

քիւն ջունի, վտանգի մը գայուն պէս՝ կրխախտի, իմաստակութեան մը հանդիպելուն պէս՝ տակն ու վրայ կըլլայ. միայն հաւատքն է որ առաքեալներ ու մարտիրոսներ կըծնանի:

Հիմա տեսնենք թէ հաւատքը քրիստոնէութեան սքանչելի կարգին մէջ ինչ բարձր աստիճան բռնած է, եւ՛ աղեկ հասկընանք այս առածս թէ Քրիստոնէայ ըլլալու համար՝ բաւական չէ խելք բանեցընելը, պէտք է նաեւ աղօթք ընել: Խոնարհ ու աներկմիտ աղօթքին ձայնով շնորհքը երկնքէն կ'իջնայ, հաւատքն ալ անոր հետ:

Ոչ երբեք մտքերնեւ հանենք թէ Աստուած կամեցեր է մարդկանց վրայ միշտ ազդեցութիւն ընել. ասիկայ իր բարերարութեանց ամենէն մեծն է, վասն զի ասով ալ է որ մեկայ բարիքները կըվայելեն մարդիկ:

Զվախնանք քրիստոնէական ամեն սկզբունքներն ալ բարձր ձայնով հռչակելէն, թեպէտ եւ ոմանց խելքին տղայական խաղեր երեսնան՝ վսեմ բաներ ըլլալնուն

համար : Ուստի համարձակ վստահութեամբ կրտսմ. բոլոր աշխարհիս պատճառաբանութիւններն ալ մեկտեղ գան՝ չեն կրնար հաւատոյ տեղը բռնել. իսկ հաւատքով կրնան աւելորդ ըլլալ բոլոր մեր քննութիւններն ու ուսմունքները՝ քե որ Ս.մենակարողը կամենայ հաւատոյ շնորհը պարգևել մեզի : Այսպէս ահա այս շնորհքս ընդունեցաւ այն մարդն որ քրիստոնէութիւնը տարածելու պաշտօնը պիտի առնէր, այն Պօղոսն որ, բանաստեղծի մը զօրաւոր գրուցուածքին պէս « Անկաւ հալածիչ, եւ կանգնեցաւ առաքեալ : »

ԺԲ .

Այն ուամկօրէն « ածխապիւճառի հաւատք » ըսուածը այնչափ մխիթարութիւն առաքինութիւն, ու նաեւ գիտութիւն եւ լուսաւորութիւն կը ծաւալէ աշխարհիս երեսն որ բազմահատոր գրքերուն եւ անոնց մեկնութիւններուն մեջէն չեն կրնար ելլել : Եւ սակայն ուսումնական մարդը պետք չէ

որ առանց խելք բանեցրնելու՝ որ եւ իցե
կարծիք բռնե ու երբայ. ապա թե ոչ, այն
իր անհոգութիւնը յանցանք ու անխտորու-
թիւն կըլլայ. իր ունեցած ուսումն ու կա-
րողութիւնը կըպահանջեն որ իբրեւ լու-
սաւորեալ քրիստոնեայ՝ Աստուծոյ ոտքը
խոնարհի :

Ձեմ ուզեր ասով ըսել թե հարկաւոր է,
կամ գոնե օգտակար բան է, կրօնի նիւթե-
րուն մեջ իմաստուն ու գիտուն ըլլալը :
Մեյմը որ հիմնական ճշմարտութիւնները
լաւ մը հասկընանք եւ անոնց մեր վրայ
դրած պարտքերը կատարենք, երկայն
երկայն քննութիւններու ջանցընենք այն
ժամանակն որ աղօթքի ու բարեգործու-
թեան անցընելը շատ աւելի լաւ է : Մեր
անկատար ուսմունքները կրնան գմեզ
այնպիսի կիսկատար տեղեկութիւններու
մեջ ձգել որ մոլորութեան ու հպարտու-
թեան մեյմեկ աղբիւրներ են : Աշխա-
տանքներ կան որ մարդու սգուխը կըտաք-
ցընեն ու սիրտը կըպաղեցընեն : Վիճա-
բանական կոխները ջսիրենք, եւ Աւետա-
րանը բնագանցական գրքի մը չդարձը-

նենք: Երբոր կըսենք թէ « Տեր Աստուած,
հեռացուր մեր մտքէն տարակոյսները »
աւելցրենք նաեւ այս խօսքս թէ « եւ բա-
րակ խնդիրները : »

ԺԳ.

Ո՛րչափ վեճեր՝ կռիւներ եղած են մարդ-
կային կամաց ազատութեանն ու շնորհաց
վրայ. եւ սակայն ուղիղ սրտով հասկըցո-
ղին համար՝ թերեւս ասկեց պարզ եւ դի-
րին բան չկայ: Մեր ազատութիւնը մենք
նոյնպէս յստակ կերպով կըզգանք կիմա-
նանք՝ ինչպէս որ յստակ կըհասկընանք թէ
կանք. միանգամայն կըզգանք նաեւ մեր
տկարութիւնը, եւ թէ կարօտ ենք ուրիշի
օգնութեանը: Քանի քանի անգամ եղած է
որ բարին ուզեր ենք, եւ մտքերնուս մեջ
որոշուած բանը գործադրելու կարողու-
թիւն չենք ունեցած: Քանի քանի անգամ,
վտանգներու եւ ճախորդութեանց մեջ, այս
աշխարհիս օգնութեանցը ունայնութիւնն
ու ոչնչութիւնը տեսած ենք: Մարդս բնա-

կան ազդեցութեամբ մը աչուրները դեպ ի
երկինք կրդարձրնէ. ծածուկ ձայն մը կայ
որ կըսէ իրեն քէ հոն է կենաց եւ գորութեան
եւ լուսոյ աղբիւրը :

Բայց քէ արդեօք մեր գործողութեան
մէջ մեր կամաց ազատութիւնը ճրջափ ոյժ
ունի. շնորհքը ճրջափ ոյժ ունի. այս կա-
րողութիւնը եւ այն օգնութիւնը ինչպէս
կրնան մեկտեղ կենալ՝ առանց մեկզմեկ
վնասելու. — այսպիսի խնդիրները մարդ-
կային խելքով չեն կրնար լուծուիլ. եւ ճր-
ջափ ալ ետեւէ ըլլամ ասոնց խելք հասցը-
նելու՝ չեմ կրնար, ինչպէս որ ան ալ չեմ
հասկընար քէ ինչպէս կըլլայ որ Աստուած
ամեն տեղ է :

Գոն ըլլանք այսչափս գիտնալով քէ մեր
կամքը ազատ է, եւ քէ կրնանք շնորհք
ընդունիլ. նայինք որ ինքնահաւան հե-
տաքրքրութիւններով այսպիսի պարզ եւ
պայծառ խնդիրները մենք չմըքընցընենք:
Թէ որ ասոնց վրայ հակաճատութիւն բա-
ցուի, ինչպէս որ շատ անգամ կըստատա-
հի, նայինք որ քիչ վեճ ընենք, եւ սերը
սրտերնուս մէջ չպաղի :

ԺԴ.

Քրիստոնեական ճշմարտութիւնները սորվող աստուածեանը այնպիսի գաղափարներու մէջ կրմտնէ որ իրեն համար նոր են, եւ ատեն պէտք է որ իր միտքը անոնց վարժի, հետերնին ընտանենայ : Սակայն թէ որ պարզ եւ անկեղծ սրտով ճշմարտութեան ետեւէն իյնայ, քիչ ատենէն կիմանայ թէ որչափ խաբեական ու սուտ է այն մեղադրութիւնն որ կրնէր թէ քրիստոնէութիւնը մարդուս խելքին խըղդուիլը կուզէ : Ուրիշ մոլորութիւն մը կայ որ թերեւս անկեց ալ աւելի տարածուած է : Շատ մարդիկ կրվախնան մտքերնին լուսաւորելէն. կրօնը իրենց համար ցնորական երեսոյք մըն է որ անհանգիստ կրնէ կամ կրվախցընէ զիրենք. կրսեն ալ թէ կրօնէն անոր համար հեռու կրվախցինք որ ախարութիւն կըրերէ մարդուս վրայ :

Ուրեմն Քրիստոսի կրօնը փոխուած

պիտի ըլլայ : Առաքեալները զանազան
ազգաց մեջ քարոզելու գնացած ատեննին՝
կրսեին անոնց քե « աւետիս տալու եկեր
ենք ձեզի : » Աղքատը քաջալերուեցաւ
յուսով, գերին իր կապանքը թուլցած տե-
սաւ, եւ մի եւ նոյն աղքատին կրօնը հարըս-
տին ալ կրօնն եղաւ ու կրսորվեցրնէր ա-
նոր քե հարստութիւնը ինչպէս պիտի վայ-
ելէ : Եղբայրսիրութիւն բառը սովորական
բան մը դարձաւ որ հասկըցրնէ քե նոր
տեսակ սեր մըն է՝ զմարդիկ իրարու հետ
միացրնելու համար եղած :

Իրաւ է որ քրիստոնեւութեան առաջին
դարերուն մեջ մեծամեծ թշուառութիւններ
պատահեցան : Կռապաշտութիւնը Քրիս-
տոսի դէմ եղաւ, մոլորութիւնը ճշմարտու-
թեան դէմ պատերազմ բացաւ, եւ մար-
տիրոսաց արիւնը կրկեսներու հրապա-
րակներու եւ կախադաններու վրայ թա-
փեցաւ : Բարբարոսները հեղեղի պէս
չարձակեցան կոխեցին Եւրոպան, շատ
մարդիկ անապատները փախան եւ ամալի
տեղերը շենցուցին : Բայց աշխարհիս ե-
րեսը պատող տխրութեան պատճառ՝ կրօ-

նը չէր . կրօնը մարտիրոսաց ճակատը
գուարբուքեամբ կրպայծառացըներ, բար-
բարոսաց բնութիւնը կրկակրողըներ եւ
յաղքականները կընուաճէր . կրօնն էր որ
անապատները քաշուող ճգնաւորաց խա-
ղաղութիւն եւ հանգստութիւն կուտար՝
ամէն բանէ զուրկ եւ աքսորուած ատեն-
նին ... Իսկ հիմա այն թշուառութիւնները
անցած գացած երազներու պէս են, եւ
կրօնը իր կրքած ու մարդ ըրած ժողովուրդ-
ներուն քով անկորուստ մնացեր է . պէտք
չէր օրէ օր աւելի գեղեցկացըներ փա-
ռաւորէր այն վիճակն որ ատենով տանե-
լի վիճակ ընողն ինքը պիտի ըլլար :

Քրիստոսէ առաջ Աստուծոյ ամենակա-
րող զօրութիւնը սուրբ գրոց մէջ , եւ մինչեւ
արտաքին գրոց մէջ անգամ նկարագրը-
ւած էր : Մովսեսի գրած « Եղիցի լոյս »
խօսքին պէս վսեմ իմաստ մը չկրնար ըլ-
լալ . Հոմերոս ալ աստուածոց գլխաւորին
կարողութիւնը մեզի հասկըցընելու մտքով
կրսէ Արամազդայ համար թէ ընքուինե-
րուն շարժելէն Ողիմպոսը կըսասանի :
Միայն քրիստոնէութիւնը կըցաւ Աստուծոյ

մարդասիրութիւնը նկարագրել, եւ Փրկչին մերոյ մեզի սորվեցուցած աղօթքը « Հայր մեր » ըսելով կըսկսի :

Աւետարանն որ բանամ՝ կրնայ մեկէն այս խօսքը աչքիս զարնել. « Եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից գծեզ : »

Այս կերպով մեզի հետ խօսողը՝ երբեմն կըպատմէ թէ ինչ մեծ ուրախութիւն կըլլայ երկինքը երբոր մեղաւոր մը դարձի գայ, ուրախութիւն մը որ աւելի մեծ է քան թէ արդարներուն անմեղ մնալուն ուրախութիւնը. երբեմն կըպատմէ անառակ որդւոյն առակը, եւ կամ այն առատաձեռն տանտիրոջ պատմութիւնն որ խիստ ուշ ատեն այգին գնացող աշխատաւորներուն ալ նոյն վարձքը կուտայ՝ ինչ որ առաւօտանց կանուխ աշխատիչ սկսողներուն համար որոշուած է : Շատ անգամ ալ առակներով ջէ, հապա իրական դէպքերով մտքերնիս կըլուսաւորէ ու սրտերնիս կըկակըղցընէ Քրիստոս : Հրեայք իր առջեւը կըբերեն մեղաւոր կին մը որ քարկոծել կուզեն. գետնին ե-

րեսը այս խօսքերս կրգրէ. « Ձեր մեջէն մեղք չունեցողն ո՛վ է նե՛ր քող առաջին քարն անիկայ նետեատոր վրայ: » Ամենքն ալ կրպապանձին, ու մեկիկ մեկիկ կրքաշուին կերբան: Յիսուս կըտեսնէ որ կինը մինակ մնաց, կըսէ իրեն. « Գնա, ու մեյմալ մեղք մի գործեր: » Ի՛նչ արդարացի պատասխան այն ամբաստանիչներուն. ինչ արդարութիւն եւ ճրջափ քաղցրութիւն այն ամբաստանեալ կնոջը համար:

Մեզի ըրած անբաւ բարեացը փոխարէն՝ Աւետարանին Աստուածը մեզմէ սեր կրպահանջէ: « Մեր ունեցողն օրէնքը պահած կըլլայ » կըսէ Պօղոս առաքեալ. « Սիրէ, ու ինչ որ կուզես ըրէ » կըսէ սուրբն Յգոստինոս. ինչ գեղեցիկ խօսքեր որ զմեզ այսպիսի սիրտ քաշող իմաստներով պարտքերնիս կատարելու կըյորդորեն. վասն զի սիրողը՝ փափաքանօք կըկատարէ իր սիրելոյն ամեն ուզածն ու ախորժածը: Սակայն մենք այնչափ տկար ենք որ շատ անգամ կըմոռնանք Աստուծոյ պատուիրանները՝ քեպետ եւ զինքը կըսիրենք, եւ կամ առանց մոռնալու՝ այն

պատուիրանքները ոտքի տակ կառնենք
ակամայ կամօք : Եւ անա մեզի բողոքիւն
առնել տուողն ալ դարձեալ սերն է : Մե-
ղաւոր կին մը բերեր էին Փրկչին ոտքը՝
զղջացած ու բոյոր սրտով դարձի եկած .
ինչ ըսաւ անոր համար . « Ատոր շատ
մեղքերուն բողոքիւն եղաւ, վասն զի շատ
սիրեց : »

Այսչափ գբութեան եւ ողորմութեան
խօսքեր որ կարդամ, ոչ միայն մտքես
ջանցնիր քե կրօնը տխրական բան է, հա-
պա նաեւ իրաւցրեկ կը վախնամ որ չըլլայ
քե մենք որ արդէն պատրաստ ենք սրտեր-
նիս հանգիստ բռնող մտածութիւնները
սիրելու եւ ինքզինքնիս խաբելու՝ Աւե-
տարանի վարդապետութիւնը ամբողջ
չընդունինք . կը վախնամ որ չըլլայ քե
Աստուծոյ անհուն բարութիւնը մոռցրնել
տայ մեզի իր անփոփոխելի արդարու-
թիւնը, եւ « Թողութիւնը միշտ պատրաստ
է » ըսելով՝ այնպիսի հօր մը գբութիւնը
չարաչար չգործածենք, ու մեծապէս ջմե-
ղանչենք՝ անհոգութեան գարնելով ու իրեն
դեմ մեղանչելով :

ժե.

Ի՞նչ է պատճառն որ կրօնը մեզի տխրական բան մը կերենայ. — ամօք ալ ըլլայ նե՛ պետք է որ ըսենք : Կրօնը աստուածային բարութեան ծնունդն ըլլալով, քաղցր սրտառուջ, ու մխիթարական է. տազնապի տեղ հանգստութիւն կուտայ, դառնութեամբ ու ապաշաւով լեցուն հեշտութեանց տեղ՝ գուտ երջանկութիւն մը կուտայ : Բայց մենք ասով գոհ չենք ըլլար. մեր ուզածն այս չէ. հապա ինչ կուզենք. ըսենք համարձակ. — կուզենք որ կրօնը բողտայ որ գմեզ խաբող ամեն բաները հանգիստ սրտով վայելենք, եւ այնչափ ներողամիտ ըլլայ մեզի որ հեշտութեանց հետ գտնուող եւ անոնց ետեւէն եկող անհանգստութենէն ալ ազատե գմեզ. կուզենք որ գայ գմեզ մոլութեան մեջ օրէ ու քնացրնէ :

Իրաւ որ ասիկայ անխելքութեան ծայրն

է: Քրիստոնէութիւնը ամեն դիւրութիւն կրնայ տայ մեղաւորին՝ բաց ի վատ կամակատարութեանց: Մեղանչեցիր, լացողբա. քու անձնապաշտութեանդ, հպարտութեանդ, բարկութեանդ գերի եղեր ես, խորտակե այդ գարշելի լուծը: Բայց միք խորտակելու արժանի լուծ մը ունենայդ պէտք է կրօնին յանցանք սեպես:

Կրօն եւ աստուածապաշտութիւն ըսածդ մենք իր սիրովն ու բարերարութիւններովը միայն կրճանչեանք. եւ թէ որ առանց առաջնորդի բախառական պտրտելով մոլորեր ու ողբալի վիճակի մը մեջ ընկեր ենք, պատճառն այն է որ գինքը մոռցեր էինք: Բայց թէ որ ուզենք, դարձեալ պատրաստ է աստուածապաշտութիւնը օգնելու, մխիթարելու, եւ գմեզ մեզի հետ հաշտեցրնելու: Զմեզ կործանողը մեր մոլորութիւններն ու յանցանքները, մեր կիրքերն ու մոլութիւններն են. աստուածապաշտութիւնը թէ կրնայ եւ թէ կուզէ գմեզ նորէն կանգնել: Ուրեմն տրամութեան պատճառը մեզմէ է ու մեր մեջն է. եւ կրօնը տխրական բան է ըսենք նէ, մեզի սեպ-

հական եղած յանցանքն անոր վրայ կըձր-
գենք :

ԺԶ.

Պատանեկութեանս ատեն առանձին
տեղուանք քայել պտըտիլ շատ կըսիրէի,
գուարճալի դիրքեր կըփնտոէի, եւ աչքս՝
սիրտս՝ երեսակայութիւնս անոնցմով կը-
գմայէր, վասնզի շատ յարմար էին անոնք
իմ պարզ ու յստակ եւ անոյշ անոյշ մտա-
ծութիւններուս : Այն ատենները՝ քե որ
յանկարծ խաչ մը տեսնէի բլրակի մը
ծայրը կամ անցնելու ճամբուս վրայ, աչքս
մեկդի կըղարձընէի. այս տեղուանքս որ
Աստուած այսպէս գեղեցիկ ստեղծել ուզեր
է՝ ես ինչո՞ւ տխրեցընեմ կըսէի՝ դատա-
պարտութեան գործիքի մը վրայ նայե-
լով... Սրտիս մեջ զգուում մը կար որ զիս
տակնուվրայ կընէր :

Նոյն փրկագործ նշանը բոլորովին նոր
կերպ շարժում մը տուաւ սրտիս մեկ օր
մը որ նաւահանգստի մը բերան՝ լապտե-

րին մօտ կանգնած անագին խաչ մը տեսայ : Ա՛հ, ըսի ինքնիրենս, ժայտերու ծայրը, փոքորիկներու առջև ինչ աղէկ տեղ դրուած է այս յուսոյ նշանը : Այիքներու դէմ կուրատող նաւորդները հետուանց կըտեսնեն ասիկայ ու իրենց բարեխօս կըբռնեն. նոյն ատեն անոնց կանայքն ալ այդ նշանին չորս դին կեցած՝ իրենց ողբերովն ու աղօթքներուն ձայներովը բոլոր ծովեզերքը կրհնջեցընեն :

Երբ նորէն իմ գեղեցիկ դաշտերս բլուրներս տեսայ, փոքորիկներուն յիշատակը միտքս եկաւ : Զուարճայի տեղեր են ատնք՝ ըսի, բայց արդեօք հոս բնակողները ամենեւին կրելու կամ վախնալու ցաւեր չունին : Աշխարհիս երեսը տեղ մը կա՞յ որ իրեն համար փոքորիկներ չունենայ : Ո՛վ պատուական խաչ Փրկչին մերոյ, օրհնեալ ըլլայ այն ձեռքն որ կըկանգնէ գքեզ վշտահար մարդուն անցած տեղերը :

ԺԷ .

Հին ատենի փիլիսոփայութեան ամենէն պատկառելի սեպուած դպրոցը, որ Հոովմայեցոց արուած ժամանակին ալ մեծամեծ մարդիկն անկեց կեցէին, այսինքն ստոյիկեան փիլիսոփայից աղանդը, կրջանար որ մարդս անախտ եւ անկարեկիր ընէ : Քրիստոնեութիւնը անկեց ճրջափ աւելի յարմար է մարդուս բնութեանը : Աստուածպաշտութիւնը կարեկից կըլլայ մեզի մեր վշտացը մեջ, եւ մեր սրտին ցաւերը թեթեցընող արտասունքներուն իրաունք կուտայ :

Յիսուս նեղութիւն քաշեց մեզի պէս, մեզմէ աւելի ու մեզի համար : Երբոր ամենակալին Աստուծոյ արդարութիւնը լի սպառնալեօք եւ արհաւրօք առջեւնիս կելլէ, եւ վրանիս սարսափ կըձգէ, Աստուածն մարդացեալ երկնային զբութեան օգնութիւնները կըմօտեցընէ մեզի : Ոչ այնպիսի պատու իրանքներ եւ ոչ այնպիսի օրինակ-

ներ տուած է մեզի որ պարտաւորինք այս աշխարհիս աղետիցը դեմ անզգայ ըլլալու: Յիսուս իր քշնամեաց ձեռքը մատնուելու մօտ ատենը քանի մը վայրկեան առանձնանալ կուզէ. Գեթսեմանիին դրանը քով կրթողու աշակերտները, կապսպրրէ իրենց որ արթուն կենան ու աղօթք ընեն: Ոչ միայն չճածկեր իր սրտին տազնապը, այլ եւ այս խօսքս կըսէ որ սաստիկ տրտմութեան նշան է. « Տրտում է անձն իմ մինչեւ ցմահ: » Ձիթենեաց լեռան վրայ միս-մինակ կեցած՝ ճակտեն քրտինքը աղբիւրի պէս վազելով, « Հնչր կըսէ, անցն յինեն զբաժակս. բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին: » Երեք անգամ կիջնայ՝ աշակերտացը քով կուգայ, երեք անգամուն ալ քուներնին տարած կըգտնէ: Տարակոյս չկայ որ ասիկայ մարդկային բարեկամութեանց ոչնչութեանը յայտնի ապացոյց մըն էր, եւ Յիսուս կուզէ ասով խրատել զմեզ որ յոյսերնիս Աստուծոյ վրայ միայն դնենք: Խաչին վրայ հոգին աւանդելէն առաջ՝ իր դահիճներուն համար աղօթք պիտի ընէ. բայց այս վսեմ օրինակը անպտուղ կըմը-

նար, ոչ ոք կրհաւատար թէ կարելի բան է այս կողմանէ իրեն նմանիլը՝ թէ որ անկեց առաջ Ձիթենեաց լեռան վրայ այնպիսի տառապանք կրած չըլլար: Կրտսեաննք մենք Քրիստոսի վրայ թէ մեր բնութեան տկարութիւնը, եւ թէ այն բարձրութիւնը՝ ուր որ իրեն սորվեցուցած կրօնը կրնայ գմեզ հանել:

Ով որ կրպահանջէ որ մարդս անախտ եւ անկիրք ըլլայ՝ ստոյիկեանի պէս կրխօսի, եւ ոչ քրիստոնէի պէս. այնպիսին աստուածահրաշ օրինակէն վեր բան կրփնտոէ, կրմոռնայ թէ քրիստոնէութիւնը սիրոյ կրօն է, եւ թէ այս կրօնս ճանջնալու համար՝ սաստիկ պիտի զգուշանանք որ սրտերնիս չխատացընենք:

ԺԸ .

Այս բշուտ աշխարհիս մեջ ստեպ ստեպ պատահած փորձանքներուն համար մարդս կարօտ է յուսալու թէ օր մը իր կորսընցուցած սիրելի անձինքը նորէն

պիտի տեսնէ, եւ թէ երկրիս վրայ ձեռացած ողջախոհ կապերը նորէն պիտի կապուին միանան երկինքը : Բայց արդեօք սուտ յոյս մը չէ ասիկայ : Արդեօք իրաւցրնէ մեր սրտին սիրելիները պիտի կարենանք նորէն տեսնել. արդեօք սրտերնուս փափաքը խելքերնուս վկայութեանն այ համաձայն է թէ չէ :

Երբ ուզենք արդարոց մշտնջենաւոր երանութեան բնակարանը մտքերնուս մէջ կերպով մը ձեռացրնել, մեր սրտին ու երեւակայութեան համար ինչ որ կայ զմայելի ու զուարճալի՝ ամեննայ մեկտեղ կրբերենք ու կրսենք վստահութեամբ. Ահա կամ այսպիսի փափկութիւններ պիտի վայելին արդարոց հոգիները, եւ կամ ասկեց այ աւելի մեծ երջանկութիւն պատրաստեր է Աստուած անոնց :

Այս մտածութիւնը՝ որ ամենեւին տարակոյս չվերցրներ՝ զմեզ զոհ պիտի ընէր. եւ սակայն ասիկայ աւելի մեր մտքին հետ կրխօսի քան թէ մեր սրտին կը դպչի. ասով խնդիրը ջուժուիր, եւ ցաւալի տարակոյս մը կայ որ միշտ կրմնայ : Այս

տարակոյսն աւելի ալ կըսաստկանայ՝ երբ մտածենք թէ արդեօք կարելի՞ բան է որ այս աշխարհիս վիշտերը անդին ալ շարունակեն : Քիչ մը որ այս բանիս վրայ մտմտանք՝ մեկէն յոյսերնիս փճանալու պէս կըլլայ : Այն ինչ երջանկութիւն պիտի ըլլայ զԱստուած դեմ յանդիման տեսնելը, երջանկութիւն մը որ բոլոր մեր հոգեկան գորութիւններն անոր մէջ պիտի ընկղմին, եւ ճանչնալու ու սիրելու որջափ կարողութիւն որ ունինք՝ բոլորն ալ անոր մէջ պիտի բաղուին : Փիլիսոփայ մը չկայ, տրամաբան մը չկայ որ ասոր հակառակն ընդունի : Ապա ուրեմն երկրաւոր խաբեպատիր յոյսերէն պէտք է ետ կենայ. ուրեմն պէտք է սեպել թէ մօր եւ որդւոյ, փեսայի եւ հարսին, հօր եւ բարեկամի կապակցութիւնները ըստ ինքեան անցաւոր, անկալուն ու անդարձ կորստեան մատնուած բաներ են... Ո՛հ, սիրտս տակն ու վրայ կըլլայ :

Ելէք արբընցէք քրիստոնէութեան ձայնէն՝ ճվ սիրելի յոյսեր : Մեր զգացմանց մէջ որջափ սուրբ եւ մաքուր զգացմունքներ

որ կան՝ մտքերնուս մեջ եղած բոյոր
բարձր ու վսեմ բաներուն հետ կրնան
շատ աղէկ միաբանիլ: Իմ մոլորութեանս
պատճառ այն էր որ մարդուս հոգին
քանի որ զգայարանաց իշխանութեանը
տակն է՝ պարզ բանը ճշմարտութիւն
կրնայէ. բայց հանդերձեալ կենաց մեջ մեր
հոգւոյն համար ամեն բան պարզ պիտի
ըլլայ: Քրիստոնէութիւնը յայտնի կըցու-
ցրնէ մեզի թէ աստուածատեսութիւնը չփը-
ճացրնէր այն կապակցութիւնները՝ որոնց-
մէ քիչ մնաց որ պիտի հրաժարէի: Հրեշ-
տակներն ու սուրբերը այս աստուածատե-
սութիւնը կը վայելեն, եւ սակայն մեր աղա-
ջանքն ալ կը լսեն եւ Աստուծոյ առջեւ կը
հանեն: Մայրս ինձի համար աղօթք կընէ
երկինքը. եւ թէ որ աստուածային ողոր-
մութիւնը օր մը զիս ալ արժանի ընէ հոն
ընդունելու, եւ ալ իմ որդւոցս համար
պիտի աղօթեմ: Պահապան հրեշտակը աք-
տորանքի մեջ չէ. նոյն ատենի մեջ թէ
երկնային ուրախութիւնները կը վայելէ
եւ թէ մեղաւորին պաշտպանութիւն կընէ:
Յախտենական հրաշայեաց տեսութեամ-

բը մեր քաղցր քաղցր զգացմունքներն
աւելի ալ պիտի քաղցրանան, մեր սուրբ
և մաքուր զգացմունքներն աւելի ալ պի-
տի սրբուին, և ամենեւին պիտի չփճա-
նան այն կապակցութիւններն որ ինքն իսկ
Աստուած սուրբ ըրեր է նաև այս աշխար-
հիս վրայ :

ԺԹ .

Մեր գողգոջոտ ոտուրները շխտակ ճամ-
բուն մեջ հաստատ պահելու ամեն բանէ
աւելի զօրաւոր հնարք այս ճշմարտու-
րեանս հաւատալն է քե Աստուած որ ամեն
տեղ և ամեն ժանանակ ներկայ է՝ մեր
գործքերը կրտեսնէ, խօսքերնիս կրլսէ և
մտքերնիս կրհասկընայ : Քրիստոնէութիւ-
նը զայն անաջատ և ծածկագետ դատաւո-
րը մեզի շուտ մը կըճանչցընէ ու կըսիր-
ցընէ իբրև բարեգութ հայր մը որ իրեն
ախորժելի բան մը ըրած է՝ մեր աղէկու-
թիւնը հոգայը. ասով Աստուծոյ վրայ ունե-

ցած վստահութիւնն իս' ապաւինութիւնն իս կըսկսի եւ կամ կաճի :

Երանի այն մարդուն որ իր կենացը մեջ բոլորովին առ Սատուած կապաւինի, ինչպէս որ բնական խելքը մեզի կըսորվեցընէ եւ շնորհքը կըյորդորէ գմեզ : Մենք գրեթէ չենք ճանչնար թէ ո՞ր բանը օգտակար է մեզի. ո՞րչափ դիպուածներ կան որ մենք փափաքանօք փնտռեր ու բոլոր ջանքով փութացուցեր ենք, ու անոնց հետեւանքները ողբալի եղեր են . ո՞րչափն ալ կայ որ մեր վրայ սոսկում կըբերէին, ու ետքը անակնկալ բարեաց պատճառ եղած են մեզի : Ուրեմն զգուշանանք չափէ դուրս բաղձանքներէն ու վախերէն, եւ վստահ ըլլանք մեր երկնաւոր Հօր կամացը վրայ :

Ճշմարիտ քրիստոնեան ազատ կըմնայ այն ամենայն չարիքներէն որ մեր փառասէր' ազան ու ռիսակալ կիրքերէն կըբխին . եւ ոչ իսկ կըճանչնայ այն կասկածներն ու վիշտերն որ աշխարհիս դատմունքներուն բռնաւորութենէն կըծնանին . միայն այն ցաւերը կըբաշէ որ անցաւոր

աշխարհիս մեջ անխորշելի են, եւ իր առ Աստուած ապաւինութիւնը զանոնք ալ կը քաղցրացրնէ: Ամենէն անտանելի ցանայն է որ մարդս այնպիսի անձ մը կը կորսընցընէ՝ որուն առաքինութիւններն ու բարեկամութիւնը հարկաւոր են մեզի. բայց երբոր ապաւինութիւննիս Աստուծոյ վրայ է, այն մեզի ցաւ պատճառող անձը երանական վիճակի մէջ կը տեսնենք, անոր քովն ալ՝ զայն տեղն որ մենք կրնանք ձեռք ձգել:

Մարմնոյ ջարջարանքներուն մէջ այնպիսի ցաւեր կան որ մարդկային հնարքով հանդարտեցընելու ճար չկայ. եւ սակայն տեսնուած է որ առ Աստուած ապաւինութեամբ այն ցաւերը երջանկութիւն սեպւեր են: Քրիստոնեան սիրով յանձն կառնու զանոնք իբրեւ մէյմկլ փորձ՝ որպէս զի արիութեամբ ու Աստուծոյ կամացը հետ համաձայնելով՝ իր հոգին մաքրուի զըտուի: Յաւերուն սասակութեան ատենը հանգստութիւն մը կիմանայ՝ երբոր ամենակարողին Աստուծոյ հրամաններուն սիրով հնազանդիլը կը յայտնէ, եւ կը հաւատայ քե

Աստուծոյ ոչ արդարութեանը չափ կայ եւ ոչ գրութեանը :

Ամենէն սարսափելի վիճակ՝ հոգեվարք մեղաւորին վիճակն է որ աստուածային ողորմութենէն յոյսը կը կտրէ : Ա՛հ, մեր կենացը մեջ որչափ այ երկար ատեն մոռցած ըլլանք մեր պարտքերը, մոլորութեան չափը չանցընենք . Աւետարանը մեզի պարգևող արարչին գրութեանը սպառնինք, որ գոջումն ու յոյսը տեսածին պէս՝ գէնքերը կըրթողու ձեռքէն :

Քրիստոնէութեամբ մարդուս կենաց ամէն տեսակ դիպուածներն այ կըմեկնելին : Թէ որ քրիստոնեան իր միտքը դրած բանին մեջ յաջողութիւն գտնէ, կըմտածէ թէ իր բարի դիտաւորութիւնները քաջաւերողն ու վարձատրողը Աստուծոյ գրութիւնն է. թէ որ չյաջողի, քաջած ձախտողութիւնը սիրով կը քաշէ իրրեւ փորձ եւ կամ իրրեւ պատիժ մը : Այս մեկնութիւնները՝ որ միշտ պատրաստ են՝ կարծեցեալ փիլիսոփայից խելքին դէմ կուգան . չենք վստահիր՝ կըսեն՝ այնպիսի վարդապետութեան որ ամէն բանի մէյմէկ պատասխան ունի : Իրա-

ունք կունենային՝ քե որ այս այ իրենց հնարած վարդապետութիւններէն մէկն ըլլար. բայց ասիկայ վերէն եկած է, եւ մենք որ ասոր վրայ վստահութիւն ունինք՝ գիտենք քե ասոր հեղինակն Աստուած է :

Ի .

Յանդուզն ու բարակամիտ երազատեսներ կան որ տիեզերաց կարգը, մարդկային միտքը, բարոյական զգացմունքը՝ նիւրոյ յատկութիւններովը կուզեն մեկնել, եւ իրենց կարծեցեալ գիտերուն վրայ հպարտացած՝ կրհարցընեն քե ինչ հարկ է որ Աստուած մը կայ ըսուի : Ասկեց աւելի խելացի ու դժուարալոյծ խնդիր այն կըլլար որ մէկը հարցըներ քե ինչ հարկ է որ մարդիկ կան ըսուի :

Անսահման էակը ամենեւին մէկ բանի մը կարօտ չէր : Ովկիանոսին մեջ ձգուած կաթիլ մը ջուրը բան մը կաւելցընէ այն անհուն ծովին վրայ. իսկ յախտենականին Աստուծոյ գոյութեանը վրայ բոլոր

մարդիկ ու բիւրաւոր աշխարհքներն ամենեւին բան մը չեն անելցրներ : Արարչագործութեան խնդիրը մեկ բանով մը միայն կրնայ լուծուիլ ըստ իմ կարծեացս : Ամենակարողութիւնն ու ամենարարութիւնը միացեալ են յԱստուած . եւ անա ամենակարող եւ ամենարարի Էակին բնական բան մը պիտի ըլլայ ուրիշ եակներ ալ հրաւիրել որ զան երջանկութիւնը վայելեն :

Մեծամեծ անձինք տուած են այս մեկնութիւնս : Սրբոյն Օգոստինոսի սքանչելի խօսքերն ասոնք են. «Մի միայն սլարզ եակ՝ որուն համար կեայն է երջանկաբար կեայ . վասն զի քու երանութիւնդ դու ինքն ես... Ինչ բան կը պակսէր քու երջանկութեանդ թէ որ բովանդակ այս արարածները մինչեւ հիմայ ալ ոչնչութեան մեջ ըլլային. ո՞չ ապաքէն քու բարութեանդ անհուն առատութիւնն էր որ ասոնք ի գոյութիւն բերաւ ¹ : »

¹ Խոստովանութիւնք, գիրք Գ, գլ. Գ եւ Գ :

Սուրբն Փրանկիսկոս Սալեզացի նոյն իմաստը կրբացատրէ անոյշ ու շնորհալի գրուցուածքովը: Փրկութեան ճամբուն մեջ դրած հոգւոյն հետ խօսելով այսպէս կրսէ. «Աստուած որ գրեզ այս աշխարհիս մեջ դրաւ՝ ոչ երէ քեզի կարօտութիւն մը ունենայուն համար էր, որ քեզմէ իրեն ամենեւին օգուտ մը չկայ. այլ միայն անոր համար որ քու վրադ իր բարութիւնը ցուցրնէ՝ տալով քեզի իր շնորհքն ու փառքը¹: »

ԻՍ.

Աստուած գմեզ յերանութիւն կրհրաւիրէ, եւ սակայն մեր աչքին առջեւ անդադար երեւցած բաներն են ախտ, մեղք, ցաւ եւ տրտմութիւն. արդեօք Արարչին կարողութիւնը իր գրութենէն պակաս է...

¹ Հրաւեր ի վարս բարեպաշտութեան, Մասն Ա, գլ. Ժ:

Աստուածն ճշմարտութեան ուզելով մարդուս առաքինութիւնը վարձատրել, հարկ էր որ երանութիւնը, եւ միայն ճշմարիտ երանութիւնը խոստանար իրեն : Եւ որովհետեւ այս երանութիւնը չկրնար ձեռք բերուիլ՝ մինչեւ որ անոր փափաքողը չաշխատի ձեռք ձգելու, Աստուած իր արարածոյն գեղեցիկ պարգեւի մը պէս պարգեւեր է կամքին ազատութիւնը : Ուստի մարդս այսչափ ճոխութեամբ ու այսչափ բարեօք լցուելէն ետեւ, կրնայ մինչեւ առաքինութեան բարձր աստիճանին հասնիլ՝ որ ամենայն բարեաց գլուխն է. եւ քե որ աշխարհիս երեսը ամեն տեղ տարածուած չարիք կը գտնէ՝ յանցանքն իրենն է :

Թէ որ մեր խօսքին նայելու ըլլաս, ձեռքերնեւ գայ նէ՝ Արարչին գործը մենք պիտի կատարելագործենք : Թէ որ մենք ըլլայինք աշխարհիս ստեղծողը, վիշտնեղութիւն ըսածդ ամենեւին պիտի չգտնուէր, երկրիս բնակիչներուն հանգստութիւնը մէքջ պիտի ջունենար, եւ զուարճութիւնները խառնուրդ պիտի ջունենային : Բայց

այն շինծու կարգաւորութեան տակը ինչ
աստիճանի անկարգութիւն եւ անարգու-
թիւն պիտի տեսնուեր: Վասն զի մեր
դրութիւնը ի գործ դնելու համար, պէտք
պիտի ըլլար որ կամաց ազատութիւն ա-
մենեւին չգտնուի. որով մեր իմաստու-
րեան երեւակայած կատարելութիւնը
բնական կոյր ազդեցութիւն մը պիտի
դառնար, եւ Աստուծոյ ըստ պատկերի
խրում ստեղծած մարդը՝ անասնոց ան-
բանից կարգը պիտի մտներ:

Մարդս որ երկրաւոր արարածոց բա-
զաւորն է՝ առանց ազատութեան կամաց
ուրիշ բան չէր ըլլար բայց երե կենդանեաց
մեջ ամենէն քիչ անկատարութիւն ունե-
ցողը: Ոչ երբեք պիտի հասկընար քե ինչ
է առաքինութիւնը, ինչ է անձնանուեր
նահատակութիւնը, ինչ է երանութիւնը:
Թէ որ արարածոց մեջ բարոյական կար-
գը չըլլար, ստեղծագործութիւնը անարգ
բան մը կըլլար որ չէր ալ վայելէր ստեղ-
ծողին:

Հրեշտակներն որ այնպիսի անարատ
եակներ են՝ շատ ցած կըլլային քան զմար-

դիկ՝ թէ որ կամաց ազատութիւն չունենային. Ռափայէլ հրեշտակն անով Ռափայէլ է որ կրնար Սաղայէլ ըլլալ :

ԻՖ .

Մինչդեռ իմաստուն մարդիկ կրնիանան քրիստոնէութեան հրաշայի շինուածքին գեղեցկութեանը վրայ, եւ անոր հիմնադրին սրտաշարժ պատուիրաններովը կրսնանին, աստուածպաշտութեան քշամիները անոր վարդապետութեանցը դեմ կրյարձըկին, ու երբեմն անոր բարոյականին ալ ջեն խնայեր. չափազանցութեան տարուած է այդ բարոյականը կրսեն, եւ մինչեւ այս ալ կրպնդեն թէ ատոր գործադրութիւնն անկարելի բան է :

Այս իրենց խօսքը հաստատելու դիւրին հնարք մը պիտի ըլլար՝ ձեւաւոր գրուցւածքներուն եւ չափազանցական դարձւածքներուն (որ սովորական բաներ են նորայական լեզուին մեջ) յատուկ նշանակութիւն տալը : Բայց ուր տեսնուած է

այնչափ ապուշ եւ կրօնամոլ մարդ մը որ ըստ գրոյն հասկընայ այս խօսքս, « Եթէ ականքո գայթակղեցուցանէ զքեզ, խլեազնա:» Մեկը չէ եղած որ ըստ բառիցը հասկընայ այս խօսքերս. « Եթէ ոք կամիցի դատել եւ առնուլ զբաճկոնքո, բողի նա եւ զշապիկս. » ապա թէ ոչ, բոլոր աշխարհս չարագործաց ձեռքը պիտի մատնուէր :

Բացի Յիսուսի խօսած լեզուին սեպհական չափազանցութիւններէն՝ այս ալ կայ գիտնալու որ Աւետարանին մէջ մէյմը պատուէրք կան որ պարտքերնիս կըստովեցընեն մեզի, մէյմ՝ ալ խրատք՝ որ ի կատարելութիւն կըյորդորեն, ուստի եւ ամենուն համար չեն կրնար ըլլալ: Անցեալ դարու հեղինակներէն մեկը ջանացեր էր ցուցընել թէ Աւետարանի բարոյականին մեկնիչները՝ տեսնելով որ գործադրելու բան չէ անիկայ, այս զանազանութիւնը հնարեր են. բայց Պերժիէ տուաւ անոր պատասխանն ու ցուցուց թէ Քրիստոս է այն զանազանութիւնը ղնողը¹:

¹ Ստուգութիւն փաստից Քրիստոնէութեան, Մասն Բ:

Նոյն բազմահմուտ եւ իմաստուն աստուածարանը այս ալ կըրցուցրնէ թէ շատ պատուերներ անգամ կան որ ամեն մարդկանց համար չեն տրուած : Կըպատուիրէ Յիսուս իր աշակերտացն որ հոգ ջընեն ամենեւին թէ ինչ պիտի ուտեն, ինչ պիտի հագնին, եւ կըխոստանայ անոնց թէ Աստուած կըհոգայ իրենց պիտոյքը : Թէ որ հրամանը ամենուն համար ըլլար, մարդիկ իրենք զիրենք անհոգութեան տալով՝ աշխատանքները կըդադրէին, ընտանեաց կապերը կըքակուէին եւ մարդկային ընկերութիւնը կըցրուէր կըփճանար : Ուրեմն այս հրամանը միայն աշակերտաց եւ անոնց յաջորդներուն համար էր որ սրբազան պաշտօնը յանձն առած էին, եւ անոնց համար ամենայն կերպով սաստիկ հրաման էր :

Շատ պատկառելի քահանաներ տեսեր եմ որ երկարատեն հալածանք քաշելէն, իրենց երկրին մէջ պահուըտած մնայէն եւ կամ օտար երկիր պանդխտելէն ետեւ, անխոով սրտիւ կըսէին թէ նոյն իսկ անտանելի նեղութիւններու մէջ գտնուած

ատեննիս՝ Փրկչին մերոյ խոստմանը վրայ
եր մեր յոյսը, եւ մեր ապաւինութիւնը ոչ
երբեք պարապ ելած է: Այս որ կըլսեի՝
պատկառանքս ու գարմանքս կաւե-
նար:

ԻԳ.

Բարոյական խնդրոց մեջ ամենէն դժ-
ւար խնդրոյն յուժումը քրիստոնէութիւնը
տուաւ, այս ինքն թէ ինչպէս պետք է ոչ
երբեք հպարտացընել գմարդ, եւ ոչ երբեք
վհատեցընել:

Գիտէ քրիստոնէան թէ ինքը չկրնար
յաւիտենական փառաց հասնիլ՝ առանց
Յիսուսի միջնորդութեանը, ուրեմն ինչ-
պէս կրնայ հպարտանալ: Տկարութեանը
մեջ իրեն օգնութիւն ընողն Աստուած է.
Ինչպէս կրնայ վհատիլ: Այսպէս ահա քրիս-
տոնէայ բարոյագետը երկու ժայռերէն ալ
ազատ կրմնայ, մինչդեռ Քրիստոսի տեա-
ռըն մերոյ վարդապետութեամբը շուսա-
ւորուած բարոյագետներն ամենքն ալ այն

ժայռերուն կրգարնուին ու կրխորտակին :

Քրիստոնեութեան խորհուրդները որչափ ալ անհասանելի ըլլան՝ մարդուս կենաց շատ մը խորհուրդներուն լոյս կուտան : Երիտասարդութեանս ատեն երբ ես ճշմարտութիւնը կրփնտոէի եւ անիկայ կարծես թէ կրփախցէր ինծմէ, մեծամեծ խնդիրներու վրայ կրձգէի աջուրներս. եւ քանի որ կրտեսնէի թէ ինչ անբաւ հեռւորութիւն կայ մարդուս եւ Արարչին մէջ՝ սարսափ կուգար վրաս . ճար մը չէի տեսներ այն խորանդունդ վիհէն անդին անցնելու : Երբեմն կըսէի մտքես թէ այս եւ այն անձինքը որ մարդկային ազգիս մեծամեծ բարիքներ ըրած, առաքիւնութեամբ զարդարուած ու փառօք ճոխացած են՝ կարգէ դուրս մարդիկ եղած պիտի ըլլան . բայց վրան շատ չէր անցներ, կըստիպուէի ճանչնալ թէ անոնց իմ աչքիս այնպէս պայծառ ու փառաւոր երեւնալը՝ գիրենք ինծի հետ համեմատելէս եր. թէ որ անհուն էակին հետ բաղդատելու ըլլամ գիրենք, կըսէի, մեկէն վար կիյնան իրենց բարձր

աստիճանէն, եւ հասարակ ժողովրդեան
հետ կրխառնուին կրմնան : Ուրիշ ցնորք-
ներս ալ խոստովանիմ : Միտքս դրած
ըլլալով թէ մարդ մը չկայ որ այս աշխար-
հես ելած ատենը արժանի ըլլայ երկինք
երբայու, արտառոց կարծիք մը ունե-
ցայ . մտածեցի թէ միայն երկիրս պի-
տի ջրլայ փորձութեան եւ նեղութեան
տեղ, հապա մարդկանց հոգիները զանա-
զան գունտերու մէջ կը պտըտին, եւ հետ
զհետեւ աստիճանաբար անոնց մէջ մաքրը-
ւելեն ետքը հազիւ պիտի կարենան ար-
ժանի ըլլալ Աստուծոյ տեսութիւնը վայե-
լելու :

Քիչ մը ատեն այս անխելք մտածու-
քեանս վրայ զմայլեցայ . մէյժ'ալ յանկարծ
պարզ խորհրդածութեամբ մը խաղք եղայ :
Դնենք թէ, ըսի, մարդս հազարաւոր ու
բիւրաւոր դարեր՝ բիւրաւոր գունտերու
մէջ պտըտի, եւ ամէն մէկ քայլ առնելուն՝
կարգէ դուրս կերպով կատարելութիւն
առնու. միթէ մէկ մազի չափ ալ կրնայ
պակսիլ այն անհազին միջոցը որով անսահ-
ման էակին կատարելութենէն բաժնուած

է ողորմելին: Իմ անճոռնի ենթադրութիւնս նման կընէր զիս այն աստղաբաշխին որ խելքը կորսընցուցած ըլլալով՝ կուգէր սանդուղք մը դնել՝ որպէս զի աւելի մօտէն տեսնէ արեգակը:

Տկարութեանս եւ ունայնամտութեանս վրայ սաստիկ ամբընալով՝ միտքս բերի թէ սրբազան վարդապետութիւն մը կայ որ կըսէ թէ միջնորդ մը կայ Աստուծոյ եւ մարդկանց մէջ. մէկէն ի մէկ այնպիսի ցնցում մը իմացայ որ մութ ատեն յանկարծ լուսոյ ճառագայթի մը մարդուս աչքին զարնուելուն ցնցմանը կընմանի:

ԻԴ.

Այն մարդիկն որ կը պնդեն թէ քրիստոնէութիւնը անիրաւ ու բռնաւորական հաւատք մըն է, դժոխքի պատիժներուն յախտենականութիւնը մէջ կը բերեն: Իրաւցրնէ աչ այս բանիս մեր խելքը աւելի դժուարաւ կը համոզուի. արդեօք ինչ կերպով կընայ այս վարդապետութիւնս միա-

բանից Աստուծոյ բարութեանն ու գթութեանը հետ, եւ կամ նաեւ իր արդարութեանը հետ որ այսպիսի տկար արարածներ ստեղծեր ե ոչնչէն:

Սակայն այս վարդապետութիւնս սուրբ գրոց մէջն է, եւ եկեղեցին նոյնպէս կը սորվեցընէ. այս ալ աւելցընեմ որ ամենայն քրիստոնեայ ազգեր կը հաւատան ասոր, եւ դեմ խօսողները մասնաւոր մարդիկ ըլլալով՝ իրենց խօսքերը ամենեւին ոյժ չունին:

Նայինք որ կրօնը չթուլցընենք, ու ձեռքէն գէնքերը չյափշտակենք. բայց ուրիշ կողմանէ ալ անոր խստութիւնը չաւելցընենք: Ձեմ ուզեր դատել եւ ոչ քննութեան տակ ձգել այն կարծիքն որ ինծմէ շատ աւելի գիտուն մարդիկ վրան վիճարաներ են. միայն մեկ բան մը ըսեմ պարզ կերպով: Թէ որ յաւիտենական փառաց արժանի չեղողներուն ամենն ալ սարսափելի տանջանքներու պիտի մատնուին յաւիտեան, արգելք մը չկայ մտածելու որ քերեւս քիչ են այն մարդիկն որ այսպիսի դատապարտութեան տակ իյնան: Ուղղափառ աստուածաբանից մէջ երկու կերպով հասկը-

ցողներ կան Սւետարանին « Սակաւք են ընտրեալք » ըսածը . երկուքին կողմն ալ երեւելի անձինք կան, եւ եկեղեցին ասոր վրայ վճիռ մը չէ ըրած :

Ուրիշ մեկնութիւն մըն ալ կայ պատժոց յաւիտենականութեանը վրայ որ աւելի սաստիկ կերեւնայ խիստ շատ մարդկանց . բայց եւ կարծեմ քեանիկայ ամենէն ճշմարիտն ու անսխալ դատաւորին արդարութեանը ամենէն աւելի յարմարն է : Սրբակաց եպիսկոպոսի մը այս խօսքերուն վրայ քիչ մը կենանք մտածենք . « Ի՞նչ է երկինքը (արքայութիւնը) . — վարձուց ու երջանկութեան տեղ մը : Ի՞նչ է դժոխքը . — նեղութեան եւ տառապանաց տեղ մը : Բայց քէ ի դժոխս եւ քէ յերկինս զանազան օրեւանք կան . դժոխոց մէջ ըստ զանազան յանցանաց տարբեր տարբեր են պատիժները, ինչպէս որ երկինքն ալ՝ արդեանց եւ առաքինութեանց աստիճաններուն համեմատ՝ վարձատրութիւններն ալ տարբեր են իրարմե՛ : »

¹ Ֆրեսինուս, Քարողք, հատոր Գ.

Ո՛վ դժուարահաւան մարդիկ, որ ամենակարողին Սատուծոյ արդարութեանը վրայ անգամ տարակոյս կրհանեք, միք գրուած չէք « Սատուած ամեն մարդու իր գործոցը համեմատ հատուցում պիտի ընէ : »

ԻՆ.

Առած մը կայ քէ « Արտաքոյ Եկեղեցւոյ չիք փրկութիւն. » շատ աստուածաբաններ այս առածին իմաստը չափե դուրս ընդարձակեցին, շատն ալ ըսին այս խօսքս՝ առանց բացատրութիւն մը տալու. իսկ կարողիկէ հաւատոյ քշնամիները սուտ ձայն մը տարածեցին քէ անիկայ յաւիտենական կրակներու կրդատապարտէ այն ամենայն քրիստոնեաներն որ իրմէ բաժնուած են, մինչեւ այն ամենայն մարդիկն որ Աւետարանը իրենց քարոզուած ալ չէ :

Այս նիւթը պարզելու համար այնպիսի անուանի մարդկանց խօսքերն ունինք որ

ամենեւին տարակոյս չեն վերցրներ: Առաջ անաչառ Պուրտայուին խօսքը լսենք որ վերջին դատաստանի վրայ տուած քարոզին մէջ կրսէ. « Մեկ ճշմարտութիւն մը կայ, ո՞վ քրիստոնեայք, մեկ ճշմարտութիւն մը կայ որ քերեւս ոչ երբեք մտադրութեամբ հասկըցեր ենք, եւ մտքերնուս մէջ չաւ մը պետք է հաստատենք. եւ այս ըսողը եւ չեմ, հապա սուրբն Հերոնիմոս է. այս ինքն քէ Աստուծոյ դատաստանին առջեւը անբաւ տարբերութիւն պիտի ըլլայ մեկ հերանոսի մը մէջ որ քրիստոնեական օրէնքը ոչ երբեք ճանչցեր է, եւ քրիստոնէի մը մէջ որ այս օրէնքը ճանչնային ետքը՝ սրտովն ուրացեր է. եւ քէ Աստուած՝ նոյն իսկ իր արդարութեանը կանոններուն համեմատ՝ շատ տարբեր կերպով պիտի վարուի մեկուն քան քէ մեկային հետ: Ամեն մարդ գիտէ քէ մեկ հերանոս մը որ Քրիստոսի օրինաց քարոզութիւնը չէ լսած, այն օրէնքով պիտի չդատուի. եւ քէ Աստուած՝ քեպետ եւ անփոփոխելի է, բայց հերանոսին հետ բնական արդարութեամբ մը պիտի վա-

րուի, եւ պիտի չդատապարտէ զինքը այնպիսի օրէնքի մը համար որ ինքը անոր չէ հասկըցուցած : Այս է անա սրբոյն Պօղոսի յստակ խօսքերով ըսածը թէ « Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան՝ արտաքոյ օրինացն եւ կորնչին : »

Նոյն մտքին վրայ է նաեւ Ֆենեկոն . « Սուրբն Յովնատինոս անդադար Առաքելոյն կանոնին կրնետելի, կըսէ. այս ինքն թէ « Օրէնքէ դուրս մեղանչողներուն ամենն ալ օրէնքէ դուրս պիտի կորսուին. » միայն այն բանը մեղք պիտի համարուի իրենց՝ որ բանն որ կրնային գիտնալ թէ մեղք է ¹ : »

Կարդինալ Շեվրիւսի վարուց պատմագիրը կըսէ թէ այս անձը մինչդեռ Պոսթոնի եպիսկոպոս էր՝ քանի մը բողոքականներ ուղղափառութեան դարձուց՝ որ շատ անուանի մարդիկ էին, եւ ետքը այս բանս կաւելցրնէ. « Պոսթոնի եպիսկոպոսը հետաքրքրութիւն մը ունեցաւ, կըսէ, որ

¹ Մատենագրութիւն Ֆենեկոնի, հատոր Ա :

խմանայ թէ այն արժանահաւատ մարդիկն որ այնչափ առեն բողոքական հաւատքին մեջ ապրեր են՝ արդեօք մտքերնէն տարակոյս չէ անցած երբեմն որ ջրլայ թէ ծուռ ըլլայ այն հաւատքը, եւ թէ անոր մեջ հանգիստ սրտով մեռնելու յոյս ունին թէ չէ: Հարցուց իրենց, ու այս պատասխանս ընդունեցաւ որ շատ նշանաւոր բան է. մինչեւ այն օրն որ դու գմեզ լուսաւորեցիր ու խրատեցիր՝ ըսին, մեր բարեմտութիւնն ու ապահովութիւնն այնչափ էր որ մտքերնէս ամենեւին մեկ տարակոյս մըն ալ չէր անցներ, եւ առաջին անգամն որ ճշմարտութիւնն երեցաւ մեզի՝ քու ձեռքովդ էր: Այս օրինակը եւ ասոր նման ուրիշ շատ օրինակներ մեծ մխիթարութիւն եղան Գերյարգոյ Շեվրիսի սրտին, վասն զի կրմտածէր թէ ուրեմն շատ բողոքականներ ալ կան անշուշտ որ բարեմտութեան եւ կամ անյաղքելի տգիտութեան մեջ են, որով եւ Աստուծոյ առջեւ մոլորեալ չեն սեպուիր: Միանգամայն կրսէր թէ ուրեմն ներողամիտ պետք է ըլլայ անոնց որ խաբուած են, եւ շատ

զգուշանալու է զանոնք դատապարտելին : Աստուած միայն կրճանջնայ մարդկանց սիրտը կրսեր, եւ այս գաղտնիքը իրեն պետք է բողոնք : »

Այն առաքինի եպիսկոպոսին ունեցած մխիթարութիւնը ճրջափ կրվայի : Ճշմարիտ քրիստոնէին : Այն ինչ սեր է առ մարդիկ եւ այն ինչ վատահութիւն է առ Աստուած որ այս մէջ բերած հատուածիս մէջ կը տեսնուի :

Ֆրեսինուս եպիսկոպոսը, որ կրօնական ներողամտութեան վրայ սքանչելի խրատներ գրած է, կըսէ. « Միութիւն ի հաւատոս, միութիւն ի վարչութեան, կարուղիկէ եկեղեցւոյն յայտնի նշանն է այս. ուստի ով որ անոր հաղորդակցութենէն բաժնուած է՝ եկեղեցին զանիկայ ճշմարտութեան եւ փրկութեան հասարակ ճանապարհէն դուրս կըսեպէ : Այս է ընդհանուր սկզբունքը. բայց միանգամայն այնպիսի սկզբունքներ ալ կան որ առ հասարակ ամենուն ընդունելի եղած են, եւ անոնց նայելով՝ պետք է նախընթաց առածին միտքը չա

հասկընալ եւ նշանակութիւնն ամփոփել¹ : »
Թէ որ այս սկզբունքներուն ամենն ալ մեջ
բերէի, շատ կերկրնար խօսքս, եւ դար-
ձեալ այն Խրատներուն տեղը չէր կրնար
բռնել՝ որ ամբողջ կարդալու է. անոնց հե-
ղինակը սքանչելի կերպով մը, սուրբ գրոց
խօսքերուն հետեւելով, բէ այն անաչառ
խստութենէն կրհեռանայ որ աստուածայ-
ին արդարութեանը դեմ անիրաւութիւն
ու նախատինք է, եւ բէ այն մեղադրելի
անխտութենէն « որ ստութիւնն ու ճշմա-
տութիւնը մէկ կարգի վրայ կըշարէ, ու
ետքը ետքը մոլութիւնն ու առաքինու-
թիւնն ալ մէկ բանի տեղ կըղնէ : » Միայն
այն խօսքը մեջ բերեմ որ հեղինակը իբրեւ
պատասխան մը կուտայ այս հարցմանս .
« Բողոքականաց փրկութեանը վրայ Ե-
կեղեցւոյ բուն վարդապետութիւնն ինչ է : »

« Կարուղիկէ Եկեղեցւոյ հաւատացեալ-
ները կրնամանցընեն Եկեղեցին ի հոգւոյ
եւ ի մարմնոյ կազմուած անձի մը :

¹ Խրատք, հատոր Գ :

« Եկեղեցւոյն մարմին կրտսպուին հաւատոյ դաւանութեան, խորհրդոց հաղորդակցութեան, մի եւ նոյն հովուաց հպատակութեան արտաքին կապերը. իսկ Հոգւոյն սրբոյ ներքին պարգեւները, հաւատքը, յոյսը, սէրը եւ բարի գործքերը՝ Եկեղեցւոյ հոգին են :

« Մարդս Եկեղեցւոյ մարմնոյն մասը կրհամարուի՝ հրապարակական դաւանանքով, իսկ անոր հոգւոյն մաս կրտսպուի իր առանձնական վարքովը ¹ :

« Իրաւ է որ հերետիկոսները Եկեղեցւոյ մարմնէն բաժնուած են. բայց մանր տղաք՝ մկրտութեան ուժովը, ջափահասներն ալ հաւատոյ գլխաւոր մասունքն ընդունելով (երբոր մեկալ մասանց վրայ ալ ունեցած մոլորութիւննին բարեմտութեամբ է), եւ աւետարանական օրէնքը պահելով՝ Եկեղեցւոյ հոգւոյն մասն կրտսպուին . որով

¹ Ֆրեսինուս այս խօսքը եւ ասկեց առաջինը Տը լա Լիզեոն եպիսկոպոսին Աւետարանի մեկնութենէն կառնու :

եւ ոչ երբեք փրկութեան ճանապարհէն դուրս կը համարուին ¹ : »

ԻԶ.

Ես շատ ջեմ զարմանար երբ կըլսեմ քե ուղղափառք բողոքականաց այնպիսի կարծիքներ կընծայեն որ չունին անոնք, վասն զի կըտեսնեմ որ բողոքականք ալ մեզի այնպիսի կարծիքներ կուտան որ ոչ երբեք ունեցեր ենք : Անոնց մեջ շատ մարդիկ կան որ մտքերնին դրած են քե մենք պատկերները կըպաշտենք : Այս մեղադրութիւնն ինծի ընողին պատասխան կուտամ քե « Դուն քու հօրդ կենդանագրին վրայ երբեմն գորովանօք նայած չունիս. մօրդ կենդանագիրը երբեմն համբուրած չունիս : Ի հարկե այն քու մեծարանքդ՝ ներկուած կտաներուն չէր. այն կենդանագիրներն ինչո՞ւ յարգի

¹ Խրատք, հատոր Գ :

են քու առջեղ, վասն զի քու սիրելեացդ կերպարանքները, անոնց խելացի խրատներն ու սրտաշարժ օրինակները միտքդ կը բերեն : Սմտղերտամի մեկ տաճարին մեջ գերեզմաններ, ու Հոյանտիոյ հասարակապետութեանը մեծամեծ ծառայութիւններ ըրած նաւապետներու արձաններ տեսայ : Հայրենասիրութեան այսպէս կրօնի ձեռքով սրբազան բան մը դառնալը վսեմ բան է. եւ որովհետեւ այսպիսի յիշատակները մարդու սրտին մեջ հայրենեաց սերը կը վառեն, ինչո՞ւ համար ուրիշ արձաններ, եւ կամ նոյն արձաններն ալ (քե որ անոնց նախատիպ եղած քաջերը քրիստոնեական առաքինութիւններով զարդարուած էին) պիտի չկարենան մեր սրտին մեջ երկնային հայրենեաց սերը վառել :

Բողոքականք կռապաշտ կըսեպեն զմեզ որ սուրբերը բարեխօս կըրունենք մեզի. եւ սակայն մեր զրուցուածքը պարզ բան է. Սատուծոյ կըսենք քե « Լուր մեզ Տեր եւ ողորմեա. » իսկ սրբոց կըսենք քե « Բարեխօս լերուք առ Տեր վասն մեր : »

Այսքան իրարմէ տարբերութիւն ունեցող խօսքերը յայտնի կըցուցընեն թէ մենք այնչափ անմիտ չենք որ սրբոց օգնութիւնը Աստուծոյ ամենակարողութեանը հետ շփոթենք: Այն բառական չէ. հաւատոյ մասն է նաեւ ասիկայ թէ սուրբերը Աստուծոյ ողորմութիւնը մեր վրայ որ կիջեցընեն՝ Քրիստոսի Տեսնն մերոյ միջնորդութեամբն է, վասն զի ինքն է միայն միջնորդ Աստուծոյ եւ մարդկան:

Բողոքականն ալ կըհաւանի որ բարեպաշտ ու պատուաւոր եւ սիրելի մարդու մը հանդիպած ատեննիս՝ ըսենք իրեն թէ « Աղօթք ըրէ ինձի համար: » Եւ անա նոյն աղաչանքն է որ սրբոց ալ կընենք: Եկեղեցին (ինչպէս որ անունն ալ կընշանակէ) մեծ ազգատոհմ մը կրնայ սեպուիլ՝ բոլոր հաւատացեալներէն ձեւացած. ոմանք երկրիս վրայ կրբնակին, եւ ոմանք երկինքը. ոմանք օգնութիւն կըխնդրեն որ իրենց քաշած եւ քաշելու ննդութիւններուն զիմանան. ոմանք ալ այս աշխարհիս վիշտերէն ազատած ըլլալով՝ Աստուծոյ գրութիւնը կըխնդրեն իրենց տառապեալ

եղբարցը համար, եւ ամենքը մեկտեղ յա-
ւիտենականին Աստուծոյ փառքը կը հրո-
ջակեն: Այսպիսի եղբայրական եւ սուրբ
միութիւն մը քակելը՝ քրիստոնէութեան
վրայէն հարկաւոր մաս մը պակսեցընել
կըլլայ:

Ի՛նչ .

Յուսամ թէ այսուհետեւ աշխարհիս ե-
րեսը հալածանքներ չեն ըլլար, կրօնական
պատերազմներ չեն ըլլար, վասն զի կրօն
ու պատերազմ խօսքերը մեկտեղ եկած
ատեննին մարդուս վրայ սարսափ կը ձը-
գեն. սակայն կրօնից տարբերութիւնը մի
եւ նոյն քաղաքին բնակչացը մէջ, եւ մին-
չեւ մի եւ նոյն ազգատոհմի ընտանեացը
մէջ սոսկալի կոխներ կը ձգեն: Ես յոյս մը
ունիմ թէ այս իննետասներորդ դարը
դեռ չլմընցած՝ նորէն ձեռք պիտի զարնուի
այն միաբանութիւնն ընելու որ Պոսիւեն
փորձեց այնպիսի ատեն մը որ գլուխ հա-
նելն աւելի դժուար էր:

Այս միաբանութիւնն որ յաջողի, երկինք եւ երկիր պիտի խայտան ցնծութեամբ. երե կուզենք որ կատարուի, ջանանք ըլլալ արդար եւ բարեւեր, եւ մեր խարուած եղբարցը հետ անուշութեամբ վարուինք: Ամեն անգամ որ մեկը կրցեր է խոով մարդկանց սրտերը իրարու մօտեցընել՝ մտքերնին ալ դիւրաւ միաբաներ է:

Ձեռն գիտեր թէ որչափ ջարիք կրենն այն մարդիկն որ ընդհանրական եկեղեցոյ սկզբանցը մեջ ջափագանցութիւն կրխառնեն, եւ ասով առանց ուզելու՝ Աստուծոյ խօսքը կայլայլեն: Այն հոգիներն որ քաջալերել պետք էր՝ կըսարսափեցընեն, եւ իրենց կծու լեզուովը՝ քովերնին մօտենալ ուզողները կըհեռացընեն: Իսկ եղբայրսիրութեան ձայնին պտուղները շատ տարբեր են անոնց ըրածէն: Քանի մը տարի առաջ՝ ամերիկացի խարուն մը կար որ ընդհանրական եկեղեցոյ հաւատքին ապացոյցներէն համոզուած էր, բայց բողոքականութիւնը ձեռքէ չէր ձգեր. ասիկայ կըսէր Փարիզու պատուա-

կան ժողովրդապետներն մեկուն թէ
« Ի՞նչպէս ընդունիմ այնպիսի դաւանանք
մը որ կապապրէ հաւատալ թէ իմ հայրս,
մայրս եւ սիրելի բարեկամներս յաւիտե-
նական կրակին մատնուած կըտոջորին : »
Իմաստուն քահանան հասկըցուց այն խա-
բունին թէ եկեղեցւոյ բուն վարդապետու-
թիւնը որն է հոգւոց փրկութեան վրայ .
խաբունն ալ փառք տուաւ Աստուծոյ որ
այն տեղեկութեամբ սիրտը հանգչեցուց,
եւ ուղղափառ եղաւ :

ԻԸ .

Ուղղափառ քահանայից դեմ գանգատ-
ներ կըլլան թէ ամենեւին ներողամիտ չեն
այլակրօն մարդկանց . այս գանգատները
շուտ կըղաղրէին՝ թէ որ մարդիկ աւելի յա-
հասկըցած ըլլային եկեղեցւոյ սկզբունք-
ները, եւ թէ ինչէն է որ քահանայք երբեմն
այն ճամբան կըբըռնեն : Յրինակի համար,
մենամարտութեան մեջ մեռած կամ իրենք
զիրենք մեռուցած մարդկանց եկեղեցա-

կան քաղում չըլլուելուն պատճառաւ՝ ատեն ատեն կոխներ ու գայթակղութիւններ եղած են, եւ շատ մարդիկ անուշ անուշ յանդիմանութիւններ կրենն քահանաներուն. « Աստուած սէր է, կըսեն. ինչպէս կըլլայ որ իր քահանաները չուզեն աղօթք ընել մէկ հոգւոյ մը փրկութեանը համար: Այն մենամարտիկը, այն անձնասպանը մեծ մեղք ըրաւ. բայց մեղքին ու մահուան միջոցը որչափ ալ կարճ եղած ըլլայ՝ կրնայ ըլլալ որ խեղճ մարդը գղջացեր է: Քրիստոնէին պարտքն է որ իր եղբօրը վրայ դատաստան ընելու ատեն՝ ամենայն կարելի բաներուն հաւատայ: Այն տարաբաղդ մարդուն համար դուն չես ուզեր աղօթք ընել, որ անիկայ քերեւս Աստուծոյ ողորմութենէն քողութիւն գտեր է. քերեւս՝ բոյորովին ալ Աստուծոյ հետ հաշտուելու համար՝ ժամանակաւոր պատժոյ մէջ է. այս ասանկ ղնելէն ետեւ՝ միքէ մեծ բարբարոսութիւն չէ անոր համար աղօթք ընել չուզելը: » Այս խրատները այնպէս իրաւացի կերեւնան որ ես ալ մինչեւ որ չհարցուցի առաքինի եւ իմաս-

տուն քահանայի մը՝ ջեի կրցած հասկընայ
անոնց ծոութիւնը:

Ըսաւ ինծի քահանան թէ « Գու պատ-
ճառարանութիւնդ հաստատուն բան մը
պիտի երեւնայ քեզի, բայց հիմը խա-
խուտ է: Մենք աղօթք ընելէն ջենք
քաշուիր. մեկ մարդ մը ինչ յանցանքի
տէր ալ ըլլայ, պատրաստ եմ ես քեզի
հետ մեկտեղ աղօթք ընելու իրեն համար.
Ես ալ քեզի պէս յոյս ունիմ թէ գղջա-
ցած է, եւ թէ անկեղծ գղջումը շատ գօ-
րաւոր բան է: Բայց այն մարդն որ
այնպիսի մեծ յանցանքի մը տէր ըլլալովը՝
կամաւորապէս բաժնեց զատեց ինքզինքը
յեկեղեցույ, հրապարակական գղջում մը
չցուցուց, անոր համար եկեղեցին ալ պա-
տիժ մը կրկապէ անոր, իր հանդիսաւոր
արարողութիւններէն կըզրկէ զինքը: Գու-
ցէ ըսես թէ այդ բանդ ապսպրող կանոն-
ներէն հիմակուան ատենս աւելի վնաս
կըծագի քան թէ օգուտ. ըսել կըլլայ թէ
բարեկարգութեան նիւթ մըն է, եւ կրնայ
փոխուիլ, ուստի կրնաս ասոր վրայ վի-
ճարանիլ: Բայց ինչպէս որ դուն կուզես

որ քաղաքական կանոնները չկարենան
խախտիլ՝ մինչեւ որ օրինաւոր իշխանու-
թիւն ունեցողները գանոնք չվերցընեն
կամ չփոփոխեն, այսպէս հասկընալու է
նաեւ եկեղեցական կանոնաց համար :
Ձերկընցընեմ, այդ ծանր փոփոխութիւնը
առաջարկելէդ առաջ լաւ մտածէ : Այն
մարդը՝ որուն վրայ եւ այլ կըրցախմ դուն
այ՛ սոսկալի ջար օրինակ մը տուաւ.
միքէ օգտակար եւ իրաւացի բան չէ՞ որ
հրապարակական աստուածպաշտութեան
հանդեսներէն զրկուի, եւ տաճարէն դուրս
ձգուելովը անոր յանցանքը ատելի ըլլայ
ամենուն : Անոր ջար օրինակին հետեւիլ
ուզողներէն մէկն այլ չը՞լլար արդեօք որ
այն արժանաւոր պատիժը տեսնելով կանկ
առնէ : Ե՞րբ տեսնուած է, մանաւանդ
մեր օրերը, որ ուղիղ բարոյականը սով-
րեցընէ քէ հարկ չկայ որ այնչափ սար-
սափին մարդիկ այն գործողութիւննե-
րէն որ շատ մարդկանց աչքին անտարբեր
շատին այլ մինչեւ գարմանալի կերեւնան :
Եքէ հիմակուան մարդիկը մտքերնին
այնպէս դրած կերեւնան քէ մենամար-

տութիւնն ու անձնասպանութիւնը հասարակ գործողութիւններ են, եւ ամէն մարդ ազատ ըլլալով՝ իրաւունք ունի գանձնք ընելու, միքէ պէտք չէ որ խելացի մարդը օրհնէ եւ գովէ այն հաւատքն որ Աստուծոյ անունովը կըբողոքէ ընդդէմ այսպիսի եղեոնագործութեանց որ անճոռնի ներողամտութիւն ունեցող մարդիկներէ քաջալերութիւն կըգտնեն աշխարհիս երեսը:

Ի՞նչ .

Ո՛ր մարդն որ հաստատուն կերպով դրած է միտքը թէ Աստուած մը կայ որ իր արարածները կըխնամէ ու կըպահպանէ, կըհասկընայ որ պարտըկան է անոր երկրպագութիւն ընել, երախտագէտ ըլլալ ու սէր ունենալ. բայց այնպիսի ժամանակ մը որ աստուածեան կարծիքը Քրիստոնէութեան դէմ կռիւ կընէ՝ խիստ շատ մարդիկ մտքերնին դրած են թէ արտաքին աստուածաշտութիւնը տգէտ ժողովրդեան միայն կըվայելէ, եւ բան գիտ-

ցող մարդկանց համար ներքին աստուած-
պաշտութիւնը բաւական է :

Իրաւ է թէ մարդուս հոգւոյն պարզ կեր-
պով մը առ Աստուած վերանայը աւելի
զօրաւոր բան է քան թէ մեքենական կեր-
պով երկայն աղօթքներ ընելը, եւ մարմնով
տեսակ տեսակ արարողութեանց ներկայ
գտնուիլը : Այս ճշմարտութիւնը սորվելու
համար՝ փիլիսոփայից գրքերուն կարօտ
ջենք . Քրիստոսի Տեսուն մերոյ Փարիսե-
ցոց տուած մեծ յանդիմանութիւնն ալ
այս էր որ նիւթական կերպով օրինաց
խօսքերուն կապուած էին, եւ որչափ որ
ճիշդ պահէին այն խօսքերը՝ այնչափ ա-
ւելի կրնայարտանային . իսկ այն օրէնք-
ներն ինչ զգացմունքներ որ պիտի արթըն-
ցընէին անոնց՝ խստացեալ սրտերնուն
վրայ ամենեւին ազդեցութիւն չունէին :
Քրիստոս անոնցմէ վեր կըղներ թոյլ
կեանք անցընող մարդիկը, որ կրնային
դեռ զոջումի գալ եւ սեր ունենալ :

Բարեպաշտութիւնը սեր է . բայց այս-
պիսի ճշմարտութենէ մը սուտ հետեւանք-
ներ չհանենք : Վոյթեռ տեղ մը ըսած է թէ

« Մեկ բարի գործ մը աւելի վեր դնելու և քան թէ հաւատոյ վարդապետութեան մը խելք հասցընելը : » Խոհականն Պերժիկ այսպէս պատասխան կուտայ իրեն : « Ասոր չէ ջենք ըսեր. բայց հաւատոյ վարդապետութիւն մը հասկընալը ամենեւին վնաս մը ջըներ բարեգործութեան, ընդ հակառակն կօզնէ անոր, վասն զի աւելի վնեմ պատճառներով կըյորդորէ զմեզ բարիք ընելու, եւ առատ վարձատրութիւն կըխոստանայ մեզի¹ : » Վոյքեոի խօսքին մեջ վարդապետութիւն հաւատոյ բառերուն տեղը դիր կըթութիւն, արարողութիւն բառերը, այն ատեն այս պատասխանիս ճշդութիւնը աւելի լաւ կըհասկընաս :

Քրիստոնեի մը համար արտաքին գործողութիւնները, նաեւ հաւատքն ալ, բաւական չեն : Բարեպաշտական գրքի մը մեջ որ շատին ձեռքը կըպտըտի՝ այս խօսքը կըգտնեմ որ շատ հաւատացեալք պատարագի աւետարանին ատենը կը-

¹ Պատասխանի առ Խրատս բանաւորս, եւ այլն, Ին :

կարդան : « Ո՛վ Տէր, ինչ օգուտ հաւատալէս քե ասիկայ քու խօսքդ է՝ երբ իմ հաւատքիս համեմատ գործք չունիմ : Քու առջեւդ որ ելլեմ ինչ շան պիտի ըլլայ հաւատք ունենալէս՝ երբ ոչ սէր ունենամ եւ ոչ բարեգործութիւն : » Իրաւ է, եւ նոյնպէս անօգուտ բան է շատ մը հանդէսներու ներկայ գտնուիլը, սուրբ խորհրդոց ստեպ ստեպ մօտենալը սովորութիւն մը դարձընելը . անով մարդ աւելի ալ յանցաւոր կրնայ ըլլայ, վասն զի սրբազան բաները չարաչար կը գործածէ ու ոտքի տակ կ'առնէ :

Քրիստոնեայ ըլլալու համար պէտք է հաւատոյ վարդապետութիւններն ընդունիլ, բարոյականը գործադրել եւ աստուածպաշտութեան հանդէսներուն ներկայ ըլլալ : Գիտեմ որ այս երեք բանին մէջ ետքինը ամենէն դիւրինն է, եւ կը ճանչնամ քե ամենէն դժուարն ասիկայ է որ կապսպրէ մեզի՝ վարքերնիս Քրիստոսի խրատներուն յարմարցընել : Օրէնքին այս մասը կատարելու համար՝ պէտք է մեր սրտին մէջ կիրքերը խղդենք եւ

մոլորիւններն անկեց խչենք. պետք է հպարտութիւնը ընկճի, քերեամտութիւնը ջնջուի, եւ անձնապաշտութեան տիրած տեղը սեր բազաւորէ : Բայց բանը այն չէ որ գիտնայ մարդս թէ օրինաց որ մասին պահպանութիւնն աւելի դժուար է, հապա այն է որ վարժի անոնց եւ ոչ մեկ մասին մեջ անհոգութիւն եւ զանցառութիւն ընելու : Բարոյական օրենքը ոտքի տակ առնող քրիստոնէին մեծ յանցանքը այն պիտի ըլլայ որ Աստուծմէ այնչափ օգնութիւններ ընդուներ է, հաւատոյ վարդապետութեանց յայտնութիւններ առեր է, աստուածապաշտութեան կարգեր ունեցեր է, — ու դարձեալ ապերախտ կրգտնուի անոր բարերարութեանցը դեմ : Ո՛հ անմիտ հպարտութիւն. այն բանն որ Աստուած հարկաւոր ճանչցեր է՝ նաեւ իմաստուն մարդկանց, կարծեցեալ փիլիսոփաները նոյն բանը իրենց անօգուտ կրհամարին :

Որչափ որ ճշմարիտ է թէ բարեպաշտութեան բուն տեղը մարդուս սիրտն է, նոյնչափ ալ ստոյգ է որ բարեպաշտ մար-

դը իր մտադրութիւնը հաստատելու եւ սիրտը շարժելու համար շատ օգուտ կը տեսնեարտաքին հանդեսներէն, այս ինքն այն երեսելի նշաններէն որ մինչեւ անհաւաններուն ալ աչքին կըզարնեն, ու անաստուած Տիտոսիին վրայ սաստիկ տպաւորութիւն կընեն: « Ամէն անգամ որ տեսեր եմ՝ կըսե՛ այն զգեստաւորեալ քահանաներուն երկայն քափօրը, այն ճերմակ շապիկներ հագած ու կապոյտ ելայն գօտիներ կապած դպիր տղաքն որ Սրբութեան առջեւը ծաղիկ կըբափեն, այն ժողովրդեան բազմութիւնն որ պարկեշտ լութեամբ անոնց ետեւէն կերբան, եւ այնչափ մարդիկ որ երեսի վրայ ընկած երկրպագութիւն կընեն, ամէն անգամ որ լսեր եմ այն ծանր ու սրտաշարժ երգն որ քահանաները կըսկսին, եւ արանց՝ կանանց եւ տղայոց անհամար ձայները քաղցրութեամբ եւ սիրով առաջ կըտանին, սիրտս ելեր է, ու աջուրներս արտսունքով լեցուեր են¹: »

¹ Ժողով 1765 ամին :

Տիտոսյին բնութիւնն էր որ դիւրաւ կը-
բորնկեր, ու երեւակայութեամբ կըշարժեր
ամէն բանի մէջ. բայց դիտողութիւն ընե-
լու վարպետ Մոնթայնը՝ Տիտոսյէն շատ
առաջ այս խօսքս ըսած է. « Մեկը չկայ
այնչափ խստասիրտ որ քիչ մը պատ-
կատանք չգայ վրան՝ երբոր տեսնէ մեր
եկեղեցիներուն մութ ընդարձակութիւնը,
զանազան զարդարանքները եւ արարու-
թեանց կարգաւորութիւնը, եւ լսէ մեր
երգիոններուն ջերմեռանդական հնչմուն-
քը եւ մեր ձայներուն ծանր ու պատկա-
ռելի ներդաշնակութիւնը: Անոնք անգամ
որ արհամարհանօք մը կըմտնեն եկեղե-
ցիները, սրտերնին կըշարժի, եւ վրանին
դող մը կիյնայ ու իրենց կարծիքներուն
վրայ կըսկսին տարակուսիլ¹: »

Մարդս գիտութեանց ուժովը պարզ
հոգի դառնալու կարողութիւն չունի. եւ
իբ հոգին զգայարանաց մէջ պատած ըլ-
լալով՝ կարօտութիւն ունի որ ներքին

¹ ձաշակք, գիրք Բ, գլ. ԺԲ :

աստուածպաշտութիւնը արտաքին աստուածպաշտութենէն սնունդ առնու. ասոր հակառակը մտածելը՝ դիտողութիւն ընել չէ, երազ տեսնել է :

Լ.

Բարեբարոյ մարդը պարտական է ուրիշներուն օրինակ ըլլալ բարի բան մը ընելու համար. ապա ուրեմն Սատուծոյ հրապարակական պաշտօն մը մատուցանելն ալ մարդուս պարտքն է :

Ուրեւտասներորդ դարուն մատենագիրներն որ հասարակ ժողովրդեան վրայէն սանձն ու կապը եւ շատ մը մխիթարութիւններ վերուցին՝ կրնային այնպիսի պատճառով մը անմեղադիր ընել իրենք զիրենք որ մենք այսօրուան օրս այն պատճառը չունինք : Երբոր անոնք ամբարիշտ հեզնութիւններով իրենց ժամանակին հարուստներուն ու գիտուններուն ընկերութիւնները կը գուարճացընէին, շատը կար որ կարծէին քե իրենց ունկնդիր-

ներն ընտիր ու քիչուր ժողով մի են, եւ կուգին որ կրօնը նոյնպէս պատկառելի ըլլայ ուամիկ ժողովրդեան՝ ինչպէս առաջ պատկառելի էր : Այն ատենները այնչափ որոշ կերպով բաժնուած էին ազնուականները բազմաքիւ ժողովրդէն, ու անոնց մէջ տղած հեռաւորութիւնը այնչափ ահագին կերեւնար, որ ամենեւին դժուարութիւն մը չէին տեսներ ասոր այսպէս ըլլալուն : Իսկ մենք կարելի չէ որ այսպիսի բաներով ինքզինքնիս խաբխարենք : Թէ որ ելլես հիմա ըսես քե « ժողովրդեան համար կրօն պէտք է, » այս խօսքդ նշանակութիւն մը չունենար, վասն զի մեկը չես գտներ որ ուամիկ ժողովրդեան մէջ գտնուի : « Մեծամեծներն ամէն բան գիտեն առանց սովորած ըլլալու » ըսեր էր ատենով կատակերգակ բանաստեղծին մեկը . մենք հիմա ամենքնիս ալ մեծամեծ մարդիկ տղեր ենք : Ուրեմն հիմակուրեւ որոշէ ընելիքդ . կամ յայտնի քարոզէ քե ամէն մարդ ալ կրնայ կրօնը մեկդի ձգել, եւ կամ ամենուն ալ օրինակ տուր քե ինչպէս գործադրելու է կրօնը :

ԼԱ.

Շատ մարդիկ կան որ հրապարակական պաշտօն կատարելու անհոգ կրկան, շատն ալ ընդդիմութիւն մը ունին այս բանիս. ասոր պատճառն է մէյմը իրենց անանկ սովրած ըլլալը, մէյմ' ալ որ կրվախնան քէ անով պարսաւելի կամ ծաղրելի պիտի ըլլան այնպիսի մարդկանց' որոնց կարծիքը, գէթ այս բանիս մէջ, արժանի չէ այնչափ պատկառանաց: Ես սակայն քէ որ մէկը լաւ մտածէ' շուտ մը կրտեսնէ որ զօրաւոր պատճառներ կան այն սովորութեան յաղքելու ու այնպիսի վախը արհամարհելու: Ես այս ալ կաւելցրնեմ քէ հրապարակական պաշտօնը անարատ եւ անտրտում գուարճութեանց աղբիւր է:

Բան մը չկայ քրիստոնէութեան մէջ որ նիւրական միայն ըլլայ եւ մարդու ստրտին վրայ ազդեցութիւն չունենայ: Անոր հանդէսները, արարողութիւնները, որ անհա-

ւանները ջին հասկընար, աստուածպաշտութեան պատմութիւնը կրնկարագրեն, ու քրիստոնէից սիրած մեծամեծ դեպքերուն յիշատակը մտքերնուն մեջ կրնորոգեն: Մեկ արարողութիւն մըն ալ ջկայ որ մարդուս միտքը ջձգէ սուրբ հաւատոյ վարդապետութիւն մը, եւ կամ սիրտը ջքաշէ Քրիստոսի աստուածային խրատներէն մեկուն: Կուգեմ որ իմ ընթերցողներս այս ըսուածներէս աւելի ընդարձակ եւ աւելի ճիշդ տեղեկութիւններ խնդրեն եկեղեցականներէն. անոնք կըրնան ուղղափառ հաւատոյ արարողութեանց փառաւոր տեսարանը բանալ իրենց աջքին առջեւ. կրնան նաեւ հասկըցընել թէ ինջ սքանջելի հայրական սիրով հաստատուած են սուրբ խորհուրդները, եւ ամենաբարին Ս.ստուած ինջ կենդանարար գօրութիւն դրած է անոնց մեջ: Ես միայն արտաքին աստուածպաշտութեան պարզ մասին վրայ դարձընեմ մտածութիւնս:

Աղօթքին պէս գեղեցիկ ինջ բան կայ: Գերագոյն էակին ապաւինիլ, որ միայն

ե ամենակարող եւ ամենողորմ, աշխարհիս փորձանքներուն մեջ իրեն միայն ապաստան ըլլալ, իրեն առջեւ զղջումի գալ եւ իրեն շնորհակալ ըլլալ, իրեն սիրովը վառուիլ եւ ամեն բան իրմէ յուսալը, իրաւցրնէ գանձի մը մեջէն ազնուական մտածութիւններ, փափուկ զգացմունքներ, գմայլելի խորհրդածութիւններ քաղել է:

Սրդ այս աղօթքն որ առանձին նստած մտածողին համար այսչափ քաղցր բան է, հրապարակական պաշտօնիս պատկառելի կերպ մը կառնու:

Բոլոր այն անձինքն որ եկեղեցւոյ մը մեջ երեսի վրայ ընկած, տարբեր տարբեր հասակով, վիճակով, բնաւորութեամբ, նոյն բաները կրճտմտան, եւ նոյնպէս իրենց յանցանքները կրճտածեն ու ներումն ընդունելու յոյս ունին, ամենքն ալ բոլոր սրտանց այնպիսի աղաչանքներ կրնեն որ երկիրս երկնից հետ ու մարդիկ իրարու հետ աւելի սիրով կրնան կապել: Սյն մարդկանց շատը մեկգմեկ ամենեւին չեն ճանչնար, եւ սակայն մեկ-

մեկու համար աղօթք կրենեն: Հոն ջգտնը-
տողներն այ մասնակից են անոնց աղա-
ջանքներուն . իրենց եղբայրսիրութիւնը
հաւատացելոց վրայ ջամփոփուիր, այլ
բոլոր մարդկանց կրտարածուի: Քրիս-
տոնեից մեջ ամենէն խեղճերն այ որ եր-
կրիս վրայ ոչինչ տեղ կըրօնեն՝ բո-
լոր մարդկային ազգիս համար աղօթող
են:

Ո՞վ կայ որ ջհիանայ այսպիսի հրաշալի
քաղաքակրթութեան վրայ: Բայց ասկեց
ի գատ ուրիշ անպատմելի գուարճութիւն-
ներ այ կան որ քրիստոնեական ճշմար-
տութիւններէն հեռու պտըտողները ջեն
կրնար հասկընայ: Այն երկրաւոր ճայ-
ներն որ տաճարը կրննջեցընեն՝ ասելի
այ կը գտուին կազնուանան՝ երկնային
քաղցրաճայնութեանց հետ խառնուելով:
Փափկութեանց աղբիւր մը կայ որ միայն
հաւատացեալք կըճանջնան. այն աղբիւրը
կըգմայլեցընէ գիրենք յուսով ու սիրով:
Ըսած է Փրկիչն մեր քէ « Ուր իցեն երկու
կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ
ես ի մեջ նոցա. » եւ քրիստոնեան իր

եղբարցը հետ աղօթք ըրած ատենը սրտին մէջ կիմանայ թէ այն աստուածային խոստումը կրկատարուի :

ԼԲ.

Կրօնական կրթութեանց վրայ երբեմն, թերեւս նաեւ շատ անգամ, ծուռ կարծիքներ կունենան մարդիկ : Ո՛րչափ անձինք կան որ մտքերնին դրած են թէ այսպիսի կրթութիւնները չափէ դուրս շատցած, տղայական եւ ձանձրալի բաներ են : Քրիստոնէութեան բամբաստողները կերթան ջեմ գիտեր ինչ տեսակ մարդիկ կը գտնեն որ խելքերնին դժբաղդարար ծռած է, եւ զանոնք կառնեն մէջ կը բերեն իբրեւ քրիստոնէական կատարելութեան մէյմէկ ճիշդ գաղափար եւ օրինակ : Տես թէ ինչ կը սեր այս դարուս սկիզբը եպիսկոպոսին մէկն որ ետքը հռովմեական ծիրանւոյն պատիւն ընդունեցաւ . « Յորդորանք, սաստ, սպառնալիք, բանադրանք, զգուշութիւններ, ամեն հնարք կը բանեցընէ Եկեղեցին

որ անօգուտ եւ կամ չափե դուրս մանր մունր ջերմեռանդական կրթութիւնները հեռացրնէ մեկդի ընէ, ու դարձեալ կրմեղադրուի իբրեւ այսպիսի բաներու պաշտպան եւ ջատագով. ինքը այնչափ փոյթ ունենալէն ետքն ալ ներս սպրդած մտած սովորութիւններն իրեն յանցանք կըսեպուին. եւ անիրաւութեան պժգալին այս է որ իր արգիլել չկրցած գեշ սովորութիւններուն պատճառ ինքը կըհամարուի: — Եկեղեցւոյ ճշմարիտ հոգին ոչ երէ այն կարգէ դուրս ջերմեռանդական կրթութեանց մէջ պիտի փնտռես որ ինքը կանարգէ կըմերժէ ու կըդատապարտէ. հասպա այն արարողութեանց մէջ որ քու առջեւդ կըդնէ իբրեւ յարգելի եւ մեծարելի սովորութիւններ, եւ կըպատուիրէ քեզի որ ի գործ դնես զանոնք¹: »

Աստուծոյ պատուիրանքներն ու եկեղեցւոյ պատուերները նայինք. ասոնց մէջ

¹ Տը լա Լիւզեոն, եպիսկոպոս Լանկրի, Յ ա դ ա գ ս Գ եր ա զ ա ն ց ու բ ե ա ն Կ բ օ ն ի :

պահանջուած կրքութիւնները խիստ քիչ են, այնպէս որ դժուար է քե փափկասիրտ անձ մը չփափաքի գանոնք շատ անգամ կրկնելու. նոյն իսկ եկեղեցին ալ կը հրաւիրէ զմեզ այս կրկնութիւնս ընելու՝ երբոր իր պատուերը տալու ատեն գոնէ բառը կը գործածէ : Արգիլած է հաւատացելոց երեւակայական կատարելութեան մը ետեւ իյնալ՝ հրաման չեղած ջերմեռանդութիւններու ետեւ ըլլալով. իսկ երբոր ուզէ մեկը պատուիրեալ ջերմեռանդութիւնները նորէն նորէն կատարել, պարտական է՝ իր վիճակին, գրադանացը, առողջութեանը եւ նոյն իսկ բնաւորութեանը համեմատ փոփոխել գանոնք, եւ ոչ քե ամեն մարդ ալ մի եւ նոյն կանոնին նոյնպէս պիտի հպատակի :

Անա այսպիսի նիւթի մը մեջ է որ մարդս ինքզինքը միայն պիտի մտածէ եւ ոչ զուրիշները : Ով որ գանոնք մեղադրէ, եւ ըսէ քեռանդ չունին, նախանձ աստուած-պաշտութեան չունին, մեծապէս կը սխալի. վասն զի քրիստոնէին վարուց մեկ մասը միշտ անյայտ կը մնայ, որովհետեւ

աջ ձեռքին ըրած աղեկութիւնը ձախ ձեռքը պիտի չգիտնայ :

Մենք բէ որ ներողամիտ կրչանք անոնց որ կերեւնայ բէ բաւական արտաքին ջերմեռանդութիւններ չեն ըներ, ինչո՞ւ նոյնպէս ներողամիտ չըլլանք անոնց որ կերեւնայ բէ չափազանց ջերմեռանդութիւններ կընեն : Երբոր կնիկ մարդ մը տեսակ տեսակ ջերմեռանդական գործողութիւններ կընէ, անոր բնութեամբ կծու, կոռւասեր, անհամբեր, անտանելի ըլլալը անոր համար չէ որ երկար ատեն եկեղեցին կուշանայ, հապա անկեց է որ հոն կեցած ատենն իր պակասութիւնները շտկելու չաշխատիր . անա ասոր դեմ պիտի ըլլայ մեր գանգատը : Բարեպաշտական կրթութիւնները բէ շատ ըլլան եւ բէ քիչ, անոնց օգտակարութիւնը կամ վնասակարութիւնը մարդուս հոգւոյն վրայ ըրած ազդեցութենէն կըջափուի : Կնիկ մարդ կայ որ եկեղեցւոյ մեջ աւելի ալ կուշանայ քան բէ քիչ մը առաջ յիշածս, բայց քաղցրաբարոյ, ներողամիտ ու գրասիրտ է . ամենայն քրիստոնէայ որ կըճա-

նաջէ գինքը՝ անոր առաքինութիւններն ունենալու կրցանկայ, եւ առանց մտածելու թէ արդեօք անոր ջերմեռանդութիւններէն բան մը պէտք է պակսեցընել թէ չէ՝ անորմէ աղօթք կը խնդրէ իրեն համար:

ԼԳ.

Քրիստոնեութիւնը կատարելագործել չըլլար. ով որ միտքը դնէ այս կամ այն կատարելութիւնները պէտք է տալ անոր՝ կայացուի եւ կամ կը խանգարէ քրիստոնեութիւնը: Եկեղեցին դարե դար միշտ անարատ կը պահէ իր ընդունած աւանդը. իր պարտքն է ճշմարտութիւնը տարածել, եւ թէ որ կատարելագործելու բան մը գտնուի՝ նոյն ճշմարտութիւնը տարածելու հնարքներն են որ կրնան կատարելագործուիլ:

Մեր արարողութիւնները աստուածպաշտութեան պահանջած ամեն փառաւորութիւնն ու ճոխութիւնն ունին, եւ կարծեմ թէ հարկ մը չկայ աշխատելու որ անոնք աւելի սրտաշարժ ըլլան. սրբա-

պղծութեան պէս բան մը կրկար՝ զանոնք
քատերական հանդիսի նմանցընելը: Պետք
է որ մարդուս աչուրները այնպիսի բա-
ներ տեսնեն որ մեր հոգւոյն մտմտայու-
նիւթերուն վրայ դարձընեն ուշադրու-
քիւննիս. ասոր հակառակը կը պատահի՝
քէ որ մեր ուշադրութիւնը բոլորովին
արարողութեանց մէջ ընկղմի:

Երէ կուզենք որ մարդիկ աստուածային
պաշտամունքէն օգուտ քաղեն, մէկ հա-
տիկ հնարքն այս է որ նոյն պաշտամունքը
դիւրըմբռնելի ընենք իրենց: Ով որ եկե-
ղեցական արարողութեանց իմաստը գի-
տէ՝ իրեն համար շատ դիւրին է պաշտել
զԱստուած հոգւով եւ ճշմարտութեամբ,
եւ ուղղափառ եկեղեցւոյ արարողու-
թեանցը վրայ եղած պարզ եւ յստակ
մեկնութիւններն ամենքն ալ այս բանիս
համար են: Աստուածային պաշտօնը
կրնայ նաեւ ըստ ինքեան դիւրիմաց կամ
դժուարիմաց ըլլալ: Երկու մաս կը բաժ-
նուի, եւ ասոնցմէ մէկը անփոփոխելի
է: Զոր օրինակ, վեց օրուան աշխատու-
թենէն ետքը օր մը կուգայ որ ծառայա-

կան ըստւած աշխատանք ընելը արգիւած է, վասն զի այն օրը պահուած է հասարակաց Հօրը պաշտօն մատուցանելու եւ մտաւորական կարողութիւննիս գօրացընելու: Արդ այս աստուածային պատուիրանը զանց որ ընենք՝ ըսել է թէ կուզենք ուրանալ այս յայտնի ու վսեմ ճշմարտութիւնս թէ « Ոչ հացիւ միայն կեցցե մարդ. » ըսել է թէ մարդկային ազգը կուզենք նուաստացընել, եւ քաղաքական կրթութեան դեմ դաւաճանութիւն ընել: Բայց նոյն պաշտօնը մեկ մաս մըն ալ ունի որ կրնայ փոփոխութեան տակ իյնալ՝ ըստ պարագայից եւ ըստ զանազան պիտոյից մարդկան: Դարձեալ, աւետարանական առաքեալը անապատներու մեջ քարոզութեան երթալու ատեն՝ քահանայական փառաւոր զգեստները մեկդի կը ձրգէ. եւ ճանապարհորդի գաւազանը ձեռքն առած՝ ամբողջ քրիստոնէութիւնը նոյնպէս կըտանի կըքարոզէ այն անձանօր ժողովուրդներուն որոնց համար որ կեանքը դրեր է: Աստուածպաշտութեան այն մասն որ անփոփոխելի չէ՝ կրնայ փոփո-

խութիւններ առնուլ որպէս զի աւելի
 դիւրիմաց, որով եւ աւելի խրատական
 ու սրտաշարժ ըլլայ. բայց եւ չեմ հա-
 մարձակիր այս սկզբանս մէկ գործադրու-
 քիւնն ալ առաջարկելու, եւ մեծ բշուա-
 ռութեան տեղ կըղենեմ թէ որ ամէն բան
 նորոգելու հոգին քրիստոնէութեան վրայ
 ալ տիրէ: Փորձ եւ իմաստուն հովուապե-
 տաց կիյնայ լաւ մը քննել նայիլ թէ ար-
 դեօք մեր պաշտամանցը մեջ ալ կան
 այնպիսի բաներ որ կատարելագործուելու
 կարօտ են, ինչպէս որ ասոր օրինակները
 կըտեսնենք Գերմանիոյ ուղղափառ եւ
 բարեպաշտ գաւառներէն մէկքանիին
 մեջ: Այսպիսի նիւթի մեջ մարդս որչափ
 զգուշութիւն ալ ընէ՝ քիչ է: Խոովարար
 նորոգիչները երկու մեծամեծ վնասներ
 կըբերեն մարդկային ընկերութեան. մէկը
 իրենք ուղղակի կընեն իրենց անճոռնի
 մտածութիւններովը, մէկն ալ անուղղա-
 կի կընեն՝ գիտուն եւ լուսաւորեալ մարդ-
 կանց սիրտը կոտրելով, որով անոնք ալ
 ետ կըկենան իրենց օգտակար առաջա-
 դրութիւններէն, վախնալով որ չըլլայ թէ

իրենց մտածմունքներն այլ այն կարծեցեալ նորոգողաց յիմարական ցնորքերուն կարգը դրուին :

ԼԳ.

Քրիստոնեական կրօնին կրհաւատամ ես անոր համար որ ճշմարիտ է, ոչ թէ անոր համար որ օգտակար է. բայց օգտակարութիւնն այլ իր ճշմարտութեանը ապացոյց մըն է :

Չափե դուրս յոյսեր են անոնք որ կունենան ոմանք քաղաքական գիտութեան վրայ՝ երբոր մարդկային ընկերութիւնը կուզեն աւելի երջանիկ ընել : Յիսուն տարուրնէ ի վեր շատ աշխատանքներ եղած են որ մեր գաղղիական օրինաց մէջ ազատութիւն մտնէ, եւ խիստ քիչ աշխատուած է զմեզ ազատութեան արժանի ընելու համար : Բազմաքիւ ձայներ՝ ոչ միայն Գաղղիոյ, այլ եւ բոլոր Եւրոպայի ու Ամերիկայի մէջ այս աղաղակը կրհնչեցրնեն թէ « Մարդկանց վիճակը լաւցու-

ցեք : » Գեղեցիկ փափաք . ափսոս որ
անպտուղ պիտի մնայ՝ թէ որ լաւութեան
ճշմարիտ ճամբաները ինչպէս որ պէտք
է ջտրվեցուին մարդկանց :

Հանրական ինքնիշխանութեան եւ մար-
դկային ազգի ազատութեան գաղափար-
ները աւետարանէն ծնած են . բայց այս
գաղափարներն ի գործ դնելու համար՝
Քրիստոս տերն մեր միացուցեր էր գա-
տնք խաղաղութեան եւ սիրոյ կրօնի մը
հետ : Մարդուս կիրքերը ուրիշ կարգա-
ւորութիւն ըրին : Հարկաւոր կապակցու-
թիւնները խզուեցան . այն բանն որ անբա-
ժանելի պիտի մնար՝ անմտաց ձեռքովը
բաժնուեցաւ . ազատութիւն կուգեն , ու եղ-
բայրսիրութիւնը մեկդի կը ձգեն : Այն ա-
տեն հարկաւ յառաջադիմութիւններն ալ
խաբեական կըլլան , չարիք կաճին այն
հողին վրայ ուր կըկարծուէր թէ բարիք
կըցանուի . իրարու օգնելու տեղ՝ մարդիկ
կը փողոտեն մեկզմեկ :

Բարոյական մը ջունեցող ազատութեան
հետեւանքներէն սոսկացեք : Կամ այն է
որ մարդս նորէն Աւետարանին ճանա-

պարհը պիտի մտնէ ու իր խզած կապերը նորէն պիտի ամրացընէ, կամ կոյր գկուրայն պիտի երթայ դեպ ի ուր որ իր անբանական ազատութիւնը քշէ տանի, մինչեւ որ այն որսորդք ազգաց ըսուած բռնակալներէն մեկը վայրի գազանի պէս ձգէ գինքը իր որոգայքին մէջ :

ԼԵ .

Քրիստոնէութեան մէջ սքանչելի տեղեկութիւն մը կայ մարդկային սրտի շարժմունքներուն : Որպէս զի մարդուս անձնասիրութենէն սիրտը չապականի, կրօնը անոր առջեւ ամենագեղեցիկ նպատակ մը կը դնէ հանդերձեայ կենաց մէջ : Մարդս այն նպատակին հասնելու յուսով՝ երկրիս վրայ շահասիրութենէն ետ կը կենայ, եւ մինչեւ ինքզինքը ուրանայու չափ երկրես վեր կը բարձրանայ : Վերցուր կրօնը, մեկէն ի մեկ անձնապաշտութիւնը կը արապետէ ու կատաղաբար ջարդ կընէ աշխարհիս վրայ :

ԼԶ .

Մարդիկ տեսնուեցան որ՝ իրենց խօսքին նայելով՝ հասարակ ժողովրդեան երջանկութիւնը պիտի հաստատէին . աստեք սկսան ամեն բանէ առաջ հաւատոյ անոնց տուած յուսոյն՝ արիութեան ու համբերութեան գանձերը փճացընել : Տէր Աստուած , ինչ նոր տեսակ օրէնսդիրներ :

Իրաւ որ չափազանց էր այն մարդկանց ինքնահաւանութիւնն ու յանդգնութիւնն որ առանց վախնալու քէ ինչ ծանր պատասխանատուութեան տակ կիյնան՝ խոստացեր էին իրենց խելքովը այնպիսի հնարքներ գտնել որ երջանկութեան աղբիւրին տեղը բռնէ , այն աղբիւրին որ իրենք չօրցընելու կաշխատէին : Զդատապարտենք գանոնք , խելքերնին կորսընցուցեր էին :

ԼԵ .

Ոմանք ծաղր կրնեն այս խօսքս քե
« Երանի աղքատաց հոգւով : » Այո՛ , « ե-
րանի անոնց որ աղքատ են հոգւով ըստ
աշխարհի : » Ասոնք այն մարդիկն են որ
հարստութենէն ու մեծութենէն գուրկ ու
հեռու են : Դուն կըճանջնաս արդեօք ու-
րիշ այնպիսի մարդիկ որ ունեցածնին
աղէկի բանեցընել գիտնան , եւ կարող
ըլլան ինչպէս որ պէտք է անձնանուէր
ջանքով կատարել մեծամեծ ու վտանգա-
ւոր պաշտօնները :

ԼԸ .

Մեկ քանի մասնաւոր մարդիկ դուրս
հանելով , խղճմտանք ըսածդ՝ միայն աս-
տուածապաշտ ժողովրդոց մէջ կը գտնուի .
ուրիշ տեղուանք ամէն մարդ ինքն իրեն
համար կը մտածէ , կը վիճէ , կաշխատի :

Ո՛րչափ գրքեր կան որ մեջերնին այս խօսքս տպուած է. « Մենք ազատութիւն կուզենք. » անոնց ետեւի սխալներուն մեջ պետք էր նայիլ ու այսպէս գրուած գտնել, ուղիղ, « Մենք իշխանութիւն կուզենք : »

Ամենուն խելքը միտքը փառք ու վայելք ըլլալով, ծանր ծանր ուսմունքները արհամարհուած են : Տերութիւն կառավարող մարդ ըլլալու համար շատ ժամանակ պետք է, բարի մարդ ըլլալու համար ալ շատ նեղութիւն քաշելու է, ուստի ամենքն ալ շատախօս կըլլան. անոր համար մեր օրերը յորչափ մարդիկ կան որ խօսիլ գիտեն, բայց ինչ բանի վրայ խօսածնին չեն գիտեր :

ԼԹ.

Հասարակ ժողովուրդը կուզէ որ իր վիճակը լաւանայ. ասիկայ շատ բնական բան է, եւ ամենայն բարեսիրտ մարդ այսպիսի օրինաւոր բաղձանքի մը կա-

տարուելուն պիտի օգնէ : Բայց թէ որ մեկը այս բանիս համար աշխատիլ ուզելով, ոչ ուրիշներուն փորձառութեանը խորհուրդ հարցընէ, եւ ոչ ուղիղ մտաց ըսածին մտիկ ընէ. թէ որ գործաւորաց այն ճշմարտութիւնները սորվեցընելու տեղ որ հարկաւոր են իրենց երջանկութեանը, ելլէ անոնց խենք ու խելառ սկզբունքներ ու վարդապետութիւններ ծախէ, միտքս կուգայ խեղճ Փռանսինեի գլխուն եկածն որ անգղիարէն սորվիլ կուզէ եղեր ու ստորին Պրեքայնիլեզուն սորվեցուցեր են իրեն :

Խ .

Մարդկային կենաց դիւրութիւններն հասարակաց բան մը դարձընելը՝ քաղաքական տնտեսութեան նպատակն է. բայց անոնք որ այս գեղեցիկ գիտութեան ետեւէ կըլլան՝ պէտք է յայտնապէս խոստովանին թէ անկարելի բան է որ մինակ իրենց գիտութիւնը բաւական ըլլայ այս

մեծ գործողութիւնը գլուխ հանելու : Ասիկայ ընելու համար հարկ է որ բարոյականը այնչափ կատարելութիւններ մտցընէ ընկերութեան մեջ որ երկու կարգի մարդիկ բոյորովին վերնան աշխարհես : Մեկ կարգինը այն գործաւորներն են որ իրենք զիրենք ցոփութեան տուած՝ գինով տուն կրդառնան , հայո՞յանք կրնեն , իրենց կանայքն ու զաւկրները կրծենեն , եւ այս ճամբով կրպատրաստեն զանոնք որ մը իրենց անբանութեանը մասնակից ընելու : Մեկայ կարգիններն այն գործատերերն են որ գործաւորները շնչաւոր մեքենաներու տեղ դրած են , ու երբ ըսես իրենց քե իրենք ալ պարտքեր ունին առ ընկերս որ պիտի կատարեն , կամ կրծիծաղին եւ կամ կրբարկանան : Քրիստոնէութեան ուժովը այս երկու կարգին մեկը կրնայ ճամբու գալ , մեկայը հայրական սկզբունքներ ունենայ :

Առ այժմ , եւ որպէս զի օր մը առաջ զայ հասնի այն ժամանակն որ այս քրիստոնէութեան ցանկալի ազդեցութիւնը ոյժ առնու , քող հասարակաց կարծիքը ա-

նարգ համարի այն ամենայն գործաւորն որ ոչ բարոյական ունի եւ ոչ սիրտ, թող քաղաքական օրէնքը պարտաւորե՛զ զինքը այն բաներն ընելու որ ջուզեր կատարել. թող գործաւորաց մոլութիւններուն այնչափ աչք չգոցե՛. թող անոնց պատճառները վերցընելու նայի, եւ մանաւանդ թող աղքատ տղոց դաստիարակութեանը վրայ փոյթ ունենայ:

ԽԱ.

Այնպիսի մարդիկ կան որ տգետ ժողովուրդը կուզեն իրենց ոտքին տակը սանդուխի աստիճան ընել՝ որպէս զի հարստութեան կամ իշխանութեան հասնին. բայց մարդիկ այլ կան որ ժողովրդեան այն մասը լուսաւորելու կաշխատին, եւ հիմակուրնէ կըտեսնուի որ իրենց ըրած բարեգործութիւնները սկսեր են մեծամեծ օգուտներու յոյսեր երեւցընել: Մանր տղաք Ապաստան տղայոց ըսուած տեղերը կըժողովուին, անկէց կրնան հա-

սարակաց դպրոցները մտնել . լաւ վարք ունեցող տղոց իբրեւ վարձ կը տրուին համբակութեան վկայագիրներ, եւ քանի որ վարպետի քով են՝ վրանին հոգ եւ խնամք կը տարուի : Երբ այնչափ կը մեծնան որ կրնան իրենց ապրուստը ճարել՝ ուրիշ տեղ մը կայ որ անոնց մանր մունր խնայութիւնները աճեցընելու դիւրութիւններն ունի . դարձեալ ուրիշ տեղ ալ կայ որ կը սորվեցընէ անոնց ընկերակցութիւն ընել իրարու հետ ու նեղութեան ատեն օգնութեան հասնիլ մեկմեկու : Արուեստ ու ճարտարութիւն սորվելու համար շատ մը մեծամեծ վարժոցներ կան՝ այնպէս խելացի կարգաւորութեամբ կառավարուած որ արժանի են իբրեւ մէյմեկ օրինակ յիշուելու : Թէ որ Վերին-Հոննոս ըսուած գաւառին մէջ երբաս Վեսերլինկի գեղեցիկ արուեստանոցը տեսնես որ մէջը երեք հազար գործաւոր կաշիսատի, դուն ալ ինծի պէս կը հիանաս ու կը գմայլիս այն առաքինի անձանց ըրածին որ Նախախնամութեան իրենց յանձնած այն մեծ ազգատոհմին մէջ բա-

րի վարքը՝ կենաց դիւրութիւնն ու երջանկաւեռ հանգստութիւնը կրցեր են տիրապետել տալ :

Բայց այս զանազան բարեգործութիւններն որ ըսի՝ բաւական տարածուած չեն . մեր դպրոցներուն մեջ դաստիարակութիւնը ուսմունքէն քիչ է . տարածուելու եւ կատարելագործուելու արժանի դեռ շատ բան կայ, բայց յախտենական օրէնք մըն ալ կայ որ օգտակար փոփոխութիւններուն շուտ շուտ առաջ երթալ քող չտար : Քաջութեամբ աշխատեցէք, ի՞նչ բարեւեր եւ բարերար անձինք . վհատութիւնը տեսակ մը ամբարշտութիւն է :

ԽԲ .

Նորանոր հնարքներ բանեցընող մարդիկ կան մեջերնիս որ զանազան սկզբանց եւ դրութեանց տէր են, բայց ամէնքն ալ թշնամի են դանդաղ ու մասնական նորոգութեանց : Զմեզ ոսկի դարուն եր-

ջանկուրքեանը հասցրնելու համար՝ կուգեն որ մարդկային ընկերութիւնը նոր նոր հիմանց վրայ հաստատուի : Մինչեւ հիմնանոնց այնչափ մեծամեծ ու դիւրին խոստմունքներուն մէկն ալ կատարուած ու յաջողած չտեսանք :

Ասոր տարակոյս չկայ թէ մեր ընկերութենէն շատ աւելի տարբեր ընկերութիւններ հաստատուելը կարելի բան է : Տեսէք Մորաւացի եղբարք ըսուածները. աղքատութիւնը անոնց մէջ լսուած բան չէ. ամէնքն ալ խաղաղաւետ ու միաբանական կեանք մը կանցընեն. Եւրոպայի ու Ամերիկայի ամէն բազմամարդ տեղերն ալ օրէ օր առաջ կերքան. մինչեւ Ասիա, Ափրիկէ եւ հեռաւոր կղզիները մտեր են. ամէն տեղ ալ նոյն հոգով կաշխատին : Ինձի փափաք մը եկաւ որ հասկընամ թէ ինչ կերպով կրցեր են ասոնք իրենց բարեգործական դիտաւորութիւններն ի գործ դնել. ուստի զնացի Ուրբէքքի քով անոնց Յայտք ըսուած գեղը աչքէ անցուցի :

Իրենց ընկերութիւնը բարոյականի

կողմանէ մերինէն շատ տարբեր է . եւ սակայն անոր հիմնադիրները ընկերական կարգին սովորական հիմունքը ամենեւին չեն փոխած : Ճանապարհորդներ կան որ ասոր հակառակը կարծեն, վասն զի Մորաւացոց բնակարանին դրսի կողմը միայն տեսեր են, ներսի բաներէն միայն վաճառանոցի պէս տեղ մը զարկեր է աչքերնուն որ եղբայրներէն գրնուած ու ընկերութիւնէն ծախուած ձեռագործներով լեցուն է . ասկեց մակարեր են թէ ամէն եղբայր ամենուն համար կաշխատի, եւ թէ իրենց աշխատանքին վաստակը հասարակաց գանձանակին կերբայ . բայց այս կարծիքն ամենեւին իրաւ չէ : Մորաւացիք մտքերնին դրած են թէ հարստութեանց անհաւասարութիւնը Աստուած դրեր է իբրեւ զօրաւոր հնարք մը զմարդիկ իրարու հետ միաբանելու, եւ ստիպելու որ իրարու օգնական ըլլան : Իրենց մեջ ալ վարձն ու թոշակը կամաւոր դաշնադրութեամբ կորոշուի . ամէն մարդ իր ունեցածին տերն է : Վաճառանոց բացողները ծերերն են ,

որ ընկերութեան տեսուչ կամ մատակարարներն այն անոնք են, եւ անոնց գնած ու ծախած ձեռագործները հասարակաց եկամտին մեկ ճիւղն է :

Մորաւացոց ընկերութեան նպատակը միաբան ու միահաւան գերդաստան մը ձեւանալ ըլլալով, շատ կը սիրեն մօտենալ իրարու, սակայն հասարակաց կամ միաբանական կեանք չեն անցըներ: Յայսք գեղին մեջ իրենց ունեցած ընդարձակ շէնքը՝ գլխաւոր բնակարաննին է. ասոր տներէն մեկքանին դրսուանց մեկ տան մը պէս կերելուան, բայց ներսէն իրարու հետ հաղորդակցութիւն չունին : Եղբայրներ կան որ այն շէնքէն դուրս կը բնակին: Յայսքի ամենէն գեղեցիկ ամարանոցը մորաւացի այրի կնոջ մը տունն է որ ամենուն սիրելի է իր բարեգործութեանցը համար : Ընկերութիւնն ընդարձակ շէնքի կարօտ չէ. քանի մը քաղաքներ կան որ հոն տեղի եղբայրները ուրիշ բնակչաց մեջ ցրուած կը կենան. ասոնց աւելի դժուար է իրարու օգնութեան հասնիլ, բայց սրտերնուն մեջ եղած եղբայրսիրութիւ-

նը ամեն դժուարութեան ալ կրնադրէ :

Շատ անգամ ըսուած է թէ ասոնց ծե-
րերը իշխանութիւն ունին ամուսնութիւն-
ներն ուզածնուն պէս յարմարցընելու ,
բայց ասիկայ շինծու խօսք է : Ասոնց
ընկերութիւնը այնչափ քիչ ճանչցուած է
որ ասկէց քիչ տարի առաջ Նորոզչաց
վրայ հրատարակուած գրքի մը մէջ կը-
կարդանք թէ Մորաւացիք քահանայ չու-
նին . եւ սակայն անոնք եպիսկոպոսներ ,
հովիւներ , սարկաւազներ ու դպիրներ ալ
ունին :

Այս ընկերութիւնը ոչ անսովոր կանո-
նադրութիւններով եւ ոչ կարգէ դուրս
սովորութիւններով ի գործ դրեր է իր դի-
տաւորութիւնները : Ուրեմն ինչ է պատ-
ճառն որ այս մարդիկը մէկ սիրտ մէկ
հոգի հանգիստ ու խաղաղ կեանք մը
կանցընեն , ինչպէս որ իրենց գուարք
եւ անոյշ կերպարանքին վրայ ալ կերեւ-
նայ : Այս բարութեանց աղբիւրը աստուած-
պաշտութեան զգացմունքն է՝ որով լցուած
է սրտերնին : Քրիստոնեայ են , ամսոս
որ ընդհանրական եկեղեցիէն բաժնուած ,

մեծամեծ մոլորութիւններ ունին եւ մեծամեծ օգնութիւններէ զուրկ են. բայց այն իրենց քով քրիստոնէութենէն մնացած աւերակներուն մէջ այ դեռ կենդանութեան հոգի մը կայ :

Մորաւացւոյ մը համար ամէն բանէ հարկաւորը իր հոգւոյն փրկութիւնն է, եւ հաստատուն կերպով միտքը դրած է թէ ջկրնար փրկութեան հասնիլ՝ մինչեւ որ զԱստուած եւ զմարդիկ ինչպէս պետք է նէ ջսիրէ՝ Քրիստոսի միջնորդութեամբը: Այս մտածութեամբ միշտ պատրաստ է խրատ մտիկ ընելու, եւ խրատի կարօտ եղած ատենը առատապէս կը գտնէ: Զոր օրինակ, իր առանձնական դաշնադրութեանցը ամենեւին խառնուող մը ջկայ. բայց թէ որ յանկարծ գործաւորները ջափէն աւելի վարձ ուզեն, կամ թէ գործատէր մը խիստ քիչ վարձ ուզէ վճարել, ծերերը մէջ կը մտնեն՝ իբրեւ երկու կողմէն երեսփոխան: Աստուք խելացի մարդիկ են ու խելացի մարդկանց հետ է խօսքերնին. պետք եղած բացատրութիւնները համարձակ ու անոյշ կերպով կը-

տրուին, եւ յանցաւորները շուտ մը կը-
ճանջնան պակասութիւննին ու տեղի կու-
տան :

Մորաւացիք հաւատարմութեամբ կը-
պահեն՝ զիրենք ընդունող երկրին օրէնք-
ները . երբեմն նաեւ աւելի ալ ճիշդ
կըպահեն այն օրէնքները՝ քան թէ նոյն
տէրութեան ուրիշ բնակիչները : Հրաման
ունին իւրաքանչիւր տեղւոյն օրինաց
պաշտպանութեանը դիմելու, եւ երկրին
դատաստանին տակը ձգելու իրենց կոխ-
ները . բայց ծերերը կընային որ թող չտան
եղբօր մը իր եղբօրը դեմ դատաւորի առ-
ջեւ ելլել եւ գայքակողութեան պատճառ
ըլլալ . ուստի կոխները սովորաբար ա-
նուշութեամբ կըվերջանան մեջերնին :
Այս ընկերութենէն կրօնական սկզբունքը
վերցուր, մեկէն ի մեկ կըկործանի :

Յայտք գեղէն ելլելու մօտ ատենս՝ գնա-
ցի հովուի մը (քահանայի մը, որ Ռայեառ
կըսուէր) մնաս բարով ըսելու . այս մարդը
շատ սիրով ու անխոնջ կերպով պատաս-
խան տուեր էր իմ ամէն հարցմունքներուս :
Ըսի իրեն թէ « Զձեզ խաղաղ բնակարանի

մը մեջ կըրթողում, եւ այնկոծեալ ու խոռ-
վայոյզ աշխարհք մը կըրդառնամ: Թերեւս
դուք ալ գիտեք թէ մեր գործաւորներուն
մեջ ճրջափ մարդիկ կան որ շատ տժգոն
են իրենց վիճակէն: Արդեօք ձերիններուն
մեջ ուրիշ այնպիսի սովորութիւններ
չմնացին որ ես չգիտնամ. թերեւս օգտա-
կար կրնային ըլլալ այն սովորութիւննե-
րը թէ որ մեր գործարաններուն մեջ ալ
մտնէին: — Չէ, ըսաւ. մենք ամենեւին
կարգէ դուրս բաներ չենք ըներ. բան մը
չկայ որ մենք մեր խելքէն հնարած ըլլանք.
մանաւանդ թէ խնայութեան գանձարան-
ներուն գիտն ալ մենք ուրիշներէն առեր
ենք: — Ի՛նչ, միթէ հնարք մը չես կրնար
ըսել ինձի՛ մարդկանց մեջ խաղաղութիւն
ձգելու, ըսի: Պատասխան տուաւ թէ
Ատոր հնարքը մեկ չէ, երկուք է: — Ա՛հ,
ըսէ խնդրեմ, որոնք են: — Քրիստոսի
հաւատալ եւ անոր խրատները ի գործ
դնել: — Բայց դուք ալ գիտեք, ըսի
տրտմութեամբ, թէ հաւատքը ինչպէս
տկար գործիք մըն է հիմակուան ատենս
շատ մարդկանց համար:» Աջուրները

դեպ ի երկինք վերուց ու ըսաւ . « Քրիստոսի աշխարհք բերած այս երկու հնարքներովս ամեն բան դիւրին է . իսկ ասոնց տեղը բունոջ ուրիշ ամենեւին բան մը չկայ ¹ : »

ԽԳ.

Դիւրին բան է մտացածին դրութիւններ հնարելն ու գիր անցընելը . այնպիսի առօրեայ գործողութեան մը համար ոչ կարգէ դուրս տաղանդ հարկաւոր է , եւ ոչ խորունկ գիտութիւն . երեւակայութեանդ ուժովը կրնաս երկայն երկայն բաներ գրել

¹ Մորաւացւոց վրայ ըրած դիտողութիւններովս ալ աւելի պայծառ հասկըցայ թէ իմ կրօնս որչափ գերազանց է՝ անկէց բաժնուած աղանդներէն : Թէ որ քրիստոնէութեան մնացորդներուն մէջ կենդանութեան նշան մը կայ՝ այն ալ միայն ուղղափառութենէն մնացած ճշմարտութիւններէն է որ կարծեցեալ նորոգիչները պահեր են : Մորաւացի երիցուն ինձի ըսած ետքի խօսքերը շատ խելացի խօսքեր են . բայց դիտելու բանն այս է որ ուղղափառական են անոնք , երեցը այն

մինչեւ որ ձեռքդ յոգնի : Մտացածին դրութիւնը տեսակ մը վիպասանութիւն է որ ազատ եւ մեջը ճիշդ կերպով մեկուն մեկային սովորութիւնները, բնաւորութիւնները, կիրքերը մեջ բերելէն, որով եւ մեկհատիկ կատարելութիւնն է անհաւատալի առասպել մը ըլլալ :

Նոր դրութիւն մը հնարող մարդը գծագիր մը հանած ատեն՝ դիմացը ամենեւին արգելք չգտներ . բայց երբոր մեծ պարծանքով մը առաջ բերած կարծիքները գործադրել պետք ըլլայ, բոլոր պակասութիւնները դուրս կելլեն : Այս պակասութիւնները շատ ալ չըլլային նե՛ր ահագին

խօսքերը միտքը պահեր է՝ իմ հարցս բերնէն եւ իր հարց բաժնէն անկելով :

Երբոր այնպիսի մարդիկ տեսնենք որ իրենց մտւորութիւններովը զուրկ են զօրաւոր օգնութիւններէ եւ սակայն մեզմէ շատ վեր են՝ գործնական բարոյականի կողմանէ, ամբջնանք որ այսչափ չարաչար կը գործածենք մեզի օգուտ բերող բաները . ճանչնանք Աստուծոյ դէմ ըրած ապերախտութիւննիս, եւ խնդրենք որ իր մեզի առատապէս տուած պարգեւներուն այսչափ անարժան չըլլանք ասկէջ ետքը :

դժուարութիւն մը կար յաղթելու, որ է համոզել զմարդիկ իրենց բնաւորութիւնն ու սովորութիւնները փոխելու :

Ես հնարք մը առաջարկեմ այս դժուարութիւնը վերցընելու եւ անկարծելի մտածութիւններ ի գործ դնելու . միայն թէ անոնց ձեռք զարնողներն ուզեն այս երկու պայմանս կատարել : Մեկն այս պիտի ըլլայ որ իրենց առաջարկութիւններուն մեջ քրիստոնեական հաւատոյ դէմ բան ամենեւին չգտնուի . մեկայն ալ այս ըլլայ որ այն առաջարկութիւնները իրական օգտակարութիւն մը ունենան :

Երբ այս երկու պայմաններն ալ պահուին, առանց ամենեւին տարակուսելու կըսեմ ես թէ Գնա պատմե քրիստոնեից . քու դիտաւորութեանդ օգտակարութիւնը հասկըցուր իրենց, եւ բացատրե թէ զԱստուած պատուելու ինչ գեղեցիկ կերպ է այնպիսի ընկերութիւն մը հաստատել որ օրինակ ըլլայ ամենուն, ուրիշներն ալ անոր յաջողութիւնն ու ծաղկիլը տեսնելով՝ փափաքին անոր բարեպաշտական սովորութիւններուն ու բարի բարի վարմուն-

քին հետեւիլ: Պիտի հարցընես քե ուր
գտնալու ե այնպիսի բարեբարոյ քրիս-
տոնեաներ: Իմ պարզ պատասխանս այս
ե. թէ որ դուն չես հաւատար, խօսքդ
սուտ կըլլայ, գործքդ տեսակ մը աճպա-
րարութիւն, եւ մեկը չգտնուիր որ քու
ըսածիդ խաբուի: Իսկ երե հաւատաս,
կըզտնես այնպիսի մարդիկ որ կրնան
հասկընալ քու խօսքդ, վասն զի իրենց
հաւատքն ալ քու հաւատքդ կըլլայ. այն
ատեն տեսնես քե անոնք ալ քեզի օգնելու
համար որչափ ոյժ, որչափ քաղցրութիւն,
ինչ գործունեութիւն եւ որպիսի արիա-
կան համբերութիւն կունենան:

Ընդհանրապէս հիմակուան նորոգու-
թիւն սիրող մարդիկը ամենքն ալ կը-
ճանջնան քե կրօնը շատ զօրաւոր գործիք
ե՛ մեծամեծ նորոգութիւններ ընելու.
բայց շատը կան որ նոր նոր հաւատք-
ներ կուզեն սորվեցընել մարդկային ազ-
գին: Ձեն տեսներ քե մարդկանց ձեռքովը
շինուած կրօններն ինչ ծաղրական բա-
ներ են, այնպէս որ ոչ քրիստոնէին հաճոյ
կըլլան եւ ոչ անհաւատին: Այնպիսի

կրօններուն պատիւ մը ըրած կըլլայ մեկը՝ քէ որ ըսէ քէ աստնք ուղիղ բարոյականին հետ նոյնչափ նմանութիւն ունին՝ որչափ որ գեղարուեստից հետ նման կըսեալուն ծիծաղաշարժ նկարներն ու այլանդակ մտածութիւնները :

Քանի մը տարի առաջ՝ չեմ գիտեր որ հեղինակն էր առաջարկողն որ մարդկային ազգը վերանորոգելու համար պէտք է իր Նորաքրիստոնէութիւն ըսածն ընդունիլ : Այն կարծեցեալ բարեկարգիչներն որ վեշտասաներորդ դարուն մեջ այնպիսի մեծ յեղափոխութեան պատճառեղան, աւելի խելացի գտնուեցան. քրիստոնէութիւնն այլայլողը ուղղափառութիւնն է ըսին, եւ ձայն մը հանեցին քէ իրենք նախնական եկեղեցւոյն հաւատքն ու սովորութիւնները նորէն ձեռք պիտի առնուն : Զարմանք չէ որ այս լեզուն շատ մարդկանց հաճոյացած, ու մինչեւ երեսնյի իմաստնոց ալ աչքը խաբած ըլլայ. բայց Նորաքրիստոնէութիւն մը առաջարկելը չափէ դուրս միամտութիւն

է, վասն զի այդ խօսքին ճիշդ մեկնութիւնն որ ուզես գտնել՝ ըսել կըլլայ այնպիսի քրիստոնէութիւն մը որ բուն քրիստոնէութիւնը չէ :

ԽԳ.

Այսօրուան օրս շատ մարդիկ կան որ կըսեն թէ մենք անոր համար աստուածպաշտութենէն հեռու կըքալենք որ եկեղեցականաց տիրապետութեանն ու իշխանական հոգւոյն աւելի համարձակութիւն չտանք : Մեր խօսքն այն էր թէ կրօնը ճշմարիտ բան է թէ ոչ . այսպիսի խնդրոյ ատեն այդ բերանը բանեցընելը՝ խնդիրը փոխել է . եւ սակայն ես ուրիշ պատասխան մը տամ :

Ուղղափառութիւնը տարածելու պաշտօնը վրան առած մարդիկ շատուոր են . թէ որ եկեղեցականներէն ոմանք իրենց վիճակին հոգին կորսընցընէին, իրենք զիրենք հպարտութեան ու փառասիրութեան տային, եւ քիչ ատենի համար ալ

ըլլայ՝ ուրիշներուն վրայ տիրապետելու աշխատեին, այսպիսի անկարգութեան մը դեմ հարկաւոր եղած դարմանները արդեօք ուսկից կրնային գալ : Ի հարկե եկեղեցականաց մեծ մասէն, եւ յուսաւոր բարեպաշտութեամբ զարդարուած մարդկանցմէ պիտի գային : Իսկ այն անհաւաններն որ այնպիսի անտեղի պահանջումներէ զգուած ու առնուած կերեւնան՝ ինչ շահ, ինչ օգնութիւն կրնան ընել այն պահանջմանց դեմ : Թէ որ ձայներնին բարձրացընեն, իրենց պաշտպանել ուզած խնդրոյն վրայէն մեկէն ի մեկ ամենուն ալ վստահութիւնը կը վերցընեն, եւ կոխը աւելի կըխառնակեն ու կը դժուարացընեն : Փարատէ մոլորութեան խաւարը, տարածէ քրիստոնէութեան պայծառութիւնը, մեծ ծառայութիւն եւ օգուտըրած կըլլաս թէ Տէրութեան եւ թէ Կրօնի, եւ հասարակաց օգտին պաշտպան կեցող զօրաւոր ու անշահասէր մարդիկ կը պատրաստես :

Մեր օրերուն եկեղեցականները մեծամեծ օգուտներ կրնան ընել, եւ իրենց դա-

տը լաւ պաշտպանելու համար խիստ յաջող պարագաներու մէջ կրգտնուին : Մարդկանց սիրտը ձանձրացեր է պարապ մնալէն . ընտանեաց տեր մարդիկ, խելացի մարդիկ, կարողութեան տեր եղող երիտասարդներ, ամէնքն ալ ծարաւ մը ունին աստուածպաշտութեան : Այն ազգին մէջ որ թեթեամտի անուն հանած էր եւ խելքը երկրիս վրայի ամէն իշխանութիւններէն ալ վեր կըսեպէր, որոնք որ քրիստոնէութիւնը ծաղր կընէին՝ վերջապէս իրենք ծաղր եղան . իրենց ժամանակին քաղաքավարութիւն սեպածը՝ մեր ժամանակին անքաղաքավարութիւնը դարձաւ : Հիմակուան Տերութեան մարդիկը՝ ամբարշտաց նախապաշարմունքներուն դէմ կեցին . եպիսկոպոսները ամենայն իմաստութեամբ կընտրուին . ամէն բան այնպիսի ճամբու մէջ դրուած է որ Քրիստոսի խօսքերը պատկառանք լըսուին, վստահութեամբ եւ սիրով ընդունուին : Պաղղիոյ կրօնական բաղդը (ջեմըսեր բուն կրօնին բաղդը) ամէն բանէ աւելի եկեղեցականաց ձեռքն է : Ուրիշ

ամեն ժամանակ աւելի հիմակուան եկեղեցականները կրնան մեծամեծ օգուտներ ընել . ուրիշ ամեն ժամանակ աւելի հիմա անոնց խոհեմութեանը վրայ հաստատուած են քրիստոնէութեան յոյսերը . աղօթք ընենք որ յոյս տայ իրենց Աստուած , եւ մեզի Սալեզացիներ ու Ֆենելոններ հանե :

ԽԵ.

Տեսնելով թէ քրիստոնէութիւնը չ'ինչ կերպով հաստատուեր է, կրնանք հասկընալ թէ անիկայ տարածելու հնարքներն ալ որոնք են : Յիսուսի բովերը մարդկային օգնութիւններ չկային . իր բովանդակ ոյժը գինքը առաքողէն էր : Կարողութիւն, պատիւ , հարստութիւն , աստեք ամենն ալ կրնան օգտակար ըլլալ աշխարհային գործողութեանց մեջ . բայց երբ խօսքը Աստուծոյ ծառայութիւն մը ընելու , եւ իրեն յայտնած ճշմարտութիւնները տարածելու վրայ է, այն փոխ առնուած մանր

մունք ուժերը մարդուս սրտէն ու մտքէն այն գորութիւնն ալ կրվեցընեն որ վերէն կուգայ :

Մեծ անմտութիւն է կարծելը թէ Քրիստոս աստուածապետական կառավարութիւն մը ուզեր է հաստատել այս բացայայտ խօսքերս ըսած ատենը . « Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ : » — « Տուք գկայսերն կայսեր , եւ զԱստուծոյն Աստուծոյ : »

Փրկչին մերոյ պաշտօնեից պարտքն է՝ հաւատքն ու բարոյականը տարածել : Երբ կարծեցեալ փիլիսոփաները այնչափ կը պզտիկցընեն քահանային պաշտօնն որ բարոյագետէ մը աւելի բան չունի կըսեն , յայտնի կիմացընեն թէ ոչ երկնային ճշմարտութեանց տեղեկութիւն ունին եւ ոչ երկրաւոր շահուց : Ի՞նչ բանի կուգայ այն բարոյականն որ գուրկ է ի գործ դրուելու արիութենէն : Ո՞վ չգիտեր թէ պարտքերնիս չկատարելնուս պատճառ՝ խիստ քիչ անգամ պարտքերնիս չճանչնայն է : Մեծ ծառայութիւն՝ մեծ օգուտ կընէ մեզի ով որ մեր տկարութիւնը կը-

շտկէ, ով որ մեր վատութենէն կազատե
զմեզ : Պատուիրանքները պահելու ոյժը՝
ամեն բանէ աւելի հաւատքն կուգայ :
Ուրեմն թող քահանան իր պաշտօնը կա-
տարէ . մի առաջարկեր իղեն որ ուրանայ
այն պաշտօնն ու քեզմէ ուրիշ մը ընդու-
նի . մի աշխատիր յիմարաբար ինքզինքդ
Քրիստոսի տեղը դնելու :

Թէ այն մարդն որ Քրիստոսէ տարբեր
կերպով կուգէ քահանային սորվեցընել
մարդկային իրաց յաջողութեան արուես-
տը, եւ թէ անիկայ որ կաշխատի համոզել
զքահանայն թէ հարկաւոր է որ իր հոգե-
ւորական իշխանութեան ոյժն աւելցընէ՝
ժամանակաւոր իշխանութիւն բանեցընե-
լով, երկուքն ալ հաւասարապէս Քրիս-
տոսի արողը կըյափշտակեն . երկուքին
տուած խրատներն ալ այնպիսի պիղծ
խառնուրդ մըն է որ երկնից պաշտօնեան
բացէ ի բաց կըմերժէ :

Այս երկու իշխանութեանց իրարմէ ինչ
զժի վրայ բաժնուիլն որոշ կերպով ցուցը-
նելը միշտ դիւրին բան չէ : Ատնց մեկմե-
կէ գատուիլը իրաւացի, հարկաւոր, եւ

քրիստոնէութեան պատուիրած բանն ըլլալը հասկըցուելէն ետեւ՝ խիստ շատ անգամ ցաւալի կոխներ ելեր են՝ երբոր պետք եղեր է գործադրութեանը ձեռք զարնել։ Դժուարութիւնները վերցընելու համար՝ երկու կողմէն ալ շատ բարեմտութիւն, ջափաւորութիւն, եւ անշահասիրութիւն հարկաւոր է։ Աւելի եկեղեցականաց կիյնայ այս առաքինութեանց օրինակ ըլլալը. անոնք պիտի ցուցընեն երկպառակ ու խռով մարդկանց իրենց օրինակովը քե ինչպէս պետք է զիջանիլ այն բաներուն՝ որոնց համար կարելի է զիջանիլը։ Ուրիշ կողմանէ՝ եկեղեցականք կրնան վստահ ըլլալ քե ասիկայ իրենց ձեռքը անյաղքելի զենք մը պիտի ըլլայ՝ երբ ատեն մը գայ որ ստիպուին պաշտպանութիւն ընել այն բանին որ աստուածային օրէնքը իրենց կրպատուիրէ մինչեւ վերջը պաշտպանել։

ԽԶ.

Իրենց սրբազան պաշտօնէն դուրս ու-

րիշ բանի ջխատնուող եկեղեցականաց
ըրած աղեկութիւնները յայտնի կըվկայեն
քե պաշտօննին երկնքէն տրուած է իրենց:
Անոնց պարտքն ու բանը գործն ըլլալով
Քրիստոսի Տեառն մերոյ խրատներովը
հոգինիս մաքրել, եւ զանոնք գործադրելու
ոյժը հաղորդել մեզի, կրնան բոլոր մարդ-
կային ընկերութեանը նոր կենդանութիւն
մը տալ: Թէ որ մեր սրտէն անձնապաշ-
տութիւնը հանեն վռնտեն, ու անոր տեղը
Աստուծոյ եւ մարդկանց սերը լեցընեն,
ամէն բանի մէջ երկնային ազդեցութիւնը
յայտնի պիտի երեւնայ. անով պիտի հաս-
տատուի ամուսնաց համաձայնութիւնը,
հարց եւ որդւոց սերը, մասնաւորաց իրա-
րու հետ անկեղծ վարմունքը, իշխանաւո-
րաց փութաջան խնամքը, դատաւորաց
անկաշառ արդարութիւնը, տերութեան
հայրական կառավարութիւնը: Սհա այս
կերպով պիտի խտտնուի քահանան քա-
ղաքական գործողութեանց:

Մեսիային ինքզինքը աշխարհիս յայտ-
նելու համար ընտրած ժամանակն ու տեղը
մեծ խրատ է մեզի. ոչ փառահեղ միապե-

տութեան մը մեջ եկաւ, ոչ անողոքելի հասարակապետութեան մը մեջ. այլ մեկ ժողովրդեան մը քով եկաւ որ Հոովմայեցոց գործակալներուն ձեռքէն կրտանջուէր. անոնց մեջ քարոզեց այն բարոյականն որ միշտ կըլլարմարի մարդուս՝ ինչ տեսակ ալ ըլլան կառավարութեան կերպերը :

Եկեղեցական անձը ոչ միայն ետեւ պիտի չըլլայ փառասիրութեամբ ժամանակաւոր իշխանութեան, հապա նաև այս կամ այն քաղաքական կարծիքն ընդունելէն պիտի զգուշանայ : Ինչո՞ւ համար. ժամերով քրիստոնեական խրատներ տալէն ետքը՝ միքէ պիտի չկարենայնոյն խրատները օգտակար կերպով մօտեցընել մեջերնիս կոխ ձգող խնդիրներուն : Թէ որ տեսնես որ ինքը միայն կըլլորդորէ գմարդիկ խաղաղութիւն ընելու, միաբան կենալու, իրենց շահը չփնտռելու, անիրաւութեանց ներելու, նեղութիւնները մոռնալու, յայտնի բան է որ այս աւետարանական յորդորանքները իր պաշտօնին գործողութեանցը

մասն են . բայց թող մեր կոխներուն մեջ
ջմտնէ : Քաղաքական խնդիրները իրեն
ոչ սորվելու բաներն են եւ ոչ ձեռք գար-
նելու աշխատանքը : Իր պաշտօնը բաւա-
կան ծանրութիւն է իրեն . թող անոր մեջ
կենայ , եւ քահանայ գտնուելէն ետեւ՝
թող բոլոր կենացը մեջ քահանայ մնայ :

Երբոր Քրիստոսի Տեսուն մերոյ պաշ-
տօնեան աստուածային խօսքերը կը քա-
րոզէ , իր ձայնէն մարդկանց սիրտը
կը շարժի եւ միտքը կը լուսաւորուի . ամէն
մարդ սիրով ու պատկառանօք անոր առ-
ջեւը կը խոնարհի : Բայց թէ որ անիկայ՝
մեզի հետ յաւիտենական ճշմարտութեանց
վրայ խօսելու տեղ՝ քաղաքական կարծիք-
ներ գրուցէ , ճրջափ բարձրութենէ վար
կլիցնայ , ճրջափ կը պզտիկնայ . ինչ իրա-
ւամբ կուզէ դաս տալ այնպիսի մարդկանց
որ թերեւս իրմէ շատ անելի լաւ սորված
են այն նիւթերը : Իր պաշտօնը մեկդի դնե-
լէն ալ կիմացուի թէ անշուշտ այնչափ
մոռցեր է զայն որ այս կամ այն կուսակ-
ցութեան կողմը կը բռնէ : Մի՞թէ պատճառ
չը՞լլար տաքգլուխ մարդկանց , թերեւս

նանւ ծանրագլուխ մարդկանց, մտածելու
քէ այս քահանան կրօնը գործիք ըրեր է
այս ինչ կուսակցութեան կողմը զօրացը-
նելու : Ի՛նչ մեծ սրբապրղծութիւն կրնէ՝
քէ որ անփոփոխելի բանը փոփոխակա-
նին հետ կապէ . քէ որ կրօնը գործիք
մը դարձրնէ . քէ որ խօսած ատենը՝ մտիկ
ընողին միտքն իյնայ այն խօսքն որ
խելացի կնոջ մէկն ըսած է . « Մարդիկ
կան որ Աստուծոյ կրճառայեն, մարդիկ
ալ կան որ զԱստուած իրենց մտքին ծա-
ռայեցընել կուզեն : »

Բայց, կըսեն ոմանք, քէ որ քահանա-
ները քաղաքական կարծիքի մը տէր
չըլլան, քաղաքացի չեն սեպուիր, մէյմէկ
օտարականներ են՝ ընկերութեան մէջ
ընկած : Ես միտք չունիմ վե՛ճ ընելու քէ
որ պատուանունը կրվայլէ իրենց . արդէն
ըսի քէ կրօնը միայն բաւական է տերու-
թեան մը մէջի ամեն բաներուն կենդա-
նութիւն տալու, ուստի ըսածս չեմ կրկներ .
այս միայն աւելցընեմ որ ես չեմ հասկը-
նար քէ ինչպէս կըլլայ որ այն մարդիկն
որ այնչափ մեծամեծ օգուտներ կրնեն

հասարակաց, եւ այնչափ հարկաւոր է իրենց աշխատանքը՝ ճշմարիտ քաղաքացիներ հանելու համար, իրենք իրացընէ քաղաքացի չըսուին: Այս տարբերութիւնս միայն կըտեսնեմ անոնց ու մեր մեջ որ մեր քաղաքական օրենքներն զմեզ երկրիս այս ինչ անկեանք քաղաքացի կընեն, իսկ զանոնք կրօնը աշխարհիս ամեն կողմերուն քաղաքացի կընէ՝ թէ քաղաքակիրք ըլլան այն երկիրները եւ թէ վայրենի կամ բարբարոս:

ԽԷ,

Աշխարհիս բարիքներէն սրտերնիս զատելու օրինակը ուսկից պիտի գայ՝ թէ որ եկեղեցականներէն չգայ: Մարդուս լեզուին մեջ այնչափ զօրաւոր գրուցուածք մը չկայ որ կարենայ բացատրել թէ եկեղեցականաց անշահասիրութիւնն ինչ աստիճանի պիտի ըլլայ: Ո՞չ ապաքէն իրենց պատուիրեր է Աստուած որ հագուստնին

ու ապրուստնին ալ իրմէ միայն ընդունելու սպասեն :

Որչափ որ եկեղեցականներն իրենց ժամանակաւոր շահուն անհոգ ըլլան՝ այնչափ արտաքին կառավարութիւնը պիտի ջանայ ամենայն կերպով անոնց պիտոյքը հոգայու : Թող մէյմը ազատին եկեղեցականները՝ կատարած պաշտօններուն համար ստակ ընդունելու նեղութենէն ու ամօքէն, քող այնպէս ըլլան որ կարողութիւն ունենան երբեմն ուրիշներուն օգնութիւն ընելու, եւ ոչ երբէք հարկադրուին ուրիշի օգնութեանը կարօտ ըլլալու : Ի՛նչ աղէկ բան է տեսնելն որ տերութիւնը առատաձեռն կերպով՝ հասարակաց դիւրութեանը համար մեծամեծ շինութիւններ կրնէ. բայց ուրիշ տեսակ օգտակար ծախքեր ալ կան ընելու : Այս ալ ջմոռնանք թէ աղքատաց խեղճութիւնները որչափ կրպակսին այն եկեղեցականաց ձեռքովն որ իրենց խրատներովն ու խնամքովը կրտորվեցընեն մարդկանց աւելի աշխատասեր՝ աւելի խնայող ըլլալ, եւ աւելի բարի օրինակ տալ իրենց գաւկըներուն : Ահա

այսպիսի օգնութիւններ կրպահանջէ քաղաքական տնտեսութիւնը : Այս գիտութեան ետեւէ ընկնողներուն յոյսերը պարապ կեցին՝ թէ որ գործաւորաց եւ գործատեարց բարքերը չփոխուին՝ ինչպէս որ ըսի . եւ անա յայտնի բան է որ այս դժուար աշխատութեան մէկ մեծ մասն ալ՝ միայն կրօնի պաշտօնեաներուն կիցնայ : Ուրեմն երբոր կրմտածենք թէ ինչնոր նոր հնարքներով կրնանք աւելի պտղաւետ ընել անոնց տուած դասերը , ոչ եթէ անոնց շահը՝ հապա հասարակաց օգուտները մտածած կրցանք :

Կըփափաքիմ որ եկեղեցականներն աղքատ ըլլան , բայց կամաւոր աղքատ : Քահանայ մը խիստ շատ եկամտի տէր ալ ըլլայ՝ իր ապրուստին վրայ միայն իրաւունք ունի . անկէց ինչ որ աւելնայ՝ ինքն անոր աւանդապահն ու բաժանարարն է :

Այս խօսքերէս այն ջեմ ուզեր հետեւցրնել թէ եկեղեցականները հարստացընելու է որ բարերարութիւն ընելու յորդորուին . մանաւանդ թէ վտանգ է որ բոլորովին

հակառակը պատահի՝ թէ որ շատ հարրստ-
նան, եւ վախեմ թէ այն ատեն ամեն մարդ
ափսոսայ որ ինչո՞ւ համար առաջուան
կարծեցեալ հարստութեամբը միայն չմնա-
ցին: Մեծամեծ հարստութիւններ կային
ատենով (Գաղղիոյ մեջ) իրենց անուամբը
գնուած, բայց իրենք հարուստ չէին:
Սնագին եկամուտներ կային որ բաժնուած
էին եպիսկոպոսներու եւ այնպիսի աշ-
խարհականներու մեջ որ անունով միայն
աբբայ (կամ տէր) կըսուէին. բուն եկե-
ղեցականներն աղքատ էին: Աստուած
պահէ որ մեր յաջորդները այնպիսի ար-
տառոց հարստութիւնը նորէն ոտք ելած
չտեսնեն: Ս. Պօքք ընենք որ եկեղեցական
աստիճան ընդունողը ուրիշ փափաք չու-
նենայ՝ բայց եթէ աշխատելու որ մարդ-
կանց մեջ աստուածսիրութիւնն ու եղ-
բայրսիրութիւնը օրէ օր աւելի ծաւալին:

ԽԶ.

Կըպատահի երբեմն որ պատուաւոր

եւ բարեպաշտ ծնողք սաստիկ տրամու-
թեան մեջ կրչյան որ իրենց գաւկրներուն
մէկը կամ մեկայը ինքզինքը չափէ դուրս
հոգեւորութեան կուտայ, կրմաղձոտի, ու
կեղէ կըսէ իրենց քէ Աստուծոյ ծառայու-
թեանը եւ պաշտօնին մեջ կուզեմ մտնել :
Սովորաբար այսպիսի ատեն դարմանին
աղէկն ընողը արժանաւոր քահանային
մէկը կրչյայ, որ դեռահասակ պատանւոյն
երեւակայութիւնը հանդարտեցընել ու
շփոթած միտքը յուսաւորել աղէկ գիտե-
անոր ձեռքովը այն ընտանեաց մեջ խա-
ղաղութիւնը նորէն կըտիրէ :

Ճամբէ ու չափէ դուրս ելլող եռանդը
կրնայ պատճառ ըլլայ որ կրակոտ եւ
կամ մեղամաղձոտ անձանց վտանգաւոր
բաներու ձեռք գարնել եւ որդիական
պատկատանքը արհամարհել տան : Տղայ
մը իր ծնողացը ձեռքէն առնուլը այնպիսի
յափշտակութիւն մըն է որ հոգեվարք
մարդու մը օրինաւոր ժառանգները իրենց
բաժինէն զրկելէն աւելի ծանր յանցանք է :
Եպիսկոպոսաց սրբազան պարտքերէն
մէկն ալ այս է որ իրենց քեմին մեջ չբողուն

որ մտնէ այն կոյր նախանձայուգութեան վնասներն որ եկեղեցին կը դատապարտէ, եւ ամբարիշտ մարդիկ զանոնք իրենց ձեռքը իբրեւ գէնք կը բանեցընեն, իրացընէ այնպիսի գէնք որ մեկալներուն չափ անգօր ալ չեն :

Մարդուս ձեռք ձգել կը ցած պաշտօններուն մէջ ամենէն գեղեցիկը քահանայի պաշտօնն է : Անդադար Աստուծոյ եւ մարդկանց սիրոյն մէջ ապրիլ, բոյոր կեանքը անցընել՝ նոյն սերն ամենուն սրտին մէջ տարածելու, դեռ երկրիս վրայ գտնուելով՝ արդէն երկինքը բնակիլ է : Իրացընէ որ եւ իցէ ընկերական պաշտօնի մէջ հարկաւոր է որ գանիկայ բանեցընողը այս սիրով վառուած ըլլայ : Ո՞ր արժանաւոր դատաւորին սիրտը չվկայեր թէ որչափ սրբազան պարտք է իրեն համար՝ այն անաչառ ու անխռով արդարութիւնը որով իրեն նման մարդկանց ստացուածքին, կենացը եւ պատուոյն վրայ վճիռ պիտի կտրէ : Մատակարարութիւնը կամ թէ տերութեան մը կառավարութիւնը այնպիսի սրբազան տեղ մը չունի՝ ինչպի-

սի տեղ որ ունի դատաւորութիւնը . եւ սակայն իմաստուն կառավարիչը միշտ կրգտնէ քեթեցրնելու խեղճութիւններ, ի գործ դնելու բարեկարգութիւններ . եւ քե որ իր պարտքերը լաւ կատարէ, արժանի է հասարակաց օրհնենքին ու երախտագիտութեանը : Հոս չեմ ուզեր մարդկային ընկերութեան ամեն վիճակներն ալ մեկիկ մեկիկ աչքէ անցընել . այն միայն ըսեմ քե պատուական բժշկի մը ըրած աղեկութիւններուն վրայ յորջափ կրգմայլիմ . այնպիսին չկրնար մարմնոյ հիւանդութիւնները բժշկել՝ քե որ հոգւոյ հիւանդութիւնները չճանչնայ : Ո՛րջափ տրտմութիւններ կրփարատէ, յորջափ յոյսեր եւ արիական համբերութիւններ կարթընցընէ . յորջափ գաղտնիք իրեն սիրտը կրվագեն ու հոն բաղուած կըմնան : Բայց քահանային պաշտօնն ինչպէս որ աւելի սրբազան՝ այսպէս ալ աւելի դժուար է, եւ մեկ կողմանէ սարսափելի ալ է : Այս պաշտօնն այնպիսի պարտքեր կրղնէ մարդուս վրայ որ ուրիշ մեկ վիճակի մը համար ալ այնչափ ստոյգ կոչում, այնչափ արտաքին

յորդորանքե եւ ներքին երեսակայութենե
ազատ որոշմունք եւ առաջադրութիւն
չպահանջուիր: Քահանայական պաշտօնի
մէջ մտնել ուզողը՝ այնչափ խոհական
զգուշութիւններով ինքզինքը քննելէն ու
Աստուծմէ լոյս խնդրելէն ետքն ալ, եր-
բոր այն սոսկալի ատենը կրմօտենայ որ
անդարձ երդումը պիտի ընէ՝ կարծեմ քե
մարդկային քաջութիւն չկայ որ այն մի-
ջոցին չտկարանայ:

Շատ մարդ կրճանջնամ որ իրենց ուս-
մունքը փառաւորապէս լմընցընելէն ետեւ
պատուաւոր վիճակներու մէջ էին, եւ
ժակայն ձգեցին զանոնք ու եկեղեցական
վիճակի մէջ մտան: Տարակոյս չունիմ
քե օրե օր աւելի պիտի շատնան այն
քահանաներն որ հաստատուն կոչման
հետ պիտի միացընեն ընդարձակ գիտու-
թիւն եւ մարդ ճանջնայու փորձառութիւն.
ասով եկեղեցականք իրենց իրաւացի եւ
հարկաւոր ազդեցութիւնն ալ աւելի կը-
պահեն քան քե ուրիշ կերպով, եւ կրօնը
ինչպէս որ պետք է ճիշդ սորվեցընելով՝
սիրելի կընեն զայն ամենուն: Ատենով

սովորական բան մը դարձած էր այս սխալ կարծիքը թէ քահանայութիւնն ալ ուրիշ վիճակներուն պէս վիճակ մըն է. բայց այսօրուան օրս շատ մարդ հասկըցած է թէ բուն ճշմարիտը որն է :

Մինչեւ հիմա ըսածներէս միտքս նոր բան մըն ալ եկաւ որ մեծ բան ալ չէ նէ կուգեմ համառօտ կերպով մը գրել : Պատուաւոր մարդուն մէկը իմ բոռանս պսակին եկած էր . քանի մը շաբաթէն խնդրեց որ ես ալ իր որդւոյն առաջին պատարագին ներկայ ըլլամ : Այն պատարագին ատենը երկար ժամանակ միտքս ուրիշ բանի գրառած էր . այս ինքն ականայ կամօք իրարու հետ կըրբադդատէի այն երկու երիտասարդներն որ երկուքն ալ նոյն տարիքն ունէին , երկուքն ալ իրենց ծնողաց մէկ հատիկն էին , եւ այնչափ քիչ ատենի տարբերութեամբ՝ իրարմէ այնքան տարբեր վիճակներ ընտրեցին : Կրհարցընէի ինքիրենս թէ արդեօք երկուքէն որը աւելի երջանիկ պիտի ըլլայ : Կըտեսնէի որ եթէ իմ բոռս եկեղեցական ըլլալ ուզէր , ես պիտի ջա-

նայի անոր միտքը դարձրնել այնպիսի պատճառներով որ բնական են՝ ուստի եւ իրաւացի. բայց ասոր ալ խելքս պակեցաւ որ եթէ ես ըսէի իրեն թէ լաւ մը քննէ ինքզինքդ, ու անիկայ իր փափաքանացը մեջ նոյնպէս հաստատուն մնար, շատ դժուարութիւն պիտի չքաշէի եւ ալ իրեն վսեմ մտածութիւններուն զիջանելու, եւ իմ ըրած զոհս՝ մանաւանդ թէ որոշմունքս՝ ամենեւին ցաւ պիտի չպատճառէր ինծի : Այս մտածութիւններով նորէն խելքս սուրբ պատարագին դարձաւ, եւ սկսայ հայրագուծ սրտով մը երկու երիտասարդաց համար ալ աղօթք ընել :

ԽԹ.

Քաղաքական տարաձայնութիւնները պատճառ եղան որ զուարճախօսութեան կողմանէ երկար ատեն անուանի եղած ազգի մը մեջ ծանր ու կծու խօսակցութիւնը սովորական բան մը դարձաւ : Այս

տեսակ խօսակցութիւնը ատելութեան կիրքէն կրճնանի ու այնպիսի կիրքերուն սնունդ կուտայ : Տարածայնութիւնն ու խոռովութիւնը իրենց շահուն համար երկնցընել ուզողները ամենքն ալ կըսիրեն գրգռիչ խօսքեր բանեցընել, որպէս զի ջրլլայ թէ իրարու հետ աւրուած մարդիկ յանկարծ հաշտուիլ ուզեն : Ամենէն աւելի եկեղեցականաց կիյնայ ջափ դնել իրենց խօսքերուն, որպէս զի մեր սիրտն ալ ջափաւորութիւն մտնէ. իրենք շատ անգամ կամբաստանուին, երբեմն ալ թերեւս զուրիշներն ամբաստանելու կըստիպուին, ուստի խիստ շատ առիթ կունենան այս իրենցմէ խնդրած բարի օրինակս տալու մեզի :

Աւետարանիչները, այն աստուածաբեալ մարդիկը, իրենց վարդապետին մահը կըպատմեն, եւ այնպիսի պատմութեան մէջ մէկ ծանր խօսք մըն ալ ջեղեր իրենց բերնէն Հրէից դէմ : Միայն այս անխոռով հանդարտութիւնս ալ բաւական էր վկայելու թէ Աւետարանը աստուածային ազդմամբ գրուած է :

Ծ.

Թե որ այս գրուածքս կարդացողներէն ոմանք տեսնեն թէ քրիստոնէութեան դեմ նախապաշարմունքներ՝ ծուռ կարծիքներ ունին եղեր, կաղաչեմ իրենց որ այն առաջին նշոյլը չքողուն որ մթըննայ. արշալոյս մըն է անիկայ որ ետեւէն ցորեկ կուգայ : Իրենց աղեկութեանը համար կըլլորդորեմ զիրենք որ լաւ մտածեն, ու լաւ մտածելու համար՝ աղօթք ընեն : Թող խնդրեն Աստուծմէ ընդհանուր կերպով մը որ իրենց տարակոյսները փարատէ, եւ ճշմարտութեան սրբազան տաճարը բանայ առջևնին : Թող ինչպէս որ կուգեն՝ այնպէս աղօթք ընեն, միայն թէ ընեն :

Մարդկային նկատման տկարութիւնները, տեսակ մը մարդկանց դատաստանները՝ յուսամ թէ արգելք չեն ըլլար իրենց պէտք եղած քննութիւններն ընելու : Շիտակ եւ հաստատուն մտքի տէր մարդը ռամկին կարծիքը բանի տեղ չհամարիր,

եւ միտքը չղներ քե ուամիկ ժողովուրդը
ըսածդ միայն խեղճ տգետներու բազմու-
թիւն է. հապա անոր մեջ շատ մարդիկ ալ
կըտեսնէ որ դրսուանց փայլուն կերեւ-
նան, ոմանք ալ շատ բանի կողմանէ բա-
ւական տեղեկութիւններ ունին :

Երբոր բանի մը վրայ լաւ մտածելով՝
կարծիքնիս փոխելու ստիպուինք, մեր
անձնասիրութիւնը սաստիկ նեղութիւն
կըքաշէ : Բայց ինչո՞ւ. միքե մարդուս
միտքը անոր համար եղած չէ՞ որ ճշմար-
տութիւնը փնտռէ, սիրտը անոր համար
եղած չէ՞ որ սեր կապէ : Միքե չենք
տեսներ որ սրտերնիս կըբացուի քանի
որ մտքերնիս բերենք այն իմաստունն
որ ծերացած ատենն ալ կուրախանար
քե միշտ նոր բան սորվելու հետ է ¹ :
Թէ որ շատ ատենն ի վեր տպաւորեր

¹ Այնպիսի մարդիկ ալ տեսեր եմ որ կըպարծենան
քե քառասուն տարիէ ի վեր ամենեւին կարծիքնին
չեն փոխած՝ եւ ոչ մէկ բանի մը վրայ : Կարելի բան չէ
ասիկայ. ոչ երբեք պիտի հաւատամ քե մարդ մը այն-
չափ ապուշ ըլլայ որ քառասուն տարուան մեջ ամե-
նեւին բան չսորվի :

են մտքիդ մեջ կարևոր ճշմարտութիւն մը , եւ դուն խիստ շատ փոփոխութեանց ու դիպուածոց մեջ այնչափ ճշմարտութիւնը միշտ հաւատարմութեամբ պահեր ես, գովեստի արժանի ես. բայց թէ որ միտքդ ծանր մոլորութիւն մը խտրեր են, եւ երկար ատեն այն մոլորութիւնը սրտիդ մեջ պահելէն ետեւ՝ քաջութեամբ քննես ու ազատիս անկեց, որչափ աւելի մեծ ու բանաւոր կըլլայ քու արդիւնքդ :

Քրիստոնէութիւնը սիրտդ շարժելուն պէս, միտքդ լուսաւորելուն պէս, նայե որ շուտ մը ինքզինքդ գորացրնես՝ անոր դրած պարտքերը կատարելով : Այն անհաւան մարդն որ բարեպաշտական կրթութիւններ չընէր՝ զարմանք չբերեր, եւ իրեն բարեմտութեամբը կրնայ կերպով մը արդարանայ . բայց ինչպէս պիտի արդարանայ այն մարդն որ կըհաւատայ, ու հաւտացածը գործով չկատարեր :

Երբոր մեկը դարձի գալով աստուածապաշտութիւնը ձեռք առնէ, ոչ պիտի պահուրտի եւ ոչ ամենուն աչքին երեւնալու ետեւէ պիտի ըլլայ : ԶՔրիստոս կըսիրեմ

ըսելն ու քրիստոնեայ ըսուելու ամբջնա-
լը՝ թէ որ մեծ խարդախութիւն չէ նե՛՛ ա-
մօթալի տկարութիւն մըն է: Բայց ուրիշ-
ներուն աչքը իմ վրաս դարձընեմ, անուն
հանեմ, ինքզինքս օրինակ տամ ամենուն
ըսելը քրիստոնեութեան հոգւոյն դեմ ընդ
դեմ հակառակ բան է. բարեպաշտութիւնը
առուտութի դարձընելու պէս բան մըն է:
Ամենեւին տարակոյս չկայ որ իմացածիդ
պէս թէ ուրիշներուն օգտակար խրատ մը
կրնաս ըլլալ օրինակովդ՝ պէտք է դուրս
երեւնաս: Ոչ երբեք պիտի բողոսս որ քու
առջեւդ նախատինք ընէ մեկը քրիստո-
նեական հաւատոյ. պէտք է յայտնի ըսես
թէ քրիստոնեութեան պատիւը պահելու է.
բայց քանի որ ուրիշներէն չես ստի-
պուած՝ քրիստոնեութեան վրայ խօսելէն
պիտի զգուշանաս, որպէս զի ուրիշնե-
րուն մեղանջական հեգնութիւններուն
պատճառ չըլլաս: Քրիստոնեան իր խօ-
սակցութեանն ու վարմունքին մեջ այն-
պիսի ծանրութիւն մը՝ ազնուութիւն մը
պիտի ունենայ որ ոչ անխոհեմութիւն
երեւնայ վրան եւ ոչ տկարութիւն:

Աստուածպաշտութեան դարձող մարդը
 քե որ կուզէ իրացընէ ուրիշներուն ի-
 մացընէ իր վրայ եղած գեղեցիկ փոփո-
 խութիւնը, մէկ հատիկ ընելիքն է՝ իր
 բնաւորութիւնը շտկել ու սիրտը մաքրել:
 Իր անձնասիրութիւնը կը դաշէր ուրիշի
 անձնասիրութեանը. քող զգուշաւոր ու
 համեստ ըլլայ: Ուրիշները դժուարան
 կըմօտենային իրեն. քող քաղցր ու սի-
 րելի ըլլայ: Ատեն ատեն սաստիկ կըսրը-
 դողէր. քող հեզ ու հանդարտ ըլլայ: Իր
 զուարճութեանցը համար չափազանց
 ծախքեր կընէր. քող աւելի ստակ տայ ո-
 ղորմութեան գործքերուն: Մէկ խօսքով,
 քող իր պակասութեանցը տեղ՝ անոնց
 հակառակ աղեկութիւններ ցուցընէ: Այն
 ատեն ամեն մարդ այսպիսի փոփոխու-
 թեան վրայ կըզարմանայ, պատճառը
 կըքննէ՝ կիմանայ, եւ կամ քեզի կըհարցը-
 նէ կըտեղեկանայ: Չեմ կարծեր որ այն
 ատեն ծաղրածութիւն մը լսուի. հապա
 այն խորհրդածութիւններն որ բնական
 կերպով մը կըլլուին՝ քէ քու հաւատքիդ
 եւ քէ քեզի պատիւ կըբերեն:

Քրիստոնէութեան լուսովը նոր լուսաւորուած մարդը պետք է ներողամիտ երեւնայ՝ մանաւանդ այն անձանց որ ինքն այլ անոնց պէս կը մտածէր ատենով: Մեծ յոյս պիտի ունենայ անոնց այդ դարձի գալուն. վասն զի քե որ ինքը անոնց մոլորութիւններն ունեցեր է, ինչո՞ւ համար անոնք այլ օր մը իրեն լուսաւորութիւնը պիտի ջունենան: Ուրիշներուն սիրտը սուրբ հաւատոյ բաներուն սիրովը վառելու համար՝ աղէկ նայի որ մեկ ծայրէն մեկալը ջանցնի. անհաւանութենէն ջանցնի սուտ ու ապուշ ջերմեռանդութեան որ աստուածպաշտութիւնը տրտում տխուր բան մը կերեցընէ ու վրան պժգալի քող մը կը ձգէ: Թող միշտ աշակերտ ըլլայ այն Աստուծոյն որ ըսաւ. « Դու յորժամ պահիցես, Օճ գգուիս քո: »

Թէ որ քրիստոնէութեան դարձողը մեղանջական կամ վտանգաւոր կապակցութիւններ ունի, քող ժամ մը առաջ այն կապերը քակէ. իսկ քե որ այնպիսի յարաբերութիւններ ունի որ իր ընտրած վիճակին հետ քիչ կը յարմարին, բայց

հարկադրեալ է քերեամիտ մարդկանց
 ընկերութեանը մեջ քիչ շատ մնալու՝
 աւելի նեղութիւն քաշելով անոնցմէ քան
 թէ վնաս եւ վտանգ, եւ չեմ յորդորեր
 զինքն որ մեկէն ի մեկ բողոք հեռանայ:
 Իրաւ է որ երջանկութիւնը հեռու է այն-
 պիսի ընկերութիւններէն, հապա այն
 ազգատոհմին մեջ է որ քանի մը բարե-
 բարոյ եւ բարեկիրք բարեկամներով գոն
 կրլլայ. եւ այս ճշմարտութիւնը այնպէս
 պարզ՝ եւ այնչափ անգամ փորձուած է
 որ սոսկ փիլիսոփայութեամբ ալ կրնայ
 մարդս հասկընալ՝ թէ որ քիչ մը մտմտալ
 ուզէ: Բայց չեմ ուզեր որ մեկը որիշներուն
 հետ յանկարծակի աւրուելովը, որ ի հար-
 կէ ծանր կուգայ անոնց, պատճառ ըլլայ
 ըսուելու թէ յանցանքը աստուածպաշտու-
 րիւնն է, որ իրեն հետեւողները մարդա-
 տեաց եւ ընկերութեան թշնամի կրդարձը-
 նէ: Այս մեկ մեղադրութիւն մըն է որ
 հիմնովին սուտ է. քրիստոնէին պէս ըն-
 կերական մարդ չկրնար ըլլալ, վասն զի
 ամենէն աւելի անիկայ է քիչ բանով գոն
 եղողն ու ամենուն հասնողը:

Այն գուարձութիւնները , այն գրօսանքներն որ ուղիղ բարոյականը թող կուտայ ունենայ՝ թող քրիստոնեութեան դարձողն ալ ունենայ ու վայելէ : Կուգեմ որ իր տանը մեջ ընտանեկան հանդեսներ՝ ուրախութիւններ ըլլան . կուգեմ որ բանաստեղծութեան եւ գեղարուեստից գեղեցկութիւններն հասկընայ ու զմայլի : Քրիստոնէին պարտքն է անբերի մարդ ըլլալ , եւ իր կրօնը կապապրէ իրեն ու կրսէ . « Ամենայն սիրելի բանին վրայ սէր ունեցիր : »

Կրփափաքիմ որ այնպիսի անձը բարեբաղաշտական կրթութիւնը չափէ դուրս չշատցընէ իր վրայ . ապա քե ոչ , շատ մարդիկ որ իր օրինակովը քրիստոնեութեան կրնար մօտեցընել՝ կրհեռացընէ անկեց : Այս ալ կայ որ այն ժողովրդոց մեջ՝ ուր որ ճարտարութիւնը արուեստները շուտ շուտ առաջ երբայու վրայ են՝ խիստ շատ աստուածպաշտութեան կրթութիւններ պիտի չպահանջուին . ժամանակը ջրաւեր անոնց , եւ ուրիշ հոգերը աւելի վեր կը դրուին : Սակայն ասով չեմ ուզեր

ըսել թէ ճարտարութիւնն ու անկեց ելած հարստութիւնը հարկաւ մարդուս բարեպաշտութիւնը պիտի պակսեցընեն : Յրինակի համար, սաստիկ գրադած մարդ մը առնենք, գործատէր մը որ շատ գործաւորներ կըրանեցընէ եւ մինչեւ հեռաւոր տեղերու հետ մեծ առուտուր ունի : Այս մարդը միտքը դնէ թէ իր գործաւորները մէյմէկ որք տղաք են որ նախախնամութիւնը իրեն յանձներ է' մոլութենէն ու բշուառութենէն պաշտպանելու համար . թէ որ այս իր բարեպաշտական պարտքը ինչպէս որ պետք է կատարելու մտքով' անոնց որդւոցը բան սորվեցընել տայ, եւ իր բարերար ազդեցութիւնը բոլոր իր բնակած տեղւոյն վրայ տարածէ, թէ որ իր առուտորին մէջ արդարութեան եւ հաւատարմութեան օրինակ ըլլայ, թէ որ մէկ գրադմունքէ մեկային անցնելու ատեն' շատ անգամ միտքը վերցընէ առ աղբիւրն ամենայն գօրութեան եւ ամենայն իմաստութեան, այնպիսւոյն կեանքը անդադար աղօթք մըն է, եւ ամէն վայրկեան պատիւ եւ պաշտօն մատուցած կըլլայ

աստուածային Նախախնամութեան որ
կարծես թէ իրեն գործակալ ընտրեր է
զինքը :

ԾԱ.

Թէ որ այս խորհրդածութիւններս ամե-
նեւին փրկաւետ ազդեցութիւն մը՝ օգուտ
մը չըրին քեզի, յանցանքն իմս է, եւ ոչ
թէ իմ ծառայել ու պաշտպանել ուզած
խնդրոյս : Շատ թեթեւամիտ պիտի ըլլայ
մեկն որ կարենայ կարծիք ընել թէ այս-
պիսի ընդարձակ նիւթ մը այսպէս քանի
մը երես գրուածքի մէջ ամփոփուի :
Գրքիս սկիզբէն ըսի ես թէ բան սորվեցը-
նել չէ իմ միտքս, հապա միայն փափաք
մը արթնցընել ուրիշներուն սրտին մէջ՝
ինձմէ գիտուն մարդկանցմէ բան սորվե-
լու : Որովհետեւ ես չկրցայ այս փափաքը
հաղորդել քեզի, միայն իմ վիճակս կամ
պայմանս փոխուեցաւ . ինձմէ գիտուն
մարդկանց խորհուրդ հարցընելուդ օ-
գուտները քեզի համար նոյն են : Ինձի հետ

անցուցած ու կորսընցուցած երկու երեք ժամդ իրաւունք կուտայ քեզի զիս մեղադրելու, եւ այս գրքոյկը մեկդի ձգելու. բայց ոչ թէ աստուածպաշտութիւնը մեղադրելու եւ մերժելու :

Քու նախնեացդ հաւատքը դատապարտելու չափ համարձակութիւն չունենաս՝ քանի որ գիտցածեղ շատ աւելի տեղեկութիւն չունիս : Ես չկրցայ համոզել զքեզ որ պետք եղած քննութիւնը ձեռք առնուս. բայց ամենեւին պատճառ մըն ալ չտուի քեզի որ կարենաս ինքզինքդ ազատ սեպել այնպիսի քննութենէն : Թէ որ ամենեւին ստիպողական պատճառ մըն ալ չունենար մեկը այս ծանր նիւքին ետեւէ ըլլալու, կըշորդորէի զինքն որ գոնէ բան հասկընալու կարօտութեանը համար՝ գոնէ բնական հետաքրքրութեանը համար ետեւէ ըլլայ : Քրիստոնեական հաւատքը անագին յեղափոխութիւն մը ըրած է աշխարհիս երեսը. անհամար մարդիկ արիւննին թափեր են՝ անոր ճշմարտութեանը վկայելու համար. ամենայն դարուց մեջ ճարտասան քարոզիչներ ու տաղան-

դաւոր մատենագիրներ այս ճշմարտութիւնս հոգակեր են, ուրիշներն ալ՝ տաղանդի կողմանէ նոյնպէս նշանաւոր մարդիկ՝ կատաղաբար դեմ ելեր են ասոր. ամէն տեսակ յարձակմունք եւ քշնամութիւն եղեր է ասոր վրայ, ծաղրածութենէ ու երգիծանքէ սկսած մինչեւ բռնութիւն ու անգրութիւն. եւ սակայն միշտ յաղթող գտնուեր է ամէն բանի մէջ: Խաջապաշտից կրօնը մարդկանց մէջ տեսնուած ամենէն զարմանալի տեսարանն է. եւ ես չեմ հասկընար թէ ինչպէս կրնայ մէկը փափաք չունենալ որ կենացը մէջ գոնէ մէկ անգամ նստի լաւ մը քննէ այս կրօնը:

Ըրէ այս քննութիւնը: Դեռ յոյսս չեմ կտրեր որ դուն ալ օր մը ինձի համար աղօթք պիտի ընես՝ ինչպէս որ ես հիմակուրնէ աղօթք կընեմ քեզի համար:

ՅԱՆԿ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆՅ .

Վարդասպետութիւն հա- ւատոյ	Խորհրդած. Ա եւ հետ.		1
Բարոյական.	» ԺԴ »		49
Աստուածաբանութիւն .	» ԻԹ »		99
Կենցաղօգտութիւն քրիս- տոնեութեան.	» ԼԴ »		120
Եկեղեցականք.	» ԽԴ »		143
Վերջարան.	» Ծ »		165

